



74 m. S. ee


Этическое значение языка
— З. I - бт



9. Inchi 1910.







“ԿԻՒԹԵՄՈՒՐԿ” ՄԱՏԵՆԱՅԱՐ, ԹԻՒ 2

Հեղինակ՝ ԱԼԵՔՍԱՆՏՐ ՏԻԿԻՄՈՒՐ

ԵՐԵՎԱՆԱԿԻՐՆԵՐ
ՀՐԱՑԱՆԱԿԻՐՆԵՐ

Թարգմանիչ՝ ՀՐԱՑԱՆ

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ

Ա. ՊՈԼԻՍ
Տպագր. ՄԱՆԶՈՒՄԵ

1910



Երեք Հրացանակիրուեր

ՀԵՂԻՆԱԿ ԱԼԵՔՊԱՆԴՐ ՏԵԽՄԱՆ

ԹԱՐԳՄԱՆԻՉ ՀՐ Ա Յ Ր

Ա.

Բ Օ Բ Թ Օ Ս

Փոխանակ ուղղակի տուն գառնալու, Տ'Արդան-
եան գնաց Մ, աը Դոէվիլի ապարանքը և սահնգուղէն
ելաւ արագ արագ: Այս անգամ միտքը զրած էր ան-
ցած զարձածը պատմել անոր: Անչուչա անիկա լու
խորհուրդներ պիտի տար իրեն այս զործին մէջ: Յե-
տոյ որովհետեւ Մ, աը Դոէվիլ զբեթէ ամէն օր կը
տեսնէր թագուհին, կրնար թերեւս Ն. Վեհափառու-
թենէն տեղեկութիւն առնել խեղճ կիոջ մասին, որուն
իր տիրուհին հանդէպ ահճնուիրութիւնը տուժել
կուտային անչուչո:

Մ. աը Դոէվիլ երիտասարդին պատմութիւնը մտիկ
ըրաւ այնպիսի ծանրութիւնով մը որ կ'ապացուցանէր
թէ սիրային էնգրիկէ տարբեր բան մը կը տեսնէր
այս արկածին մէջ: Յետոյ, երբ տ'Արդանեան աւար-
տեց:

— Հըմ, այս ամէնը մէկ մզոն հեռուէն կը ցայց-
նեն թէ ն. Բարձրութեան մատը կայ բառ:

— Բայց ի՞նչ ընելու է, հարցուց տ'Արդանեան։
— Այս ժամուն ուրիշ բան չէք կը լուսար ընել,
բայց ևթէ, ինչպէս ըստի, Բարիզէն հեռանալ կարելի
եղածին չափ շուտով։ Ես թագուհին պիտի տեսնեմ և
մանրամասնօրէն պիտի պատմեմ այդ խեղճ կնոջ ան-
հետացումը, զոր չպիտեր անշուշ։ Այս մանրամաս-
նութիւնները զինքը պիտի առաջնորդեն և ձեր դար-
ձին՝ թերեւս բարի լուր մը ունենամ ձեզի հաղորդե-
րու։ Այս գործը ինձի յանձնեցէք։

Տ'Արդանեան զիտէր թէ Մ. որ Դոէվիլ թէւ
Կատրօն, սովորութիւն չունէր խոստում ընկլու և երբ
զիտուածով խոստում մը տար, խոստացածէն աւելին
կ'ընէր։ Հետեւարար տ'Արդանեան, անցեալին ու ա-
պագային համար երախտագիտութեամբ լցուած, ողջու-
նեց Մ. որ Դոէվիլը։ Արժանընտիր հարիւրագետը, որ
ինք ու մեծ հոգածութիւն ցոյց կուտար այս քոջա-
միրա ու հաստատամբ երիտասարդին համար, զորու-
վանքով սեղմեց անոր ձեռքը և բարի ձամբորդութիւն
մազթեց։

Որոշած ըլլալով Մ. որ Դոէվիլի խորհուրդները
անմիջապէս զործագրել, ա'Արդանեան ուղղուեցաւ
դէմի Ֆօսուարէօր փողոց։ Տունին մօ եցած առեն,
ձանցաւ Մ. Պօնասիէօն, որ առտուան զգեստով կե-
ցած էր զրան սեմին վրայ։ Այն առեն տ'Արդանեանի
միաքը եկաւ ինչ որ առջի իրիկուն խոնեմ Բլոնչէ ը-
սած էր իր տանտիրոջ չարագուշակ նկարագիրին վրայ։
Երիտասարդ զը աւելի ուշագրութեամբ նացաւ անոր
երեսը։ Արդարեւ, բայց ի այն զեղնորակ ու հիւանդա-
զին ամգունութիւնէն, որ մաղձին արեան մէջ իրաւ-
նուիլը կը ցուցի և որ կընայ պատահական ըլլալ,
ա'Արդանեան անոր դէմքին խորշոներուն մէջ նեհա-
գամիտ կեղծաւորութիւն մը զիտեց։ Խարեբայ որ
պարկեցաւ մարդու մը ձեւովք չի խնդար։ Կեղծաւոր մը

չի թափեր նո՛յն այն արցունքները, զոր բարեմիա
մարդ մը կը թափէ։ Ամէն կէղծիք դիմակ մըն է և
դիմակը ո՛րքան ալ լաւ շինուած ըլլալ, մարդ միշտ,
քիչ մը ուշադրութիւնով, կը յաջողի բուն զէմքէն
զանազանել զան։

Ուստի տ'Արդանեանի ահանկ եկաւ թէ Մ. Պօ-
նասիէօ զիմակ մը կը կրէր ու նոյն խոկ այս դիմակը
ամէնէն անախորժներէն էր։

Հետեւարար, այս մարդուն հանդէպ իր զգացած
զգուանքէն յաղթահարուելով, անոր առջեւէն պիտի
անցնէր առանց հետը խօսելու, երբ Մ. Պօնասիէօ,
առջի օրուան պէս, հարցում ուղղեց իրեն։

— Ե՛, երիտասարդ, ըստու անոր, կ'երեւայ թէ
զիւելները հեշտ կեանք կ'անցընէք։ Առուան ժամը
7 է։ Տուն կը դառնաք այն ժամուն երբ ուրիշները
դուրս կ'ելլեն։

— Այս յանդիմանութիւնը ձեզի չենք կընար ուղ-
ղել, Տիար Պօնասիէօ, ըստու երիտասարդը։ Դուք կար-
գապան մարդոց տիպարն էք։ Իրաւ է որ երբ մարդ
զեռատի և սիրուն կին մը ունի, երջանկութեան և-
տեւէն վազելու պէտք չզգար։ Երջանկութիւնն է որ
կազայ կը դանէ ձեզ անպէս չէ՞ Մ. Պօնասիէօ։

Պօնասիէօ մեռելի պէս ամգունեցաւ և մոլիս մը
կեղծեց։

— Ա՛ն, ա՛ն, ըստու, զուք զուարձալի ընկեր մըն
էք։ Բայց այս զիշեր ո՞ւր անզուանքն էիք։ Կ'երեաց
թէ կոզմիակի փողոցները մաքուր չէին։

Տ'Արդանեան նայեցաւ կօշիկներուն, որոնք ցե-
խերու մէջ թաթխուած էին։ Բայց այս շարժումին
մէջ, իր ակնարկը հանդիպեցաւ նաև վերեկակինց
կօշիկներուն և զուլպաներուն։ Կարծես թէ սիւնոյն-
ցեին մէջ թաթխած էին զանոնք։ Երկուքն ալ բա-
ցարձակառէս միենոյն ըլծերը կը կրէին։

Այն առեն, բանկարծական գաղափարը մը տնցաւ ա'Արդանեանի մաքէն։ Այն զէր կարճ, ալեհեր մարդուկը մութ գոյն զգեստ հաղած և ուղեկից զօրաւ կահներու կողմէ յարգանքի չարժանացած այն տեսակ մը սպասաւորը նոյն ինքն Պօնասիէօն էր։ Ամուսինը իր կհոջ առեւանգումին տառչնորդած էր։

Տ'Արդանեանի վրայ սոսկալի փափաք մը եկաւ փերկազակին կրկորդը բանել ու խեղդիլ զայն։ Բայց, ինչպէս ըստնք, շատ խոհեմ տղայ մըն էր և ինք զի՞ւքը զսպեց։ Սական իր դէմքին վրայ տեղի ունեցած այլափոխումը այնքան ակների էր որ Պօնասիէօ գարնուրեցաւ և փորձեց քարլ մը նահանջել։ Բայց ձիւս զրան գոյ փեղին առջև կը զանուեր և այս արգելքը պարտաւորեց զի՞նք մնալ միենոյն տեղը։

— Զարմանալի է, բարի մարդուկս, բռաւ ա'Արդանեան, եթէ իմ կօշիկներս մաքրուելու պէտք ունին, ձեր գուշաները և ձեր կօշիկներն ալ նոյն իննամքը կը պահանջեն, Արդեօք դո՞ւք ալ հոս հոն վաղեցիք, Տիար Պօնասիէօ։ Ա՛հ, ասանկ բան մը չի ներուիր ձեր տարիքը ունեցող մարդու մը, որ մահաւանդ ձերինին պէս զեսատի ու սիրուն կին մը ունիր։

— Օ՛հ, Աստուած իմ, ո՛չ բռաւ Պօնասիէօ։ Միայն թէ երէկ Սէն Մանաէ զացած էի տեղեկութիւն տուներու համար սպասուհիի մը վրայ, և որովհետեւ ճամբաները զէշ էին, այս բոլոր ցեխը միտոին բերի և ամակալին ժամանակ չունեցած մաքրելու։

Պօնասիէօլի ըսած տեղը ա'Արդանեանի յղացած կանկածներուն ոյժ տուող նոր ապացոյց մը եղաւ։ Պօնասիէօ Սէն Մանաէ ըսած էր վանդի Սէն Մանաէն Սէն Քլուի հակառակ կողմն էր։

Այս հաւանականութիւնը առաջին միտթարութիւն մը եղաւ իրեն։ Եթէ Պօնասիէօ իր կհոջ ո՛ւր ըլլալը

գլուխը, ծայրայեղ միջոցներ գործածելով կարելի պիտի ըլլար ստիպել փերկազակը ոյն գաղանիքը գուրս տայ։ Ինդիբը միայն սա էր որ այս հաւանականութիւնը ստուգութեան փոխուէր։

— Ներկցէք սիրելի Մ։ Պօնասիէօ, եթէ առանց ձեւակերպութեան կը խօսիմ ձեզի հետ, բաւ ա'Արդանեան։ Բայց չքնանալը շատ գէշ բան է։ Հետեւապէս սոսկալի կերպով ծարաւ ևմ։ Ներկցէք որ գաւաթ մը ջուր իմեմ ձեր սենեակին մէջ։ Ինչպէս գիտէք, զրացիներու մէջ առանկ բաներ չեն մերժուիր իրաւու։

Եւ առանց իր տանտիրոջ արտօնութեանը սպասելու, ա'Արդանեան տունէն ներս մտաւ փութով ու արագ ակնարկ մը ձգեց անկողնին վրայ։ Անկողինը աւրուած չէր գիշերը։ Հետեւապէս մէկ կամ երկու ժամէ ի վեր միայն տուն զարձած էր։ Իր կհոջ ընկերացած էր մինչեւ ուր որ տարած էին զայն, կամ գէթ մինչեւ առաջին կարանը։

— Շնորհակալ եմ, Տիար Պօնասիէօ, բռաւ ա'Արդանեան գաւաթը պարպելով, ահա աս էր ձենէ ուղածու։ Հիմա սենեակս կ'երթամ, կօշիկներս մաքրել կուտամ Բլանչէին, և երբ աւարաէ, ձեզի կը դրկեմ, եթէ կուզէք, որպէս զի ձեր կօշիկներն ալ մաքրէ։

Եւ բաժնուեցաւ փերկազակին, որ այս տարօրինակ հրաժնացին վրայ ալուած մնացած էր և կը հարցնէր իւրավի թէ արդեօք ինք իր բերնով բանուած չէ՞ր։

Աանզուղին վրայ տեսաւ Բլանչէն որ սարսափանար երեւոյթ մը ունէր։

— Ա՛հ, պարո՞ն, պոսաց Բլանչէ երբ իր տէրը նշնարեց, նոր բան կազ։ Անհամբեր կ'սպասէի ձեր զառնալուն։

— Ի՞նչ կայ, հարցուց ա'Արդանեան։

— Օ՛հ, զրաւ կը զնեմ որ չէք կրնար գուշակել

այցելութիւնը, զոր ձեր բացակայութեան ատեն ընդունեցի ձեր կողմէ :

- Ե՞րբ :
- Կէս ժամ առաջ, մինչ դուք Մ. աը Դոէվիլի քով էիք :
- Ո՞վ եկաւ : Խօսէ՛ նույնք :
- Մ. աը Քավուան :
- Մ. աը Քավուա՞ն :
- Նոյն ինքը :
- Ե. Բարձրութեան պահակներուն հարիւրապեալուր :
- Այո՛ :
- Զիս ձերբակալելո՞ւ եկած էր :
- Ես ալ այդպէս կասկածեցաց պարո՞ն, և ասիւ հակառակ իր փաղաքուշ երեւյթին :
- Փաղաքուշ երեւո՞յթ ունէր :
- Այսինքն բւրնէն մեղք կը վաղէր, պարո՞ն :
- Իրա՞ւ :
- Բասւ թէ եկած էր Ե. Բարձրութեան կողմէ, որ ձեզի բարիք կը կամենար, և պիտի խնդրէր որ Բալէ Ռուայեալ երթաք իրեն հետ :
- Ի՞նչ պատասխան տուիր :
- Բայ թէ անկարելի է, որովհետեւ տոնը չէիք գանուեր, ինչպէս ինք ալ կընար տեսնել :
- Ան ատեն ի՞նչ ըստ :
- Բասւ թէ ցորեկին անշուշա իրեն կը հանդիպիք : Յետոյ ցած ձայնով աւելցուց «Բաէ՛ աիրոջ որ Ե. Բարձրութիւնը շատ լաւ արամադրութիւններ ունի իր մասին և թէ իր բախտը կախում ունի թեւրեւս այս տեսակցութիւննէն» :
- Թակարդը բաւական ձախաւեր է կարտինալին պէս մէկու մը համար, աւելցուց երխասարդը ժպանուլ:

— Աւստի ես ալ տեսոյ թակարդը և պատասխանեցի թէ ձեր դարձին՝ շատ ցաւ պիտի զգայիք :

- Ա՞ւր գացած է, հարցուց Մ. աը Քավուա :
- Ծանրաների Դուռա քաղաքը, պատասխանեցի :
- Ե՞րբ գնաց :
- Երէկ իրիկուն :
- Բլա՛նչէ, բարեկամու, ընդմիջեց տ'Արդանան, ստուգիւ թանկագին մարդ մըն ես դուն :
- Միաքս կը հասկնաք, պարո՞ն, խորհեցայ որ եթէ կը փափաքիք Մ. աը Քավուան տեսնել միշտ ժամանակ պիտի ունենաք զիս հերքելու, ըսելով թէ մեկնած չէիք : Այս պարագային մէջ ես սուստ խոսած պիտի ըլլամ և որովհետեւ աղնուական չեմ, կրնամ սուստ խօսիլ :
- Սնհոգ եղիքը, Բլա՛նչէ, ճիշտ խօսող մարդու համբաւդ պիտի պահես : Քառորդէ մը կը մեկնինք :
- Ես ալ այս խորհուրդը պիտի աայի ձեզի : Եթէ չտփազանց հնատաքքբռութիւն չըլլար հարցնելու, կը հաճի՞ք ըսել թէ ո՛ւր պիտի երթանք :
- Հակառակ կողմը այն տեղին, ուր ըսիր թէ գացած, եմ : Եւ յետոյ, կրիմոյի, Մուսքոնի և Պազէնի մասին լուր առնելու այնքան փողթ չունի՞ս որքան ես ունիմ գիտնալու համար թէ ի՞նչ եղան Աթոս, Յօրթօս, Արամիս :
- Աւնիմ, պարո՞ն, բաւ Բլա՛նչէ և ճամբայ կ'ելլեմ ո՛ր ատեն որ ուզէք : Կարծեմ թէ այս միջոցիս գաւառի օղը մեզի համար աւելի աղէկ է քան թէ Բաւրիզի օղը : Այսպէս ուրեմն . . .
- Այսպէս ուրեմն, մեր ծրաբը պատրաստէ՛, Բլա՛նչէ, և մեկնինք : Ես առաջ պիտի մեկնիմ, ձեռքերս զբանախս մէջ, որպէս զի կասկածող մը չըլլայ : Դուն պահակներու պաշտօնատան մէջ կուզաս կը գանես զիս : Աղէ՛կ միտքս ինկաւ, Բլա՛նչէ, կարծեմ

թէ մեր տահուիքոջ մասին ըստածներդ իրաւացի են :
Ապահովապէս՝ գարշելի սինլքոր մըն է ան :

— Ա՛ն, հաւատացէք, պարո՞ն, երբ բան մը կ'ըստ
սեմ ձեզի : Ես դիմադէտ եմ :

Ե՛ն առաջ ա՛Արդանեան մնկնեցաւ, ինչպէս որոշ-
ուած էր : Երխուասարզը, իիղձը հանգարանեցնելու հա-
մար, վերջին անգամ մըն ալ զնաց իր երեք բարե-
կանիներուն բնակարանը, ուր ո՛ և է լուր առնուած
չէր : Անուշաբոյր և վայելուչ ու մանր զիրով նամակ
մը եկած էր Արամիսի համար : Տ'Արդանեան առաւ
այդ նամակը : Տար վարկեան եաքը, Բլանչէ եկաւ
իրեն միացաւ պահակներու պաշտօնատան ախոռնե-
րուն մէջ, ուր ա՛Արդանեան ինք անձամբ պատրաս-
տած էր ձին, ժամանակ չկորսնցնելու համար :

— Աղէ՛կ, ըստու Բլանչէի, հիմա միւս երեք ձիերը
թամբէ ու մնկնինք :

— Կը կարծէ՞ք թէ աւելի արագ պիտի երթանք
եթէ ամէն մէկերնիս երկու ձի ունինանք, հարցուց
Բլանչէ իր հեղնասէր դէմքով :

— Ո՛չ, պարո՞ն անհամ կատակ ընող պատաս-
խանեց ա՛Արդանեան, բայց մեր չորս ձիերով պիտի
կը մուսնք բերել մեր երեք բարեկամները, եթէ սակայն
ողջ զանենք զանոնք :

— Ինչ որ միծ բախտ մը պիտի ըլլար, պառաւ-
խանեց Բլանչէ : Բայց վերջապէս Աստուծոյ զթութե-
նէն յուսահատելու չէ :

— Ամէ՛ն, ըստու ա՛Արդանեան ձին հեծնելով :

Եւ երկուքն ալ զուրս ելան պահակներու պաշ-
տօնատունէն ու իրարմէ հեռացան : Մէկը Վիլէթի և
մէւը Մօնմառոնի դուռնէն զուրս պիտի ելլէին և
Սէն Տընիէն անդին պիտի Ֆիանային իրարու : Այս
սալմագիտական շարժումը, կատարեալ ճշլութեամբ
զործագրուած ըլլարով, չատ բարեբախտ արդիւնք մը

տուաւ : Տ'Արդանեան և Բլանչէ միատեղ Բիէսփիդ
մասն :

Պէտք է ըսել որ Բլանչէ աւելի քաջասիրա էր
ցերեկը քան թէ զիշերը :

Սակայն իր բնական խոհեմութիւնը վայրկեան մը
իսկ չէր թողուր : Առաջին ձամբորդութեան միջաղէ-
պերը մասցած չէր և ձամբուն վրայ իրեն դէմը ելլող-
ները թշնամիի սեղ կը գնէր : Ասոր հեսեւանքը սա
կ'ըլլար որ Բլանչէ գլխարկը միշտ ձեռքը բռնած էր
և ա՛Արդանեան շարունակ և խստիւ կը կշտասրէր
զինքը, վախնալով որ այս ծայրացեղ քաղաքավարու-
թեան չնորհիւ, սանկ սչինչ մարդու մը ծառացին տեղ
կը գնեն զայն :

Սակայն, կամ ան է որ անցոբդիները Բլանչէի
այս բարեկրթենէն աղղուեցան և կամ ան է որ
այս անգամ ոչ ոք դէտ կեցած էր Երխուասարզին ձամ-
բուն վրայ, երկու ուղեւորները Շանթիլի հասան ա-
ռանց զէպքի և իջան Կրան Սէն Մարթէն պանդոկը,
ուր կանգ առած էին իրմաց առաջին ձամբորդութեան
ասեն :

Պանդոկապետը, աւոնելով Երխուասարդ մը, սրուն
հաւեէն կուգային սպասաւոր մը և երկու ձիեր, յար-
գանգով եկաւ գրան սեմին վրայ : Արդ, որովհետեւ
արդէն ատանեւմէկ մղոն սեղ քալած էր, ա՛Արդան-
եան յարմար զատեց հոն իջեւանիլ, Բօրթօսը պահ-
պակին մէջ ըլլար կամ ո՛չ : Յետոյ, թերեւս խոհեմու-
թիւն չէր մէկէն ի մէկ սեղեկութիւն ուզել թէ ի՞նչ
եղած էր հրացանակիրը : Այս խորհրդածութիւններուն
հետեւանքը սա եղաւ որ ա՛Արդանեան, առանց ո՛ և է
մէկուն վրայ լուր ուզելու, վար իջաւ, ձիերը սպա-
սաւորին յանձնեց, առանձին մնալ փափաքողներուն
յատկացած պղտիկ սենեակը մտաւ, և պանդոկապետէն
ուզեց իր ամէնէն ընափի զինիէն չիչ մը և կարելի

և ածին չափ լաւ հախածաշ մը : Այս ինդրանքը զօրացուց պանդոկապեաբն կարծիքը, զոր առաջին տեսաւթեամբ կազմած էր ուղեւորին վրայ :

Ուստի հրաշալի կերպով արագ սպասարկութիւն մը եղաւ ա՛Արդանեանին :

Պահակներու գօրագունդին մարդիկը կառնուէին ֆրանտի առաջին ազնուականներուն մէջն և ա՛Արդանեան, սպասաւորի մը և չորս հիանալի ձիերու հետ ձամբորգիլով, անշուշտ իրարանցում պիտի պատճառէիր, հակառակ իր պարզ համազգեստին : Պահակառար ուղեց ինք անձամբ ծառայել : Ասիկա տեսնելով, ա՛Արդանեան երկու գաւաթ բերել տուաւ և հետեւեալ խօսակցութիւնը բացաւ :

— Իրաւ որ, սիրելի պանդոկապե՛տ, ըստ ա՛Արդանեան երկու դաւաթները լեցնելով, ձեր ամենէն աղէկ գինիէն ուղեցի ու եթէ զիս խարեցիք, ձեր մեղքովը պիտի պատժուիք, որովհետեւ ես տոանձին խմէլ չեմ սիրեր և դուք ալ ինձի հետ պիտի խմէք : Ասէ՛ք ուղեմն սա գաւաթը և խմննք : Ի՞նչ բանի խմենք, որպէս զի ո՛ւ եէ դիւրազգածութիւն չվիրաւուքնք : Ձեր պանդոկին յաջողութեանը խմենք :

— Ձեր Վսեմութիւնը պատիւ կ'ընէ ինձի յ բաւ պանդոկապեար և անկեղծ չնորհակալութիւնս կը յայտնեմ իր մաղթանքին համար :

— Բայց չխարսուիք, ըստ ա՛Արդանեան, թերեւս ձեր կարծածէն աւելի եսասիրութիւն կայ իմ բաժանկածուիս մէջ : Մարդ միայն յաջող պանդոկներու մէջ չեւ կ'ընդունուի : Իսկ անյաջող պանդոկներու մէջ ամէն բան տակնուավրաց կ'ըլլաց և ճամբորգը իր պանդակապեաբն չփսթութիւններուն կը զոհուի : Արդ ես որ շատ կը ճամբորգեմ, մանաւանդ այս զիժին վրայ, եկուզեմ որ բոլոր պանդոկապեանները հարաստանան :

— Արդարեւ ինձի կուգայ թէ, ըստ պանդոկա-

պեաը, առաջին անդամը չէ որ ձեզ տեսնելու պատիւը կ'ունենամ :

— Բէ՛ն, թերեւս տասն անգամ անցած եմ Շանթիցիէն և տասն անգամին վրայ առ նուազն երեք չորս անգամ հոս իջած եմ : Տակաւին հազիւ 10—12 օր առաջ հոս էի : Կ'առաջնորդէի բարեկամներու, հրացանակիրներու : Ապացոյցը սա է որ անոնցմէ մէկը վէճի բռնոււցաւ օտարականի մը հետ, —անձանոթ մը, որ չեմ զիտեր ի՞նչ բանի համար կոխւ ըրաւ :

— Ա՛ն, այս՝ ձի՛շտ է, ըստ պանդոկապեարը : Կասարելսպէս կը լիշեմ : Ձեր Վսեմութիւնը Մ. Յօրթուին ակնարկել չո՞ւզեր :

— Ձիշտ ադ է իմ ուղեկիցիս անունը : Կ'աղաչեմ, ըսէ՛ք, սիրելի պանդոկապե՛տս, դժբախտութիւն մը եկած անոր զիտուն :

— Բայց ձեր Վսեմութիւնը անշուշտ զիտեց որ Մ. Յօրթու չկրցաւ իր ճամբան շաբունակել :

— Արդարեւ մեզի խստացած էր գալ միանալ, բայց մենք այլ ես չտեսանք անոր երեսը :

— Հոս մնալու պատիւը ըրաւ մեզի :

— Ի՞նչպէս, հոս մնալու պատիւը ըրաւ ձեղի :

— Այս՝ պարս'ն, այս պանդոկին մէջ : Նոյն իսկ շատ մտահոգ ենք :

— Ի՞նչ բանի համար :

— Իր ըրած կարդ մը ծախքերուն համար :

— Ետ՛ւ, եթէ ծախք ըրաւ, պիտի վճարէ :

— Ա՛ն, պարս'ն, կ'սփոփէք զիս : Շատ ծախքեր ըրինք և տակաւին այսօր վիրաբոյժը յացտարեց մեզի որ եթէ Ա. Յօրթու շվարէ, ինձմէ պիտի առնէ դրամնիրը, որովհետեւ ես լուր զրկած էի իրեն որ գայ :

— Բայց Յօրթու վիրաբոյժ է ուղեմն :

— Ձեմ կընար ըսել, պարս'ն :

— Ի՞նչպէս, չէ՞ք կրնար: Սակայն ամէնէն աւելի դուք գիտնալու էիք:

— Այո՛, բայց մեր վիճակին մէջ, մեր բոլոր գիտցածը չենք ըսեր, պարո՞ն, մանաւանդ երբ իմացուցած են մեզ որ մեր ականջները պիտի փրցնեն եթէ բան մը բանք:

— Լա՛ւ, Բօրթօնը կրնա՞մ տեսնել:

— Անշո՞ւշտ, պարո՞ն, սանդուղէն ելէք առաջին յարկը և թիւ և սենեակին գուռը զարկէք: Միայն թէ առաջուընէ իմացուցէք որ դուք էք:

— Ի՞նչպէս, առաջուընէ իմացնե՞մ:

— Այո՛, վասն զի կրնայ փորձանք մը պատահիւ ձեզի:

— Ի՞նչ փորձանք:

— Մ. Բօրթօն կրնայ պանդոկին, մարդիկներէն մէկը կարծել ձեզ և բարկութեան շարժումի մը մէջ սուրը ձեր մարմնին մէջ միսել կամ ձեր ուղեղը պար թեցնել:

— Ի՞նչ ըրեր էք ուրեմն իրեն:

— Ստակ ուղեցինք իրմէ:

— Ա՛ն, չա՛ր սատանայ, կը հասկնամ: Ատիկա այնպիսի պահանջում մըն է, զոր Բօրթօն չատ գէշ կերպով կ'ընդունի երբ դրամ չունենայ: Բայց գիտեմ թէ ունի:

— Մենք ալ սատանիկ կարծեցինք, պարո՞ն: Եւ որովհետեւ պանդոկին գործառնութիւնները կանոնաւոր են և ամէն շարթու մեր հաշխւները կը կարգադրենք, ութ օր հաքը մեր հաշուեցոյցը ներկայացուցինք իրեն, բայց կ'երեւայ թէ գէշ վարդիեան մը ընտրած էինք, վասն զի հազիւ թէ ստաջին բառը արտասանեցինք, ծանր խօսքեր ըրաւ մեզի: Իրաւ է որ առջի օրը խաղացած էր:

— Ի՞նչպէս, առջի օրը խաղացա՞ծ էր: Որո՞ւ հետ:

— Օ՛հ, Աստուած իմ, ո՛վ զիտէ, ուղեւորի մը հետ, որուն առաջարկած էր բարքի մը թուղթ խաղալ:

— Կեղծը ամէն բան վրայ տուած պիտի ըլլայ:

— Մինչեւ իր ձին, պարո՞ն, վասն զի երբ օտարականը կը մեկնէր, զիտեցինք որ սպասաւորը Մ. Բօրթօնի ձին կը թամբէր: Դիտողութիւն ըրինք, բայց պատախանեց մեզի թէ մեր խառնուելիք գործը չէր և թէ այն ձին իրէ էր: Անցած գարձածը իսկոյն իմաց տուինք Մ. Բօրթօնի, որ ըսաւ թէ մենք ստորին արարածներ ենք աղնուականի մը խօսքին վրայ տարակուած ըլլալնուու համար և թէ քանի որ այն աղնուականը ըստ էր թէ ձին իրեն կը պատկանէր, պէտք էր որ այնպէս եղած ըլլար:

— Բօրթօնին բնաւորութիւնը ասանկ է, զիտեմ, մըսուաց ա՛Արդանեան:

— Այն ատեն, չարունակեց պանդոկապետը, սպատասահն զբկեցի իրեն թէ քանի որ վճարման մասին իրարու հետ պիտի չկրնայինք համաձայնիւ կը յուսացի թէ զէթ չնորի պիտի ընէր իր բնակութիւնը փոխազրել էկը ա՛Յու պանդոկը: Բայց Մ. Բօրթօն պատասխանեց թէ իմ պանդոկս աւելի աղէկ ըլլալով, կը փափաքէր հոս մնալ: Այս պատասխանը շատ փաղաքչական էր, ամնպէս որ չկրցայ իր մեկնումին վրայ պնդել: Միայն խնդրեցի իրմէ որ ելլէ իր սենեակէն, որ պանդոկին ամէնէն գեղեցիկն է, և երբորդ յարկը գտնուած պղտիկ սիրուն սենեակով մը գոհանայ: Բայց Մ. Բօրթօն ասոր ալ պատասխանեց թէ որովհետեւ վայրկեանէ վայրկեան կ'սպառէր իր սիրուհիին, որ արքունիքին ամէնէն բարձրաստիճան տիկիններէն մէկն էր, պէտք է հասկնայի թէ իր բնակած սենեակը սակաւին շատ միջակ էր այնպիսի անձի մը համար: Սակայն, ընդունելով հանդերձ որ իր ըստ ճշատ էր,

կարձեցի թէ իրաւունք ունիմ պնդելու։ Բայց նոյն խև առանց ինծի հետ վիճաբանութեան մանելու, ատրճանակը առաւ, սեղանին վրայ դրաւ և յաջարարեց թէ ներքին կամ արտաքին տեղափոխութեան մը մասին եղած առաջին խօսքին վրայ, ուզեղը պիտի պայթեցնէր անոր որ միմիայն իրեն վերաբերած բանի մը խառնուելու անխոհեմութիւնը պիտի գործէր։ Աւտու, այդ ժամանակին ի վեր, պարո՞ն, ո՞չ ոք ալեւս իր սենեակը չի մտներ, իր ծառայէն զատ։

— Մուսքո՞նը հո՞ս է ուրիմ։

— Այս' պարո՞ն։ Իր մեկնումէն հինգ օր ետքը դարձաւ խխտ սրանեղ վիճակի մէջ։ Կ'երեաց թէ ինք ալ իր ձամբարզութեան մէջ անհանոյ դէսքերու ենաթարկուած էր։ Դժբախտաբար իթ տիրոջմէն աւելի խօսք չհակցող մէկն է։ Իր տիրոջը համար ամէն բան առաջնուվրայ կ'ընէ։ Եւ որովհետեւ կը խորհի թէ կարելի է որ իր ուզածը չտան իրեն, պէտք ունեցածը ինք իր ձեռքով կ'առնէ առանց ուզելու։

— Իրողութիւնը սա է որ, պատասխանեց ա'Արշանեան, ևս միշտ գերազանց ոչխմութիւն մը և անձնուիրութիւն մը տեսած եմ Մուսքո՞նին վրայ։

— Կարելի է, պա՛րոն, բայց եթէ ևս տարին չորս ա՛նգամ միայն չփաման մէջ գոնուիմ այդպիսի ուշ շիմութեան ու անձնուիրութեան հետ, կործանած օրս է։

— Ո՞չ վասնդի Բօրթօս պիտի վճարէ ձեզի։

— Հը՞մ, ըրաւ պանդոկապեաց ատրակուսող շեշտով մը։

— Բօրթօս սիրականն է բարձրաստիձան տիկնոջ մը, որ ձեզի պարական եղած ոչինչ՝ դումարի մը համար նեղութեան մէջ չի ձգեր զայն։

— Եթէ համարձակիմ ըսել ինչ որ կը կարծեմ այդ մասին . . .

— Ինչ որ կը կարծէ՞ք։

— Աւելին պիտի ըսեմ, — ինչ որ գիտեմ։

— Ինչ որ գիտէ՞ք։

— Եւ նոյն խև պիտի ըսեմ թէ ապահով եմ։

— Ի՞նչ բանի ապահով էք նայինք։

— Պիտի ըսեմ թէ այդ բարձրաստիձան տիկինը

կը ճանչնամ։

— Դո՞ւք։

— Այս', ես։

— Ի՞նչպէս կը ճանչնաք։

— Օ՛հ, պարո՞ն, եթէ պիտնայի թէ կրնամ վըստահիլ ձեր գաղանապահութեան . . .

— Խօսեցէ՞ք և ազնուականի խօսքս վկայ, պիտի չզղջաք ձեր վստահութեանը համար։

— Լա՛ւ ուրեմն, պարո՞ն, կ'ըմբռնէք թէ մտահոգութիւնը շատ բանել ընել կուտայ։

— Ի՞նչ ըրիք։

— Օ՛հ, արդէն մեր ըրածը պահանջատէրի մը իրաւունքին դուրս բան չէր։

— Վերջապէս ի՞նչ ըրիք։

— Մ. Բօրթօս նամակ մը յանձնեց մեզի այդ դրսուհին համար, պատուիրելով որ թղթաւուն տանինք։ Ծաւան տակաւին եկած չէր։ Եւ որովհետեւ ինք չէր կրնար սենեակին դուրս ելլեւ պէտք էր որ իր յանձնարարութիւնները մեզի ընէր։

— Ե՞սաքը։

— Փոխանակ նամակը թղթատուն յանձնելու, քանի որ վստահ չէինք թէ հասցէին պիտի տարուէր, սպասաւորներէս մէկուն Բարիզ երթալէն օգուտ քաղելով հրամացեցի որ նամակը անձամբ տանի յանձնէ այդ դրսուհին։ Սաով ծառացութիւն մը մտացած եղանք Մ. Բօրթօսի, որ մեզի յանձնարարած էր անսպասառ հասցէին զրկել այդ նամակը։ Ծառացութիւն չմատուցի՞նք, պարո՞ն։

— Գրէթէ :
 — Ե'ուրեմն, պարո՞ն, գիտէ՞ք թէ ո՞վ է այդ
բարձրաստիճան Տիկինը :
 — Ո՞չ, Բօրթօսին խօսիլը լսած եմ, այսչափ :
 — Գիտէ՞ք թէ ո՞վ է առդ կարծեցեալ գքառնին :
 — Կը կրկնեմ թէ չեմ ճանչնար :
 — Շաղրլէի մէջ դատախազի պառաւ կին մըն է,
պարո՞ն, Տիկին Քօքընառ անունով : Առնուազն յի-
սուն տարու կայ և նախանձու ըլլալու երեւթներ
ունի տակաւին : Շատ տարօրինակ կ'երեայ ինձի իշ-
խանուհի մը, որ Օ զ'Ուտ փողոցը կը բնակի :
 — Ինչէ՞ն գիտէք :
 — Վասնզի սաստիկ բարկացաւ նամակը առնե-
լուն վրայ և լսաւ թէ Մ. Բօրթօս փոփոխամիտ մէկն
է և թէ կնոջ մը համար է որ ստացած է սուրի այդ
հարուածը :
 — Բայց սուրի հարուած մը ստացաւ ուրեմն :
 — Ա՛ն, Ասուած իմ, ի՞նչ ըսի :
 — Բոիք թէ Բօրթօս սուրի հարուած մը ստա-
ցած էր :
 — Այս', բայց ինձի բացարձակապէս արգելած
էր ըսել :
 — Ի՞նչո՞ւ :
 — Վասնզի, պարո՞ն, պարձենցած էր թէ ինքը
պիտի անիծէր այն օտարականին, որուն հետ վիճա-
քանութեան մէջ թողած էիք զայն, և թէ, ընդհա-
կառակը, այդ օտարականն էր որ Մ. Բօրթօսը գետին
պատկեցուցած էր, հակառակ անոր մեծ խօսիկութիւն-
ներուն : Արդ, որովհետեւ Մ. Բօրթօս շատ փառասէր
մարդ մըն է, չուզեր մարդու խոստովանիլ որ սուրի
հարուած մը ստացած է : Բացառութիւն ըրաւ գքառւ-
հին հանգէալ, զոր կարծած էր հետաքրքրել իր ար-
կածին պատմութիւնը ընելով անոր :

— Բուլ է որ սուրի հարուած մը ստացած ըլլա-
լուն համար անկողին պառկած է :
 — Եւ սուրի աղւոր հարուած մը, ապահով եղիք :
 Զեր բարեկամին հոգին իր մարմնոցն կառչած պիտի
ըլլայ որ բան մը չեղաւ :
 — Դուք ներկա՞յ էիք մենամարտին :
 — Պարո՞ն, հետաքրքրութեան համար հետեւեցած
անոնց, անպէս որ ես կուրել սեայ, բայց կռւող-
ները զիս չտեսան :
 — Ի՞նչպէս եղաւ :
 — Օ՞հ, շատ երկար չտեւեց : Կուրի պատրաս-
տուեցան : Օտարականը անակնկալ հարուած մը տուաւ
և աջ սրունքը կարկառեց և այս ամէնը՝ այնքան
արագութեամբ որ երբ Մ. Բօրթօս յաջողեցաւ խու-
սափիլ արգէն սուրին ծայրը կուրծքը մտած էր երեք
բթաչափ : Կոնակի վրայ ինկաւ : Օտարականը իր սու-
րին ծայրը խլոյն անոր կոկորդին վրայ զբաւ և Մ.
Բօրթօս, տեսնելով որ իր հակառակորդին իշխանու-
թեան տակն է, պարտութիւն խոստովանեցաւ : Ասոր
վրայ, օտարականը անունը հաբցուց և իմանալով որ
Բօրթօս կը կոչուէր և ոչ ա'Արդանեան, թեր տուաւ
անոր, պանզոկ բերաւ, ձի նստաւ և անյայտ եղաւ :
 — Բուլ է որ այդ օտարականը ա'Արգանեանը
կ'ուզէր :
 — Կ'երեայ թէ այս' :
 — Գիտէ՞ք թէ ի՞նչ եղաւ :
 — Ոչ, մինչեւ այն պտեն և եսած չէի զայն և
անկէ ի վեր ալ չտեսայ :
 — Շատ աղէկ, զիտեմ ինչ որ կ'ուզէի զիտնաւ :
 Հիմա, ըսիք թէ Բօրթօսի սենեակը առաջին յարկը,
և թիւն է :
 — Այս', պարո՞ն, պահողոկին ամէնէն գեղեցիկ

սենեակը, զոր տասն անգամ առիթ ունեցած պիտի
ըլլաքի վարձու տալու :

— Ի՞նչ, հանդարտեցէք, ըստ ա'Արդանեան,
Բօրթօս դքառհի Քօքընառի դրամովը պիտի վճարէ
ձեզ :

— Ո՞ն, պարո՞ն, դատախազի կին կամ դքառհի,
հոգ չէր եթէ քաղին բերանը բանար : Բայց բացար-
ձակապէս պատախանեց թէ ա' ձանձրացած է լի .
Բօրթօսի պահանջումներէն և անհաւատարիմ ընթաց-
քէն և մէկ փարա իսկ պիտի չդրիէ :

— Այս պատախանը հաղորդեցի՞ք ձեր վարձա-
կալին :

— Զգուշացա՞ք: Պիտի հասկնար թէ ի՞նչ կեր-
պով կատարած էինք իր յանձնաբարութիւնը :

— Հաեւ է որ դրամի՞ կ'սպասէ տակաւին :

— Ե՞ն, Ասուած իմ, այո՛: Երէկ ու նամակ
պրեց, բայց այս անգամ իր ծառան էր որ նամակը
թղթատուն տարաւ :

— Բաիք թէ դատախազին կինը պառաւու ու տպեղ
է, այնպէս չէ՞ :

— Առնուազն յիսուն տարու կայ պարո՞ն, և
ամենեւին գեղեցիկ չէ, Բաթոյի ըսածին նորմելով :

— Այդ պարագային մէջ, անհոգ եղիք, ոիրաը
պիտի կակուղնայ: Եւ յետոյ Բօրթօս մնա ըստ մը
պարտական ըլլալու չէ ձեզի:

— Ի՞նչպէս, մնա ըստ պարտական չէ կ'ըսէք,
Արդէն քսան ոսկիի չափ պարտք ունի, առանց հաշ-
ուելու բժիշկը: Օ՞ն, ըստէ մը չի զրիեր ի՞նքինիքը,
կ'երեւայ թէ լաւ ապրելու վարժուած է :

— Ե՛ս ուրեմն, եթէ իր սիրուհին լքանէ զինք,
անիկա բարեկամներ պիտի գտնէ, կ'ապահովեմ ձեզ:
Աւստի, սիրելի պահպակապետ, հոգ մի՛ ընէք և շու-

րունակեցէք ամէն խնամք տանիլ, իր վիճակին պա-
հանջումին համաձան :

— Խստացաք դատախազին կնոջ վրայ չխօսիլ և
վէրքին համար բան մը չըսել:

— Որոշուած է ատիկա, խօսք տուած եմ:

— Օ՞ն, ետքը կ'սպանէ զիս, գիտէ՞ք :

— Մի՛ վախնաք, այնքան չար չէ որչափ կ'եւ-
րեւայ:

Այս խօսքերը ըսկլով, ա'Արդանեան սանդուղէն
ելաւ, պանդոկապեար քիչ մը աւելի ապահովուած.
թողով այն երկու բաներուն մասին, սրոնց չատ. հոգ
տանիլ կը թուէր, — որահանջքը և կեանքը :

Սանդուղին գլուխը, նրբանցքին ամէնէն աչքա-
ռու զրան վրաց սեւ մերանով գծուած էր նոկաց և թիւ
մը: Տ'Արդանեան գուորին զարկաւ և ներսէն նկած
հրաւէրի մը վրայ, սենեակ մտաւ:

Բօրթօս պառկած էր և բարքի մը թուղթ կը խո-
ղար Մուսքզօնին հետ, ձեռքը վարժ պահելու համար,
մինչ շամփուրի վրաց անցուած կաքաւ մը կը զառնար
կրակին առջեւ ու խոշոր վառարանի մը անկիւնները,
կբակեկալի վրաց կը պղպջային երկու սահեր, մսեղէն
և ձկնեղէն կերակուրի հոտեր արձակելով և ոռնեգերը
փայտաբելով: Յոկէ զատ, գրասեղանի մը վրայ և զա-
րալի մը մարմարինին վրայ պարապ չիշեր կը
վիստացին:

Իր բարեկամը տեսնելով, Բօրթօս ուրախութեան
աղաղակ մը արձակեց և Մուսքզօն յորբանքով ոտք
ելաւ, տեղը ա'Արդանեանի ոռւաւ և զնաց աչքէ ան-
ցուց երկու սահերը:

— Ա՞ն, դո՞ւք էք, ըստ Բօրթօս ա'Արդանեանի,
բարքի եկաք: Ենթագամիտ եղէք որ ձեզ չղիմաւորեցի:
Բայց, աւելցուց մատհովութեամբ նարեւով ա'Արդան-
եանի, գլուխիս եկածը գիտէ՞ք:

— Ո՞չ :
— Պահպոկապետը բան չըսա՞ւ ձեզի :
— Ձեզի հարցուցի և ուղղակի վեր ելար :
Բօրթօս աւելի աղատօրէն շունչ առնել սկսաւ :
— Ի՞նչ պատահեցաւ ձեզի, սիրելի Բօրթօս, շաբունակեց տ'Արդանեան :

— Սա պատահեցաւ որ հակասակորդիս վրայ խոյացած ատենս, որուն արդէն սուրի երեք հարուած տուած էի և որուն գործը լմացնել կ'ուզէի չորրորդ հարուածալ մը, ոտքս քարի մը եկաւ և ծունդս ձմլուեցաւ :

— Ի՞րա՞ւ :

— Պատւոյս վրայ կ'երդնում : Անպիտանին համար բարեխախոտութիւն մը եղաւ, վասն զի պիտի մեռցնէի զի՞նքը, կ'աղանովիմ ձեզ :

— Ի՞նչ եղաւ :

— Օ՛հ, չեմ զիտեր, ուտիթը զտաւ բաւական և ճնինեցաւ առանց մնացորդը ուզելու : Բայց, սիրելի տ'Արդանեան, ձեզի ի՞նչ պատահեցաւ :

— Այնպէս որ, շաբունակեց տ'Արդանեան, այդ ձմլուածքը պարտաւորեց ձեզ անկողի՞ն պառկիլ սիրելի Բօրթօս :

— Ա՛հ, Աստուած իմ, այո՛, եղածը այս է : Եւ յետոք քանի մը օրէն ոտք պիտի ելլեմ :

— Ան ատեն ինչո՞ւ Բարիկ չփոխագրուեցաք : Հոս շատ ձանձրացած ըլլալու էք :

— Իմ միտքս ալ աղ էր, բայց, սիրելի բարեկամս, պէտք է որ բան մը խոստավանիմ ձեզի :

— Ի՞նչ :

— Արովնեանեւ շատ կը ձանձրանայի, ինչպէս ըստիք, և զրպանիս մէջ ունէի եօթանասունեւհինդ սկիլի, զոր զուք տուած էիք ինծի, զրօսանքի համար քովս բերել տուի աղնուական մը, որ այս պանդոկը իջած

էր և որուն առաջարկեցի բարի մը խաղալ : Ծնդունեց և իմ եօթանասունեւհինդ ոսկիներս անոր դրսանը մտան, առանց հաշուելու ձիս, զոր տարաւ, բացէն ըլլալով : Բայց գո՞ւք, սիրելի տ'Արդանեան :

— Ի՞նչ ընենք, սիրելի Բօրթօս, մարդ չի կրնար ամէն առանձնաշնորհում վայելիլ, ըստ տ'Արդանեան : Սուակը գիտէք, «Ո՛վ որ խաղի մէջ դժբախտ է, սիրոյ մէջ երջանիկ կ'ըլլայ» : Դուք սիրոյ մէջ շատ երջանիկ էք և խաղի մէջ ատոր վրէժը կը հանուի : Բայց զրամական ձախորդաթիւնները ձեզի համար ի՞նչ կարեւորութիւն ունին : Դուք ձեր դրսունին չունի՞ք, որ անշուշտ օգնութեան պիտի հասնի ձեզի :

— Է՛ ուրեմն, ահեսէք, սիրելի տ'Արդանեան, որովհեանեւ խաղի մէջ կը ձախողիմ, պատասխանեց Բօրթօս համարձակ երեւոյթով մը, իրեն զրեցի որ յիսուն ոսկի մը զրկէ ինծի, որուն բացարձակապէս պէտք ունէի այն վիճակին մէջ ուր կը գտնուիմ . . . :

— Է՛, ի՞նչ պատասխան եկու :

— Իր ագարակները զացած ըլլալու է, վասն զի պատասխան չտուաւ :

— Ի՞րա՞ւ :

— Այո՛, չտուաւ : Ուստի երէկ սռաջինէն աւելի ստիպողական երկրորդ համակ մը զրկեցի : Բայց ահա զուք հոս էք, սիրելիս, ձեր վրայ խօսինք : Կը խոստովանիմ թէ սկսած էի հոգ ընել ձեր մասին :

— Բայց ձեր պանդոկապետը ձեզի հետ աղէկ կը զարտի երեսյթին համեմատ, սիրելի Բօրթօս, ըստ տ'Արդանեան, հիւանդին ցոյց տալով լեցուն սաները և պարապ շիշերը :

— Անկ համեկ, պատասխանեց Բօրթօս : Արդէն երեք չորս օր կայ որ իր հաշիւր ներկայացուց ինծի լիբրը ու ևս ալ զուրս նետեցի թէ՝ զի՞նքը և թէ հաշիւր, այնպէս որ հոս կը գանուիմ յաղթականի մը

պէս աշխարհակալի մը պէս : Ասոր համար է որ,
ի՞նչպէս կը տեսնէք, զինուած եմ, վախնալով որ կը
նեղեն դիս :

— Սովորին, ըստ ա'Արդանեան ինպալով, ինձի
կուգայ որ ատեն ատեն դուրս կ'ելլէք :

Եւ մատովը ցոյց տուաւ շիշերը և սաները :

— Ես դուրս չեմ ելլեր զժբախտարար, ըստ Յօր-
թօս : Այս թշուառական ճմլուածքը զիս անկողնին
մէջ գամած է, բայց Մուսքոն դուրս կ'ելլէ և ուտե-
լիք կը բերէ : Մուսքո՞ն, բարեկամս, շարունակեց
Բօրթօս, կը տեսնէք որ հիւր եկաւ մեզի և պէտք է
որ յաւելուածական պաշար ունենանք :

— Մուսքո՞ն, ըստ ա'Արդանեան, պէտք է որ
ինձի ծառայութիւն մը մատուցանէք:

— Ի՞նչ ծառայութիւն, պարո՞ն :

— Զեր վարուելու եղանակը սորվեցուցէք Բլան-
չէի : Ես ալ օր մը կրնամ այս վիճակին մէջ գանուիլ
և ուրախ պիտի ըլլամ եթէ ինձի վայելել տան այն
միենոյն առաւելութիւնները, զոր գուք ընծարեցիք
ձեր ափրոջ :

— Է՛, Աստուած իմ, ըստ Մուսքոն համեստ
զէմքով մը, ատեկ գիւրին բան չկայ : Խնդիրը նար-
տար ըլլալու վրայ է, որիշ ոչինչ : Ես գիւղը մեծցած
եմ և հայրս, իր պարագ վարկեաններուն մէջ, գաղ-
տարառութիւն կ'ընէք :

— Մնացած ժամանակը ի՞նչպէս կ'անցընէք :

— Պարո՞ն, ի զործ կը գոնէր արհեստ մը զոր և
միշտ լու գտած եմ :

— Ի՞նչ արհեստ :

— Որովհետեւ կաթոլիկներու և բողոքականնե-
րու կոիւներուն ժամանակն էր և կաթոլիկները կը
ջարդէին բողոքականները և բողոքականներն ալ կը
ջարդէին կաթոլիկները, միշտ յանուն կրօնքի, իրեն

համար խառն կրօնք մը շինած էր, որով մերթ կա-
թոլիկ կ'ըլլար, մերթ բողոքական : Արդ, հրացանը
ուսին վրայ, սովորաբար կը պատէր ճամբաները եղե-
րող ցանկապատերուն հոտեւը ու երբ կը տեսնէք որ
կաթոլիկ մը կուգայ առանձին, բողոքական կրօնքը
կը յաղթանակէր իսկոյն իր, մաքին մէջ : Հրացանը
կ'ուղղէր ճամբորգին : Յետոյ, երբ անիկա տասը քայլ
միրայն հեռու էր իրմէ, կը բանար խօսակցաւթիւն մը,
որուն վերջաբանը աս կ'ըլլար միշտ որ ուղեւորը իր
քսակը կուտար միշտ կեանքը վրկելու համար : Աւե-
լորդ է ըսել որ երբ բողոքականի մը գալը տեսնէք,
կաթոլիկութեան ա'յալիսի բուռն եռանդ մը կ'զգար
իր մէջ որ չէր հասկնար թէ քառորդ ժամ մը առաջ
ի՞նչպէս կրցած էր ատարակցաներ ունենալ մեր սուրբ
կրօնքին վերազանցութեանը վրայ : Վասնզի ևս կա-
թոլիկ նմ, պարո՞ն, և հացրս, իր ակզրունքներուն
հաւատարիմ մնալով, անդրանիկ եղբայրս բողոքական
ըրած էր :

— Այս արժանընտիր մարդը ի՞նչպէս մեռաւ,
հարցուց ա'Արդանեան :

— Ամէնէն գժբախտ եղանակովը, պարո՞ն : Օրին
մէկը խոռոչաւոր ճամբու վրայ բողոքականի մը և
կաթոլիկի մը միջև գանունցաւ : Երկուքին հետ ալ
գործ ունեցած ըլլալով ճանչցան վինքը, այնպէս որ
մրացան իրեն գէմ կախեցին : Յետոյ իրենց ըրածին
վրայ եկան պարծենցան մօտակայ գիւղին կապելացին
մէջ, ուր եղբայրս ու ես կը խմէինք :

— Ի՞նչ ըրիք, հարցուց ա'Արդանեան :

— Թողուցինք որ խօսին, աւելցուց Մուսքոն :
Յետոյ, որովհետեւ կապելացէն գուրս ելած ատեն հա-
կառակ ճամբաներէ զացին, եղբայրս զնաց գարանի
կեցաւ կաթոլիկին ճամբուն վրայ, իսկ ևս ալ բողո-
քականին ճամբուն վրայ գարանի կեցայ : Երկու ժամ

ետքը, ամէն բան վերջացած էր : Երկուքին գործնալ լմացուցած էինք, հիմանալով նախառեսութեանը վրայ մեր տարաբախտ հօր, որ մեզ իւրաքանչիւրատարեր կրօծքի մէջ մեծցնելու զգուշութիւնը ունեցած էր :

— Արդարեւ ձեր հայրը, ինչպէս ըսիք, Մուսքոն, շատ ուշիմ կտրիմ մը կ'երեւայ: Պարապ ժամանուն մէջ գաղառորսութիւն կ'ընէր ըսիք, չէ՞ :

— Այսո՛, պարո՞ն, և ա՛ն էր որ ինծի սովորեցոց խեղդակապ հիւսել և կարթ նետել: Հետեւապէս, երբ տեսոյ որ մեր անպիտան պանդոկապեաը մեզ կը սուցանէր կտոր մը միսով, որ գիւղացիներու համար կը բաւէ, բայց մերինին պէս երկու վատոյժ սուսմոքներու համար չի յարմարիր, իմ նախկին արհեստ ձեռք առի: Իշխանին անտառներուն մէջ պըտքանիով, խեղդակապեր զեւեղեցի անցքերուն մէջ և կարթեր նետեցի լիձերուն մէջ: Այսպէս որ հիմա, Աստուծոյ տուածէն, ամէն բան ունինք, ինչպէս կընաք ստուգել, կաքաւ, ճագար, ծածան, անքիլոս, ամենոքն ալ թեթև, առողջաւէտ սնունդներ, որոնք հիւսենքներու կը յարմարէին:

— Բայց գինին ո՞վ կը հայթայթէ, ըսաւ ա՞Մրդանեան: Ձեր պանդոկապե՞աը:

— Այսինքն այսո՛ և ո՛չ:

— Ի՞նչպէս այսո՛ և ո՛չ:

— Կը հայթայթէ, իբրու, բայց չի գիտեր թէ այս պատիւը կը վայելէ:

— Բացարեցէ՞ք, Մուսքոն, ձեր խօսակցութիւնը հրահանգիչ է:

— Ահա ըսեմ, պարս՞ն: Իմ ճամբորդութիւններուն մէջ գիպուածով հանդիպեցայ սպանիացիի մը, որ շատ երկիր տեսած էր, ի մէջ այլոց նոր Աշխարհը:

— Նոր Աշխարհը ի՞նչ յարաբերութիւն կրնայ ու նենալ սա գրասեղանին և դարակին վրայ գտնուած շիշերուն հետ:

— Համբերութիւն, պարո՞ն, ամէն բան իր կարպէն պիտի բացատրուի:

— Եաւ աղէկ, Մուսքոն, մտիկ կ'ընեմ:

— Այդ սպանիացին սպասաւոր մը ունէր, որ Մեքսիկա ճամբորդած տաեն ընկերացած էր իրեն: Սպասաւորը իմ հայրենակիցս էր, այնպէս որ իրարու հետ բարեկամացանք այնչափ չուառվորչափ որ մեր նկարագիրները իրարու կը յարմարէին: Երկուքս ալ որսորդութիւնը կը սիրէինք ամէն բանէ աւելի: Բարեկամս կը պատմէր ինծի թէ ի՞նչպէս բնիկները ընդգարձակ դաշտերու մէջ վագը և ցուլ կ'որսան օղակաւոր պարզ հանգոյցներով, զորս կը նետեն արդ սոսկալի անասուններուն վիզը: Ամէնէն առաջ չէի ուղեր հաւատալ թէ կարելի էր այդ աստիճան ճարպիկութիւն ցոյց տալ, արսինքն քան կամ երեսուն քայլ հեռուէն չուանի մը ծայրը նետել ուզուած տեղը: Բայց պատցոյցը տեսնելով պարտաւորուեցայ պատմուածին ճշութիւնը ընդունիլ: Բարեկամս երեսուն քայլ հեռու կը դնէր շիշ մը և օղակաւոր հանգոյց մը նետելով, անոր մէջ կ'առնէր շիշին վիզը: Ես ալ այս վարժութիւնը ըրի և որովհետեւ բնութիւնը կարգ մը յատկութիւններով օժսած է զիս, այսօր այդ ճիւղին մէջ վարպետ մը եղած եմ: Միաքս համելցա՞ք հիմա: Մեր պանդոկապեաը ճոխ մասան մը ունի, որուն բանալին քովը կը պահէ միշտ: Միայն թէ մասանը պատուհան մը ունի: Արդ, հանգոյցս կը նետեմ այդ պատուհանէն և որովհետեւ գիտեմ թէ ընտիր զինիները ո՞ր անկիւնը կը գտնուին, զիր կը քաշեմ զանոնք: Ահա, պարո՞ն, թէ ի՞նչպէս նոր Աշխարհը յարաբերութեան մէջ է սա գրասեղանին ու գարակին վրայ գտնուած շիշերուն

հետ : Հիմա, կ'ուզէ՞ք մեր գինիին համը նայիլ և ձեր կարծիքը յայտնել :

— Ծնորհակալ եմ, բարեկա՛մս, շնորհակալ եմ : Դժբախտաբար նոր ճաշկցի :

— Ե՛ւրեմն, ըստ Յօրթօս, սեղանը դի՛ք, Մուսքղօն, և մեր ճաշած պահուն տ'Արդանեան թո՛ղ պատմէ մեզի ի՞նչ որ պատահեցաւ իրեն ասաը օրէ ի վեր, ուր բաժնուած ենք իբրամէ :

— Յօժարակամ, ըստ տ'Արդանեան :

Մինչ Յօրթօս և Մուսքղօն կը ճաշէին նոր ապաքինողի ախորժակով ու այն եղայրական մ. երմութիւնով, զոր մարդիկ կ'ունենան դժբախտութեան մէջ, ու Արդանեան պատմեց թէ ի՞նչպէս Արամիս վիշտառուելով ստիպուած էր կենալ Քոէվքէօփի մէջ, թէ ի՞նչպէս Աթօսը Ամիէնի մէջ թողած էին՝ զինքը իբրև դրամանենգ ամբաստանող չորս անձերու հետ և թէ ի՞նչպէս տ'Արդանեան ստիպուած էր Վարափ կոմսին վրայէն անցնիլ մինչեւ Անգլիա հասնելու համար :

Բայց հոս գաղբեցաւ տ'Արդանեանի խոստվանութիւնը : Միայն իմացուց որ Անգլիայէ դարձին՝ չորս հիմնալի ձիեր բերած էր, մէկը իրեն և միւսները ընկերներուն համար : Յետոյ խօսքը աւարտեց յայտնելով թէ Յօրթօսին յատկացած ձին պանդոկին ախուը կը գանուէր :

Եոյն պահուն Բլանշէ ներս մտաւ և տիբոջը յայտնեց որ ձիերը բաւական հանդիսա առեր էին և թէ կարելի էր երթալ և Փէքրմօնի մէջ գիշերել :

Տ'Արդանեան Յօրթօսի մասին գրէթէ ապահով ըլլալուն և իր միւս երկու բարեկամներուն վրայ լուր առնելու փափաքով, ձեռքը երկնցուց հիւանդին և ըստ թէ ճամբայ պիտի ելէ միւր բարեկամները փնտուելու համար : Եւ որովհետիւ նոյն ճամբով հապիտի դառնար, խոստացաւ միասին առնել զի՞նք, եթէ

7-8 օրուան մէջ Յօրթօս կուան Սէն Մարթէնի պանդոկը գտնուէր :

Յօրթօս պատասխանեց թէ շատ հաւանական է որ իր ոտքի ցաւը մինչեւ այն ատեն չներէ իրեն դուրս ելլելու : Ասկէ զատ, Շանթիյի մնալու պարտաւոր էր, որպէս զի գքսուհին պատասխան մը ստանալ :

Տ'Արդանեան մաղթեց որ այն պատասխանը շուտ և գոհացուցիչ ըլլայ և Յօրթօսը դարձնալ Մուսքղօնին խնամքներուն յանձնելէն և իր ծախքը վճարելէն ետք, Բլանշէի հետ ճամբայ ելաւ, իրեն հետ ըելած մէկ ձիէն ազատելով :

Բ.

ԱՐԴԻՌԻ ԹԷՂՋԱ

Տ'Արդանեան Յօրթօսին բան մը ըստ չէր վըքառեհին ինչպէս նաև վէրքին վրայ : Մեր Պէտրոսին շատ խոնեմ էր, թէեւ տակաւին դեռատի : Հետեւազէս անանկ ձեւացուցեր էր որ մեծխօսիկ հրացանակիրին պատմածներուն հաւատացած էր, քաջ համոզուած ըլլալով որ բարեկամութիւն մը չի դիմանար եթէ երեւան հանուի գաղտնիք մը, մանուանով եթէ այդ գաղտնիքը հպարտութեան կը գոզի : Ասկէ զատ, մարդ մը բարոյական իշխանութիւն կ'ունենաց այն անձեւուն վրայ, որոնց կեանքը գիտէ : Արդ, տ'Արդանեան ապագայ էնդրիկներու խորհուրդով և որոշած ըլլալով երեք ընկերները իր բախտին երեք գործիքները

ընել, շատ գոհ էր որ իր ձեռքին մէջ կ'ամփոփէր այն անտեսանելի թելերը, որոնց միջոցաւ կը յուսար դաշնոնք վարել:

Սակայն ճամբանն խորին տրամութեան մէջ էր: Կը մտածէր այն մանկամարդ ու սիրուն Տիկին Պօնասիէօյի վրայ, որ իր անձնուիրութեան վարձքը պիտի վճարէր: Բայց փութանք ըսելու որ այս վիշտը կ'զգար ոչ այնքան իր Երջանկութիւնը կորսնցնելուն որքան անոր համար որ թերեւս այն հէք կնոջ գլխուն փորձանք մը եկած էր: Տ'Արդանեան տարակոյա չունէր որ Տիկին Պօնասիէօ կարախնալին վրէժինողը թեան զոհ եղած էր և ինչպէս յայտնի է, կարտինալին վրէժինողը լարնուրելի էր: Զէր կրնար հասկնալ թէ ինք ինչպէս չնորհ գտած էր անոր առջեւ ու իր գլխուն փորձանք մը չէր եկած: Անշուշտ Մ. Քալուա պիտի յայտնէր իրեն եթէ զինքը գտած ըլշար իր տան մէջ:

Մարդ ժամանակին անցնիլը և ճամբուն Երկարութիւնը չզգար երբ խորին մտածութեան մէջ թաղուած է: Արտաքին կեանքը կը նուանի այն ատեն քունի մը, որուն երազն է այդ մտածումը: Անոր ազդեցութեանը տակ, ժամանակն այլ ևս չափ և անջրագետը այլ ևս հեռաւորութիւն չունի: Տեղէ մը կը մեկնի և ուրիշ տեղ մը կը հասնի, ահա այսչափ: Անցուած ճամբայէն ոչինչ կը մնայ յիշողութեան մէջ: Միայն տարտամ մշուշի մը մէջէն կ'երեան ծառերու, լեռներու և գիւղանկարներու խառնաշփոթ պահանջերներ:

Ահա այս զգայախարսութեան Ենթարկուած էր ա'Արդանեան երբ Շանթիյյին Քոէվքէօնէն բաժնող վեց կամ ութը մզոն հեռաւորութիւնը կտրեց և այն գիւղը հատած ատեն, ճամբուն վրայ հանդիպած բաներէն ոչինչ յիշեց:

Հոն միայն յիշողութիւնը վերսսացաւ, գլուխը ցնցեց և նշմարեց կապելան, ուր թողած էր Արամիսը, և ձին վազցնելով, գնաց կանգ առաւ գրանը առջեւ:

Այս անգամ պանդոկապետի՝ տեղ պանդոկապետունի մըն էր որ ընդունեց զինքը: Տ'Արդանեան դիմագէտ էր: Ակնարկ մը պատցուց այն կնոջ խոչոր ու զուսթ զէմքին վրայ և հասկցաւ թէ անոր հետ կեղծելու պէտք չկար և թէ արդքան զուարթ զէմքէ մը վախնալու պատճառ մը չունէր:

— Բարի տիկին, կրնաք ըսել ինձի թէ տասներկու օրի չափ առաջ այս տեղ ձգելու պարտաւորուած մեր բարնկամներէն մէկը ի՞նչ եղաւ, հարցուց ա'Արդանեան:

— 23-24 տարու աղւոր, հաճելի ու քաղցրաբարարոյ Երիտասարդ մը:

— Ուսէն վիրաւորուած էր:

— Այս:

— Ճիշտ ան է:

— Է՛ ուրեմն, պարո՞ն, հոս է:

— Ա՛ն, սիրելի Տիկին, կեանք կուտաք ինձի, բաւ ա'Արդանեան ձիէն իջնելով և սանձը Բլանչէի թիկին վրայ ձգելով: Ուր է այդ սիրեցիալ Արամիսը, զոր պիտի ողջագուրեմ: Կը խոստովանիմ թէ զայն տեսնելու փոյթ ունիմ:

— Ներեցէ՞ք, պարո՞ն, չեմ կարծեր որ աս միշոցին կարենայ ձեզ ընդունիլ:

— Ինչո՞ւ: Կնոջ մը հետ կը զանուի:

— Տէ՛ր Աստուած, ի՞նչ կ'ըսէք: Խեղծ տղաք:

Ո՛չ, պարո՞ն, կնոջ մը հետ չէ:

— Որի՞ հետ է ուրեմն:

— Մօնտիտէի Երեցին և Ամիէնի Յիսուսեան կ բօնաւորներուն մեծաւորին հետ:

Աստուած իր, պատաց ա՛Ալ դանեան, խնդ
տղուն վիճակը դէ՞շ է :

— Ո՛չ, պարո՞ն, ընդհակառակը : Բայց իր հիւ-
ւանգութեան հետեւանքով չնորհ եկած է վրան և
որոշած է կրօնաւոր՝ ըլլալ :

— Ճիշտ է, ըստ ա՛Արդանեան, մոոցած էի թէ
առժամանակեայ կերպով հրացանակիր էր :

— Անպատճառ կ'ուզէ՞ք տեսնել զինքը :

— Այո՛, անպատճառ :

— Լա՛ւ, բակը զացէք, աջ կողմի սանդուզէ՞ն
ելքը, Յարկը, թիւ 5 սենեակն է :

Տ'Արդանեան գէղ այն կողմը դնաց և տեսաւ ար-
տաքին սանդուզ մը, որ տակտուին արսօր կը գտնուի
հին պանդոկներու բակերուն մէջ : Բայց այս կերպով
կարելի չէր ապագայ կրօնաւորին սենեակը հասնիլ :
Արամիսի սենեակին անցքերը պահպանուած էին Ար-
միտեան պարսէդներուն անցքերուն պէս : Պազէն կե-
ցած էր նըրանցքին մէջ և կը պահպանէր զայն այն-
չափ անվեհերութեամբ որչափ տարիներու փորձերէ
ետք կը տեսնէր թէ վերջապէս մօտ էր հասնելու
այն արդիւնքին, սրուն կը բաղձար յաւիտենապէս :

Արդարեւ, խեղճ Պազէն միշտ երազած էր ծառա-
յել կրօնաւորի մը քով, և անհամբերութեամբ կը
սպաէլ այն վայրկենին ուր Արամիս տառասոկը նե-
տելով եկեղեցականի պարեգօսը պիտի հագնէր : Երեւ-
տասարդին ամէն օր կրկնած խոստումին վրաց թէ
այդ վայրկեանը պիտի չուշանար, Պազէն մնացած էր
հրացանակիրի մը ծառայութեան մէջ, որուն համար
կ'ըսէր թէ իր հոգին կորստեան պիտի մատնէր :

Հետեւաբար Պազին վերջին ծայր ուրախ էր :
Շատ հաւանական էր որ այս անգամ տէրը իր խօս-
քէն ետ պիտի չդառնար : Ֆիզիքական և բարյոյական
ցաւերուն միացումը այնքան առենէ ի վեր փափաք-

ուած արդիւնքը առաջ բերած էր : Արամիս, միենուն
տեսն թէ՛ մարմինով և թէ հոգիով տառապելուն հա-
մար, վերջապէս իր ակնարկն ու մտածումը սեւեռած
էր կրօնքին վրայ, և երկնային ազգարարութիւն մը
նկատած էր իրեն պատահած երկու գէպքերը, այ-
սինքն սիրուհիին յանկարծական անհետացումը և ու-
սին վէրքը :

Կը հասկցուի թէ իր գտնուած արամազքութեան
մէջ Պազէնի համար շատ անհման էր ա՛Արդանեանի
ժամանումը : Երիտասարդը կրնար ինքզինք ձգել
դարձեալ աշխարհիկ գաղափարներու յորձանքին մէջ,
որ երկար ատեն քշած տարած էր զինքը : Որոշեց
ուրիմն զուռը պաշտպանել քաջաբար : Եւ որովհետեւ
պանդոկապետուհիին կողմէ մատնաւած ըլլալուն հա-
մար չէր կրնար ըսել թէ Արամիս հոն չէր, փորձեց
հաստատել նորեկին թէ ծայրայիդ կերպով անխոր-
հուրդ գործ մը պիտի ըլլար երբ իր տէրը խանգա-
րէին այն բարեպաշտիկ խօսակցութեան մէջ, որուն
սկսած էր առաւուրնէ ի վեր և որ իրիկունէն առաջ
չէր կրնար լմննալ, Պազէնի ըսածքին նայելով :

Բայց ա՛Արդանեան կարեւորութիւն չուուաւ Պա-
զէնի պիրճախօս ճառին, և որովհետեւ իր բարեկա-
մին ծառային հետ վիճաբանութեան մտնելու փափաք
չունէր, պարզապէս մէկ ձեռքովը հրեց զայն և
միւս ձեռքովը բացաւ : Թիւ 5 սենեակին զուռը և
ներս մտաւ :

Արամիս, ու վերաբիուով, և դասկի նմանող
տեսակ մը կլոր ու տափարակ գլխանոց գրած, գլա-
նաձև և կիսածալ թուղթերով ծածկուած երկայնաձև
սեղանի մը առջև նստած էր : Աջ կողմը կը գտնուէր
Յիսուսեաններու մեծաւորը և ձախ կողմը Մօնտի-
տիէի երեցը : Վարագոյրները կիսովին գոց էին, և
խորհրդաւոր լոյս մը կը մտցնէին ներս : Կարծես

հրաշքով անհետացած էին այն բոլոր աշխարհիկ առարկաները, որոնք կրնան աչքի զարնել երբ մարդ ներս մտնէ երիտասարդի մը սենեակէն, մանաւանդ եթէ այդ երիտասարդը հրացանակիր է : Պազէն, անշուշտ վախնալով որ արդ առարկաներուն տեսքը իր տիրոջ միտքը կը դարձնէ աշխարհային իրերու վրայ, վերգուցած էր սուրբ, ատրճանակները, վիտրաւոր գլխարկը և ամէն տեսակ ասեղնանկարներ և ժանեակներ :

Բայց անոնց տեղը, տ'Արդանեան, մութ անկիւնի մը մէջ կարծեց նշարել խարազան մը որ դամէ մը կախուած էր պա ին վրայ :

Դուռը բացած ատեն տ'Արդանեանի հանած աղամուկին վրայ, Արամիս գլուխը վերգուց և ճանչցաւ իր բարեկամը :

Բայց երիտասարդը զարժանքով դիտեց որ իր ներկայութիւնը մեծ տպաւորութիւն մը չըրաւ հրացանակիրին վրայ, որուն միտքը այնքան հեռացած էր աշխարհային իրերէ :

— Բարե, սիրելի տ'Արդանեան, ըստ Արամիս, հաւատացէք որ երջանիկ եմ ձեզ տեսնելուս համար :

— Ե՞ս ալ ըստ տ'Արդանեան, թէև տակաւին վստահ չեմ թէ Արամիսի հետ կը խօսիմ թէ ոչ :

— Այս', բարեկամ, Արամիսի հետ կը խօսիք : Բայց ի՞նչ բան կրցաւ տարակոյս պատճառել ձեզ :

— Վախցայ որ սխալ տեղ եկած եմ : Աթէնէն առաջ կարծեցի թէ եկեղեցականի մը սենեակը կը մտնեմ : Յետոյ ուրիշ սխալի մը մէջ ինկայ, այս պարոններուն հետ տեսնելով ձեզ : Մանրապէս հիւանդացած ըլլա՞ք :

Երկու սեւազգեստ մարդիկը դժէթէ սպառնալից ակնարկ մը արձակեցին տ'Արդանեանի վրայ, որուն

դիտառութիւնը հասկցան : Բայց տ'Արդանեան հոգ չըրաւ :

— Թերեւս կը խանգարեմ ձեզ, սիրելի Արամիս, շարունակեց տ'Արդանեան, վասնզի իմ տեսածէս դատելով կը կարծեմ թէ խոստվանանք կ'ըլլաք այս պարոններուն :

Արամիս կարմրեցաւ անզգալի կերպով :

— Դուք զիս խանգարէ՞ք, օ՞ն, ընդհակառակը, սիրելի բարեկամ, կ'երգնում, և ըստիս իրը աղամուց, թոյլ տուէք որ հրձուիմ, ողջ առողջ տեսնելով ձեզ :

— Վասն զի պարոնը, որ իմ բարեկամն է, ծանր վտանգէ մը աղամուցաւ, շարունակեց Արամիս քաղցրութեամբ և տ'Արդանեանը ցոյց տալով երկու եկեղեցականներուն :

— Փառք տուէք Աստուծոյ, պարո՞ն, պատասխանեցին անոնք խոնարհելով :

— Այդ պարաւականութեան մէջ թերացած չեմ, Գերապատիւ Հայրեր, պատասխանեց երիտասարդը փոխադարձ ողջունելով զանոնք :

— Յարմար ատենին կուգաք, սիրելի տ'Արդանեան, ըստ Արամիս, և վիճաբանութեան մտնակցելով պիտի լուսաբանէք զայն : Ամիէնի Հայր մեծաւորը, Մօնափառիէի Հայր երէցը ու ես կը վիճաբանինք աստուծաբանական կարգ մը խնդիրներու վրայ, որոնց շահեկանութիւնը մեզ կը հրապարէ երկար տեսնէ ի վեր : Ուրախ պիտի ըլլամ ձեր կարծիքը առնելով :

— Զինուորականի մը կարծիքը կշիռ չունի, պատասխանեց տ'Արդանեան, որ կ'ակէր վրդովիլ խօսակցութեան առած զարձուածքէն : Կրնաք այս պարոններուն գիտութեանը վստահիլ, հաւատացէք խօսքիս :

Երկու սեւազգեստ մարդիկը ողջուն եցին :

— Ընդհակառակը, աւելցուց Արամիս, ձեր կարծիքը թանկագին պիտի ըլլայ մեզի համար : Ահաւասիկ թէ ինդիրը ի՞նչ է : — Հայր մեծաւորը կը կարծէ թէ իմ թէզս պէտք է մանուանդ ըլլայ վարդաղեատկան և գիտական :

— Ձեր թէզը, ուրեմն թէզ մը կը պատրաստէք :

— Անշտշտ, պատասխանեց յիսուսեանը : Զեռնադրութենէն առաջ քննութիւն մը կ'ըլլայ, որուն համար թէզ մը կը պահանջուի :

— Զեռնադրութիւն, պոռաց ա'Արդանեան, որ չէր կրնար հաւատաւ ինչ որ պանդիկապետանին և Պաղէն ըսած էին յաջորդաբար, ձեռնադրութիւն :

Եւ ազշահար աշքերը կը պատցնէր իր տոշեւ գտնուող երեք անձերուն վրայ :

— Արդ, շարունակեց Արամիս իր թիկնաթոռին վրայ առնելով շնորհալի գիրք մը և հաճութեամբ դիտելով կնոջ մը ձեռքին պէս ձերմակ և յորը ձեռքը, զոր օղին մէջ բանած էր, արիւնը վար ի ջեցնելու համար, արդ, ինչպէս լսեցիք, ա'Արդանեան, Հայր մեծաւորը կ'ուզէր որ իմ թէզս վարդապետական ըլլայ, մինչ ես կ'ուզէի որ գաղափարական ըլլաւ : Ահա ասոր համար է որ Հայր մեծաւորը կ'առաջտրկէր ինձի սանիւթը, որուն վրայ առկաւին խօսուած չէ և որուն մէջ կ'ընդունիմ թէ հիանալի ընդլայնումներու նիւթկայ :

“Utraque manus in benedicendo clericis inferioribus necessaria est”.

Տ'Արդանեան, որուն հմառութեան ասրիմանը գիտենք, յօնքերը չպոստեց այս մէջքերումին վրայ, ի՞նչ պէս պոստած չէր Մ . ը Դոէվիլի մէջքերումին տաեն, այն նուէրներուն առթիւ, զոր կը կարծէր թէ ա'Արդանեան ստացած էր Մ . Պըքինկէմէն :

— Իմաստը աս է, աւելցուց Արամիս, ամէն դիւ-

րութիւն տալու համար անոր .— Երկու ձեռքերը անհրաժեշտ են ստորակարդ քահանաներուն, երբ օրինութիւն կուտան անոնք :

— Հիանալի՛ նիւթ, պսսաց յիսուսեանը :

— Հիանալի՛ և վարդապետական, կրկնեց երէցը, որ յիսուսեանին խօսքերը արձագանգի մը պէս կրկնելու հոգ կը տանէր :

Իսկ ա'Արդանեան կատարելապէս անտարբեր մնաց երկու սեւազգինստ մարդոց խանդավառութեան :

— Այո՛, հիանալի, շարունակեց Արամիս, բայց Ա . Հայրերու և Ս . Գիրքի խորունկ ուսումնասիրութիւն կը պահանջէ : Արդ, խոնարհաբար խոստվանեցայ այս գիտուն եկեղեցականներուն թէ պահակներու հսկողութիւնները և թագաւորին, ծառացութիւնը քիչ մը զանց ընել առած էին ինծի ուսումնասիրութիւնը : Աւստի աւելի գիւրութիւն պիտի ունենամ իմ ընտրած մէկ նիւթիս մէջ որ աստուածաբանական այս խրթին խնդիրներուն մէջ պիտի ըլլայ ի՞նչ որ բարոյականը բնադրանցութեան մէջ :

Տ'Արդանեան մեծապէս կը ձանձրանար : Երէցն ալ :

— Տեսէք ի՞նչ յառաջարան (extrade), պսսաց յիսուսեանը :

— Exordiu n, կրկնեց երէցը բան մը ըսած ըլլաւ համար :

— Quemadmodum inter coelorum immensitatem.

Արամիս ակնարկ մը ձգեց ա'Արդանեանի վրայ և տեսաւ որ իր բարեկամը կը յօրանչէր :

— Ֆրանսերէն խօսինք, Հայր, իմ, ըսաւ Յիսուսեանին : Մ . ա'Արդանեան աւելի ախորժ պիտի զպայ մեր խօսքերէն :

— Այո՛, ձամբորդութենէն յոդնած եմ և այս լատիներէն խօսքերը չեմ հասկնար, ըսաւ ա'Արդանեան :

— Շա'տ աղէկ, պատասխանեց յիսուսեանը քիչ

մը սրանեղած, մինչ երեցը երախտազէտ ակնարկ մը
կը ձգէր տ'Արդանեանի վրայ, է՛ ուրեմն, տեսէք թէ
ի՞նչ օգուտ կը քաղուի սա մեկնութենէն:

— Մովսէս, ծառայ Աստուծոյ . . . : Ծառայ է միայն,
կը հասկնա՞ք: Մովսէս ձեռքերով կ'օրհնէ: Երկու
թեւերը բռնիլ կուտայ, մինչ երրայեցիները իրենց
թշնամիին կը յաղթահարեն: Ուրեմն կ'օրհնէ երկու
ձեռքերով: Ասկէ զատ, Աւետարանը կ'ըսէ. Imponite
manus և ո՛չ թէ մանս. — Զեռքերը վրան դրէք և
ո՛չ թէ ձեռքը:

— Զեռքերը վրան դրէք, կրկնեց երեցը շար
ժում մը ընելով:

— Բնդիակասակը ըսուեցաւ Ս. Պետրոսին, որուն
յաջորդներն են Պապերը, շարունակեց յիսուսեանը.
— Porridge digitos. Երկնցուցէք մատները: Հասկցա՞ք
հիմա:

— Սնչուշտ, պատասխանեց Արամիս, հաճոյք
պդալով, բայց խնդիրը նուրբ է:

— Մատները, աւելցուց յիսուսեանը: Ս. Պետրոս
մատներով կ'օրհնէ: Պապն ալ ուրեմն մատներով
կ'օրհնէ: Եւ քանի՞ մատով կ'օրհնէ: — Երեք մատով
մէկը Հօր, մէկը Որդիին և միւսը Ս. Հոգիին համար:

Ամէն ոք խաչակնքեց: Տ'Արդանեան ալ ստիպ-
ուեցաւ հետեւիլ այս օրինակին:

— Պապը Ս. Պետրոսի յաջորդն է և կը ներկա-
յացնէ Երեք աստուածային իշխանութիւնները: Եկե-
ղեց ական նույիքապեսութեան մնացեալ մասը ordines
inferiores, կ'օրհնէ Ս. Հրեշտակապետներու և հրեշ-
տակներու անունով: Ամենախոնարհ կղերիկոսները,
ինչպէս մեք ստրկատղները և յուսուրարները կ'օրհ-
նեն օրհնած ջուր սրակելու դորձիքով, որ օրհնող
մատերու անսահման թիւ մը կը ձեւացնէ: Ահա
խնդիրը պարզաբանուած. — Argumentum omni denu-

datum ornamento. Այս նիւթով սանկ երկու հատոր
կը լեցնեմ, շարունակեց յիսուսեանը և իր խանդա-
վառութեանը մէջ ձեռքը դրաւ Ս. Յովհան Ոսկերե-
րանի գիրքին վրայ, որ սեղանը կը ծռէր իր ծան-
րութեանը տակ:

Տ'Արդանեան սարսուաց:

— Անշուշտ, ըսու Արամիս, կ'ընդունիմ այդ թէ-
զի՞ն գեղեցկութիւնները, բայց միեւնոյն ատեն կը
խոսովանիմ թէ ինձի համար ձնչիչ է: Ես սա բնա-
բանը ընտրած եմ: Բաէ՞ք, սիրելի տ'Արդանեան, ձեք
ձաշակին կը յարմարի. — Non inutile est desiderium
in oblatione, կամ թէ «Քիչ մը վիշտ անօպուտ չէ Տի-
րոջը եղած ընծայի մը մէջ»:

— Այդ տեղ կեցի՞ք, պոռաց յիսուսեանը, վասն
զի՞ այդ բնաբանը հերեակիոսութեան կը մօտենայ:
Գրէթէ նմանօրինակ առաջարկութիւններու կը կայ հերե-
տիկոս Յանսէնիոսի Աugustinusին մէջ, որ ուշ կամ
կանուխ պիտի այրուի: Զգուշացէ՞ք, երիտասարդ
բարեկամս, սխալ վարդապետութիւններու կը հակիք:
Ինքզինքնիդ կորստեան կը մատնէք, երիտասարդ
բարեկամս:

— Ինքզինքնիդ կորստեան պիտի մատնէք, ըսու
երեցը գլուխը երեցնելով վշտագին:

— Դուք կը մօտենաք անձնիշխանութեան այն
հոչակաւոր կէտին, որ մահացնւ վատնգ մըն է: Դուք
ձակատ առ ձակատ կուգաք պեղազեաններուն և կէս-
պեղ սպեաններուն սպեանքներուն:

— Բայց, գերապատիւ տէր . . . , աւելցուց Արամիս,
իր գլխին վրայ թափող վաստերու կարկուտէն ըն-
դարմացած:

— Ի՞նչպէս պիտի ապացուցանէք, շարունակեց
յիսուսեանը, առանց ժամանակ տալու անոր որ խօսի,
թէ պէտք է ցաւիլ աշխարհի վրայ երբ մէկը Աստու-

ծոյ կը նուիրէ ինքզինքը : Մտիկ ըրէք սա երկայւրաբանութիւնը .— Աստուած Աստուած է և աշխարհը սատանան է : Աշխարհի վրայ ցաւիլը սատանալին վրայ ցաւիլ է : Ահա իմ եղբակացութիւնս :

— Իմ եղբակացութիւնս ալ աղ է, ըստու եւրէցը :

— Բայց չնո՞րհ . . . , աւելցուց Արամիս :

— Desideras diabolum, դժբա՛խտ, պոռաց յիսուսնանը :

— Կը ցաւի՛ սատանալին վրայ, կրկնեց երէցը, կը պաղատիմ, մի՛ փնտոէք սատանան :

Տ'Արդանեանի վրայ ապշութիւն կուգար : Կը կարծէր թէ յիմարանոցի մէջ կը գտնուի և թէ ինք ալ միւսներուն պէս պիտի յիմարանար: Միայն թէ ստիպուած էր լուռ մնալու, իր առջեւ խօսուած լեզուն չհասկնալուն համար :

— Բայց ինձի մտիկ ըրէք, աւելցուց Արամիս քաղաքավարութեամբ, որով կը յայտնէր թէ սկսած էր համբերութիւնը սպառիլ չեմ ըսեր թէ աշխարհի վրայ կ'ողբամ, ո՛չ երբեք պիտի չարտասանեմ այդ խօսքը, որ անշուշտ ուղղափառական չէ . . . :

Յիսուսեանը թեւերը վեր վերցուց : Նոյնը ըրաւ նաև երեցը :

— Ո՛չ բայց գոնէ խօստովանեցէք թէ վայելուչ չէ Աստուծոյ նուիրել այն բանը, որմէ զզուած ենք : Միթէ իրաւունք չունիմ, տ'Արդանեան :

— Անշուշտ իրաւունք ունիք, պոռաց երիտասարդը :

Երեցը և յիսուսեանը սատում մը ըրին իրենց աթոռին վրայ :

— Ահա իմ տեսակէտս, որ հաւաքարանութիւն մըն է : Աշխարհ հրապոյըներ ունի, աշխարհէ կը հեռանամ,

ուրեմն զոհողութիւն մը կ'ընեմ : Ս. Գիրքը կ'ըսէ յարանալէս . «Զոհ մը ըրէ Տիրոջը» :

— Ադ իրաւ է, ըսին հակառակորդները :

— Ասկէ զատ, շարունակեց Արամիս ականջը կարմրցնելու համար կսթմտելով, ինչպէս որ ձեռքերը ձերմկցնելու համար կը թոթուէր զանոնիք, ոտանաւոր մը յօրինեցի այս խնդրին վրայ և Մ. Վուաղութին ներկայացուցի : Այս մեծ մարդը շատ գովեց իմ ոտանաւորս :

— Ոտանաւո՞ր մը, ըստ յիսուսեանը արհամարհանքով :

— Ոտանաւո՞ր մը, կրկնեց երեցը մեքենարար :

— Ձեր ոտանաւորը արտասանեցէք նաւինք, պոռաց տ'Արդանեան, տնով թերեւս սփոփուխնք քիչ մը :

— Ո՛չ վասն զի կրօնական է, պատասխանեց Արամիս, ոտանաւոր աստուածաբանութիւն է :

— Սատանա՞յ, ըստ տ'Արդանեան :

— Ահաւասիկ, ըստ Արամիս համեստ գէմքով մը, որ քիչ մը կեղծաւորութենէ զերծ չէր բոլորթին, Դուքք որ կուլաք հրապարիչ անցեալ մը Եւ անբախտ օրեր կ'անցընէք

Զեր բոլոր վիշտերը վերջ պիտի գանեն Եթէ միայն Աստուծոյ նուիրէք ձեր արշունքները

Դուք որ կուլաք :

Տ'Արդանեան և երեցը կարծես թէ գոն եղան : Յիսուսեանը պնդեց իր կարծիքին վրայ :

— Աստուածաբանական ոճի մէջ սրբալիղծ ձաւշակ մը ուշափ անվայել է : Արդարն ի՞նչ կ'ըսէ Ա. Օգոստինոս, Severus sit clericorum sermo .

— Այստ, քարոզը պէտք է որ խիստ ըլլաց կրկնեց երեցը :

— Արդ, աւելցուց յիսուսեանը փութով երբ տեսաւ որ իր արքանեակը կը մոլորէր, արդ, ձեր քառզը կիներուն միայն հաճելի պիտի գայ: Մ. Բաղրուի դատասացութեան յաջողութիւնը պիտի ունենայ:

— Երանի՛ թէ այնորէս ըլլար, պոռաց Արամիս եռանդով:

— Կը տեսնէ՞ք, ըստ յիսուսեանը, տակաւին աշխարհ ձեր սրտին կը խօսի բարձրածայն Altissiniā sole: Աշխարհի կը հետեւիք, դեռատի բարեկամ և կը վախնամ որ Ս. Հոգիին չնորհը պիտի չներգործէ ձեզի:

— Վատահ եղիք, Գերապատիւ տէր, ես ապահով եմ իմ վրաս:

— Աշխարհային ինքնավստահութիւն:

— Ես ինքը իմ կը ճանչնամ, հայր իմ, իմ որոշումն անդառնալի է:

— Ուրեմն կը յամառի՞ք ձեր քարոզին այդ բնաքանը պահելու:

— Ինծի աւելի յարմաք կը թուի ան քան թէ ուրիշ մը, ուստի պիտի շարունակեմ և կը յուսամ որ ձեր խորհուրդին համաձայն իմ ընելիք սրբազրութենէս գոն պիտի ըլլար:

— Յանը ծանը աշխատեցէք, ըստ երեցը, լաւագոյն տրամադրութիւններու մէջ կը թողունք ձեզ:

— Այո՛, հողը լու սերմանուած է, ըստ յիսուսեանը և վախ չկայ որ սերմին մէկ մանը ապառաժի վրայ ինկած ըլլայ և միւս մասը՝ ճամբու վրայ և մնացածն ալ երկնքի թռչունները կերած ըլլան, Aves coeli comedenter illam.

— Սատանան տանի ձեզ և ձեր լատիներէնը, ըստ ա'Արդանեան, որուն համբերութիւնը սպառած էր:

— Մնաք բարով, որդեակ, ըստ երեցը, վաղը նորէն կը տեսնուինք:

— Մնաք բարով, յանդուզն երիտասարդ, ըստ յիսուսեանը: Յոյս կուտաք որ եկեղեցին մէկ լոյսը ըլլաք: Երանի՛ թէ այս լոյսը լափող կրակ մը չըլւար:

Տ'Արդանեան, որ շարունակ ժամ մը իր եղունքաները կրծած էր անհամբերութենէն, սկսաւ միան ալ կրծել:

Երկու սեւազգեստ մարդիկը ոտք ելան, Արամիսը և ա'Արդանեանը բարեւեցին և գէպի դուռը գացին: Պաղէն, որ ոտքի վրայ կեցած էր և այս խօսակցութիւնը մտիկ կ'ընէր չերմեռանդ խնդութիւնով, գիւմաւորեց կրօնաւորը, երիցին վարդարանն և յիսուսեանին խորհրդատերը առջեւէն զնաց ձամբան ցոյց տալու համար:

Արամիս մինչեւ սանդուզին ստորստը ընկերացաւ անոնց և շուտով մօտեցաւ ա'Արդանեանի, որ տակաւին կ'երազէր:

Երկու բարեկամները սուսնձին մնալով նախ լուռ կեցան: Ասկայն պէտք էր որ մէկը խօսէր և որովհետեւ տեւ ա'Արդանեան ըստ երեւոյթին միտքը դըրած էր այս պատիւը իր բարեկամին թողելու:

— Կը տեսնե՞ս, ըստ Արամիս, որ նորէն իմ սկզբնական գաղափարներու դարձած եմ:

— Այո՛, Աստուծոյ չնորհը ձեր վրայ իջեր է, ինչ պէս որ քիչ մը առաջ կ'ըսէր այն պարոնը:

— Օ՛հ, շտու ատենէ ի վեր աշխարհէ քաշուելու խորհուրդը ունէի և արդէն այս մասին իմ դիտաւորութիւնս յացոնած էի ձեզի, այնորէս չէ՞ բարեկամ:

— Այո՛, բաց կը կարծէի թէ կատակ կ'ը-

— Այսպիսի բաներու վրայ կատակ կ'ըլլա՞յ, ա'Արդանեան:

— Է՞ն, մահուան վրայ իսկ կատակ կ'ընեն մարդիկ:

— Իրաւունք չունին, ա՛Արդանեան, վասնզի մահը կորստեան կամ փրկութեան տանող գուռն է:

— Համամիտ եմ ձեզի, բայց, խնդրեմ, աստուածաբանութիւնը մէկոի թողունք: Այսօրսւան համար բաւական դաս առիք, Արամի՛ս: Իսկ ես գրէթէ մոռցալ զիտցած քիչ մը լստիներէնս: Ասկէ զատ, ոէտք է խոստվանիմ որ առտուան ժամը 10էն ի վեր բան չեմ կերեր և չափազանց անօթի: Եմ:

— Հիմա պիտի ճաշենք, բարեկամս, միան թէ պէտք է միշէք որ այսօր ուրբաթ է: Արդ, այսպիսի օր մը չեմ կրնար ո՛չ միս ուտել և ոչ միսի երես տեսնել: Եթէ իմ ճաշովս գոհանաք, քառանկիւն բոյս և պառզ պիտի ու ենք:

— Քառանկիւն բոյս ըսելով ի՞նչ կը հասկնաք, հարցուց ա՛Արդանեան մտատանջութեամբ:

— Շոմին (սպաննաք) ըսել կ'ուզեմ, աւելցուց Արամիս: Բայց ձեզի համար հաւկիթ ալ եփել պիտի տպար, ի՞նչ որ ծանր օրինազանցութիւն մըն է, վասն զի հաւկիթը միս է, քանի որ վասեակ կը ծնի անկէ:

— Այդ հացկերայթը շատ համել չէ, բայց հոգ չէ, ձեզի հետ գտնուելու համար կը հաւանիմ:

— Շորհապարտ եմ ձեր ալդ զոհողութեանը համար, ըստ Արամիս, բայց եթէ իմ կերակուրս ձեր մարմին օգտակար չէ, ձեր հոգին համար օգտակար պիտի ըլլայ, հաւատացէք:

— Ուրեմն իրօք կրօնաւո՞ր պիտի ըլլաք, Արամիս: Չեր բարեկամները ի՞նչ պիտի ըսեն ախոհօք: Ի՞նչ պիտի ըսէ Մ. աը Դոէջիլ: Պիտի ըսեն թէ դատակի մըն էք: Ահա այժմէն կ'իմացնեմ ձեզ:

— Կրօնական կարգը չէ որ կը մտնեմ, այլ հոն կը դառնամ: Ես արդէն եկեղեցին ձգեր էի աշխարհի

համար, վասնզի գիտէք արդէն որ հրացանակիրի տառապով մնձ զժկամակութիւնով հազած եմ:

— Ես ատիկա չեմ գիտեր:

— Ի՞նչ, չէ՞ք գիտեր թէ ի՞նչպէս ելայ կղերանցէն:

— Ո՛չ:

— Ահաւասիկ պատմութիւնս: Արդէն Ս. Գիլքը կ'ըսէ: «Կոստովանեցէք իրարուց: Ես ալ ահա կը խոստվանիմ ձեզի, ա՛Արդանեան:

— Ես կանխաւ թողութիւն կուտամ ձեզի: Կը տեսնէք որ բարի եմ:

— Բարեկամ, սուրբ բաներու վրայ կատակ մի՞ւնէք:

— Լա՛ւ, խօսեցէ՛ք, ձեզի մտիկ կ'ընեմ:

— Արդ, կղերանցն էի ի՞նը տարեկանէս ի վեր: Երեք օրէն քսան տարնկանիս մէջ պիտի մտնէի և աբրայ պիտի ըլլայի:

Ամէն բան որոշուած էր: Իրիկուն մը երբ ըստ ավլորութեան տուն մը գացած էի, — ի՞նչ օգուտ, պատանի հասակի մէջ տկար կ'ըլլանք, — սպայ մը, որ նախանձու աչքով կը նայէր ինծի, առանց կանխաւ իմաց տալու յանկարծ ներս մտաւ երբ ես վարք Սրբոց կը կարգայի տանտիրուհիին առջեւ: Այն իրիկունն էր որ Յուղիթի մէկ գործը թարգմաներ էի և տանտիրունց կը հաղորդէի և անիկա, ուսերէս կախուած, ինծի հետ կը կարգար և շարունակ: Կը գովէր ստանաւորներս: Կնոջ գիրքը, որ քիչ մը մտերմական էր, վիրաւորեց այս սպան, որ բան մը չըսաւ. բայց երբ գուրս ելայ, ինծի հետեւեցաւ և քովս գալսվ ըսաւ.

— Պ. արքա՛յ, գաւազանի հարուածներ կը սիւրէ՞ք:

— Չեմ կրնար պատասխանել, պարո՞ն, ըսի, քանի որ ո՛չ ոք համարձակած է այդպիսի հարուածներ տառ ի՞նծի:

— Եաւ ուրեմն, մտիկ ըրէք ինծի, «Պ. արբայ, եթէ նորէն դասնաք այն տեղը, ուր հանդիպեցայ ձեզի այս իրիկուն, ես պիտի համարձակիմ»:

Կարծեմ թէ վախցայ, գոյնո սաստիկ նետեց, զգացի որ սաքերս կը կթուին: Պատասխան մը կը փնտաէի, բայց չպտնելով լոռութիւն պահեցի: Սպան պատասխանի կ'սպասէր և տեսնելով որ կ'ուշանար, սկսաւ ծիծաղի, կոնակը դարձուց և տուն մտաւ: Ես ալ կղերանոց դարձայ: Ես քաջ ու տաքարիւն աղնուական մըն եմ, ինչպէս որ գիտած էք, սիրելի տ'Արդանեան: Նախատինքը սոսկալի էր, ու թէեւ ո՛չ ոք իմացաւ, սակայն դարձեալ սրտիս մէջ կենդանի էր ան ու կ'եռար: Մեծաւորներուս իմոց տուի որ ձեռնադրութեան համար զեռ բոլորպին պատրաստ չեմ ու իմ ինդրանքիս գրայ, արալողութիւնը մէկ տարի յետաձգեցին: Գաղի Բարիզի ամէնէն վարպետ զինավարժը գտայ, անոր հետ պայման զրի ամէն օր սրամարտութեան գտու առնել և տարի մը ամբողջ, ամէն օր դաս առի: Յետոյ տարի մը ետքը այն օրէն ուր նախատուած էի, պարեգուս կախեցի գամէ մը, ասպետի հագուստ հագայ և գացի պարահանդէս մը զոր բարեկամուհիներէս տիկին մը կուտար և ուր գիտէի թէ պիտի գտնուէր իմ մարդո: Մուան-Գուամուա փողոցն էր, Ֆուսի շատ մօտիկը: Աբգարեւ սպան հոն էր: Մոտեցայ իրեն երբ սիրերդ մը կ'երդէր կոսջ մը նայելով կաթոգին ու երկրորդ տունին ընդմիջեցի զայն:

— Պարոն, ըսի անոր, ձեզի անհաճոյ պիտի գտ՞յ նորէն եթէ Բայէն փողոցի մէկ տունը երթամ ու դարձեալ գտաւզանի հարուածներ պիտի սա՞ք ինծի եթէ ձեզի չնազանդելու քմայքը ունենամ:

Սպան երեսս նայեցաւ զարմանքով: Յետոյ ըստ ։
— Ի՞նչ կ'ուզէք ինձմէ պարո՞ն: Զեմ ձանչնար ձեղ:

— Ես այն պզտիկ աբբան եմ, պատասխանեցի, որ վարք Սրբոց կը կարդայ և Յուղիթը ստանաւորի կը վերածէ:

— Ա՛հ, ա՛հ, կը միշեմ, ըստ սպան հեղուօքէն: Ի՞նչ կ'ուզէք ինձմէ:

— Կը փափաքիմ որ ինծի հետ գուրսը պտոյտ մը ընելու հածիք:

— Վաղ առաւ, եթէ կը հածիք: Յօժարակամ պիաի ընդունիմ:

— Վաղ առաւ չըլլար: Հիմակ անմիջապէս, եթէ կը հածիք:

— Եթէ բացարձակապէս կը պահանջէք . . . :

— Բայց այս՝ կը պահանջէմ:

— Այն ատեն, զուրս ելլենք: Տիկիննեկ'ր, ըստ սպան, անհանգիստ մի' ըլլաք: Պարոնը սպաննելու չափ միջոց տուէք և պիտի դառնամ վերջին տունը աւարտելու համար:

Դուրս ելանք:

Տարի զայն Բայէն փողոցը, ձիչտ այն տեղը ուր տարի մը առաջ, միեւնոյն ժամուն, ինծի ըրած էր այն նախատինքը զոր պասմկցի ձեզի: Հիմակի լուսին մը կար: Սուրերը ձեռք առինք և առաջին յարձակումին սպաննեցի զայն:

— Վայ սատանայ, ըստ տ'Արդանեան:

— Արդ, շարունակեց Արամիս, երբ տիկինները տեսան որ իրենց երդիչը չգարձաւ և Բայէն փողոցին մէջ գահուեցաւ սուրի հարուած մը ստացած ըլլալով մարմոյն վրայ, խորհեցան որ ևս սպաննած էի զայն, և զործը մնձ գայթակութիւն պատճառեց: Ուստի ժամանակի մը համար սոխուեցած եկեղեցականի պահպօտէն հրաժարելու: Աթօն, որուն հետ ծանօթաց այն ատեն և Բօրթօն, որ սրամարտութեան գաւերէս զուրս, սուրի նորածե հարուածներ սովորեցու-

ցած էր ինձի, խորհուրդ տուին որ հրացանակիրի տառատոկ հագնիմ: Թագաւորը շատ սիրած էր հայր, որ Արքայի պաշարման ատեն սպաննուած էր և այդ տառատոկը շնորհաւեցաւ ինձի: Կը հասկնաք ուրիմն թէ այսօր ժամանակը եկած է եկեղեցին ծոցը զառնալու:

— Ի՞նչո՞ւ այսօր և ոչ թէ երեկ կամ վաղը: Այսօր ի՞նչ պատահած է ձեզի որ այդքան դէս խորհուրդներ կ'ունենաք:

— Այս վէրքը, սիրելի տ'Արդանեան, երկնային ազգաբարութիւն մը եղաւ ինձի:

— Այդ վէրքը, թէ՞ն, անիկա գրէթէ բուժուած է, և ապահով եմ թէ այսօր այդ վէրքը չէ որ կը տառապեցնէ ձեզ:

— Հապա ի՞նչ բան է, հարցուց Արամիս կարմրելով:

— Զեր սրտին վրայ վէրք մը ունիք, Արամիս, որ աւելի ծանր և արիւնու է, կնոջ մը պատճառած վէրքն է այն:

Արամիսի աչքը փայլեցաւ, իր կամքին հակառակ:

— Ա՛ն, ըստ իր յաւզումը ծածկելով կեղծ անհոգութեան մը տակ, ատանկ բաներու վրայ մի՛ խօսսիք: Ես կրնա՞մ այդ բաներուն վրայ խորհիլ սիրացին վիշտեր ունենալ: Ունայնութիւն ունայնութեանց: Կը կարծէք թէ խելքս կորսնցուցած եմ և սրո՞ւ համար, բանւորուհիի մը, սենեկապանուհիի՞ մը համար, որուն հետ սիրաբանած եմ զօրագունդի մէջ:

— Ներեցէք, սիրելի Արամիս, բայց ես կը կարծէի թէ աւելի բարձր տեղերու աչք ունէիք:

— Աւելի՞ բարձր, ո՞վ եմ ես որ այդքան փառասիրութիւն ունենամ, խեղձ հրացանակիր մըն եմ, չքաւոր և աննշան, որ կ'առէ սորկութիւնները և

աշխարհի մէջ իրեն յարմար տեղ մը չէ որ կը գըտնուի:

— Արամի՛ս, Արամի՛ս, պոռաց տ'Արդանեան, իր բարեկամին երեսը նայելով տարակուսող երեսյթով մը:

— Հող էի և հող կ'ըլլամ նորէն: Կեանքը նուաստութիւններով և ցաւերով լեցուն է, շարունակեց արամութեամբ: Այն ամէն թելերը, որրնք երաշանկութեան հետ կը կապեն, հետզհետէ կը խզուին մարդուն ձեռքին մէջ, մանաւանդ ուկի թելերը: Օ՛հ, սիրելի տ'Արդանեան, աւելցուց Արամիս դառնութեան թեթև շեշտ մը տալով իր ձայնին, հաւատացէք ինձի, ձեր վէրքերը, եթէ ունիք, լաւ ծածկեցէք: Լուսինը դժբախաներուն վերջին ուրախութիւնն է: Զգուշացէք ձեր վիշտերը մարդու յայտնելէ: Հետաքրքիրները մեր արցունքը կը ծծեն, • ինչպէս որ ճանձերը կը ծծեն վիշտաւոր եղնիկի մը արդւնը:

— Աւա՛զ սիրելի Արամիս, ըստ տ'Արդանեան, ինք ալ խորին հառաջանք ուը արձակելով, իմ պատմութիւնս է որ կ'ընէք:

— Ի՞՛չպէս:

— Այս՛, կին մը, զոր կը սիրէի, զոր կը պաշտէի, բանի յափշտակեցին ձեռքէս: Զեմ գիտեր թէ ո՛ւր և տարին զայն: Թերես բանտարկուած է, թերես մեռած է:

— Բայց գուք գոնէ սա՝ միսիթարութիւնը ունիք որ կամովին չնեռացաւ ձենէ և եթէ լուր չունիք անոր վրայ, պատճառը սա է որ ձեզի հետ ամէն հաւզորդակցութիւն արգիլուած է անոր, մինչդեռ . . . :

— Մինչդեռ . . . :

— Ոչի՛նչ, աւելցուց Արամիս, ոչի՛նչ:

— Ըսել է որ աշխարհէ կը հրաժարիք առ յաւէտ Զեր հաստատ որոշումն է աս:

— Այս՛, յաւէտ կը հրաժարիք: Դուքսը այսօր իմ

բարեկամս էք : Վաղը ստուեր մը միայն պիտի ըլլաք
ինծի համար, կամ մանաւանդ, այլ ևս գոյութիւն
պիտի չունենաք ինծի համար : Գալով աշխարհին,
գերեզման մըն է ան և ոչ ուրիշ բան :

— Վայ սատանայ, ձեր ըսածները շատ տիսուր են :

— Ի՞նչ ընեմ: Կոչումս կը հրապուրէ, կը յա-
շափշառէ զիս :

Տ' Արդանեան ժաղացաւ և պատասխան չտուաւ:
Արամիս շարունակեց.

— Եւ սակայն, մինչ տակաւին աշխարհի հետ
կապ ունիմ կը փափաքիմ խօսիլ ձեր վրայ, մեր բա-
րեկամներւն վրայ :

— Իսկ ես, ըստ ա' Արդանեան, կը փափաքիմ
ձեր վրայ խօսիլ բայց կը տեսնեմ որ ամէն բանէ
քաշուած էք : Աիրոց կարեսրութիւն չէք տար, բա-
րեկամները ստուեր կը նկատէք, իսկ աշխարհը գե-
րեզման մը :

— Աւա՛զ, դուք ալ փորձով պիտի տեսնէք, ըստ
Արամիս հառաչելով :

— Ուրեմն ա' չխօսինք, ըստ ա' Արդանեան, և
այրինք սա նամակը, որ անչուշտ ձեր բանւորուհին
կամ սենեկապանուհին մէկ նոր անհաւատարմու-
թիւնը կը ծանուցանէ ձեզի :

— Ի՞նչ նամակ, պոռաց Արամիս :

— Նամակ մը, որ ձեր բացակայութեան ատեն
ձեր սունը բերած էին և ինծի տուին որ ձեզի յանձ-
նեմ:

— Բայց այդ նամակը որմէ՞ է :

— Ա՛հ, լացող սպասուհիէ մը, յուսահատ բանւու-
րուհիէ մը : Թերեւս Տիկին աը Շէվրէօղի սենեկապա-
նուհիէն է, որ ստիպուած է Դուռ գառնալ իր տիրու-
հին հետ և որ ինքզինքը բանի մը տեղ դրած ըլլա-
լու համար, անուշաբոյր թուղթ մը տաեր և նամակը
գերուհի զինանշանով կնքեր է :

— Ի՞նչ կ'ըսէք:

— Սա՛ նայեցէք, կորսնցուցի՞ ինչ ըրի, ըստ ե-
րիտասարդը վնասուել ձեւացնելով : Բարեբախտաբար
աշխարհ գերեզման մըն է, մարդիկ և հետեւապէս կի-
ները ստուեր են, սէրը զգացում մըն է, որուն կա-
րեւորութիւն չէք տար :

— Ա՛հ, ա' Արդանեան, ա' Արդանեան, կը մեսցնէք
զիս :

— Վերջապէս գտա՛յ, ըստ ա' Արդանեան և նա-
մակը գրապանէն հանեց :

Արամիս տեղէն ցատկեց, նամակը առաւ, կարգաց
կամ մանաւանդ լափեց : Դէմքը կը ճառագայթէր :

— Կ'երեւայ թէ սպասուհին գեղեցիկ ոճ մը ունի,
ըստ ա' Արդանեան անհոգութեամբ :

— Շնորհակալ եմ, ա' Արդանեան, պոռաց Արամիս
գրէթէ խելացնոր : Ստիպուեր է Դուռ գառնողուս : Ան-
հաւատարիմ չէ ինծի : Միշտ կը սիրէ զիս : Եկո՛ւր,
բարեկամ, եկո՛ւր որ գրիեմ քեզ : Երջանկութիւնը
շնչանեղձ կ'ընէ զիս :

Եւ երկու բարեկամները ոկսան պարել պատկա-
ռելի Ա՛ Ասկերերանի շուրջը, կոխկրտելով Արամիսի
թէզին թուղթերը, որոնք գետին ինկեր էին :

Այս միջոցին Պազէն ներս մտաւ շոմինը և օմելը
բերելով :

— Դո՛ւրս, ապիթրա՛տ, պոռաց Արամիս գտակը ա-
նոր երեսին նետելով, եկած տեղդ գնա՞՛, այդ սոսկալի
բանջարեղբնները ու այդ անոելի կերակուրը տա՛ր,
խորոված նապաստակ մը, գէր տքաղաղ մը, զիստ մը
և չորս շիշ հին գինի բե՛ր :

Պազէն, որ աթբոջը երեսը կը նայէր և այս վո-
փոխութենէն բան մը չէր հասկնար, օմելը շոմինին
մէջ և շոմինը գետին թափեց :

— Ահա վայրկեանը եկաւ ձեր կեանքը թափաւոր-

ներու թագաւորին նուիրելու, ըստ ա'Արդանեան,
եթէ անպատճառ կ'ուզէք քաղաքավարութիւն մը
ընել անոր .— Non inutile desiderium in oblatione :

— Գետնին տակը անցնի ձեր լատիներէնը : Սի-
ցէք ինծի թէ ի՞նչ կայ չկայ :

Պ.

Ա Թ Օ Ս Ի Կ Ի Ն Բ

— Հիմա կը մնայ Աթօսին վրայ լուր, առնել, ը-
ստ ա'Արդանեան աշխոյժ Արամիսի, երբ իրենց մեկ-
նելէն ի վեր մայրաքաղաքին մէջ անցած դարձածը
պատմեց անոր ու երբ պատուական ճաշ մը մէկուն
մուցնել տուաւ իր թէզը և միւսին՝ իր յոգնութիւնը :

— Կը կարծէք թէ փորձանք մը եկած ըլլայ ա-
նոր գլխուն, հարցուց Արամիս : Աթօս շատ պարա-
մըն է :

— Այս, անշուշտ : Ո՞չ ոք ինձմէ աղէկ զիտէ
Աթօսին քաջասրառութիւնն ու ճարպիկութիւնը : Բացց
նախամնծար կը սեպեմ սուրիս վրայ ընդունիլ նիւ-
զակներու բախումը քան թէ զաւազաններու : Կը
վախնամ որ Աթօս սպասաւորներու կողմէ ծեծ կերած
չըլլայ : Սպասաւորները աշնովիսի մարդիկ են, որ ու-
ժով կը զարնեն և շուտով չեն դարբեցներ իրենց
հարուածները : Ահա թէ ինչո՞ւ կը փափաքիմ կարելի
նղածին չափ շուտով ճամբայ ելլել :

— Պիտի ջանամ ձեզի ընկերանալ, ըստ Արամիս,
թէւ ձի հեծնելու վիճակին մէջ չեմ զգար ինքզինքս :
Երէկ իմ վրաս փորձեցի սա խարազանը, զոր պատին
վրայ կը տեսնէք, սակայն զգացած ցաւէս չկրցայ
շարունակել այս բարեկալաշտ մարզանքը :

— Պատճառը ան է որ, սիրելի բարեկամս, մարդ
երբեք չի փորձեր հրացանի հարուած մը խարազանի
հարուածով բուժել : Բայց զուք հիւանդ էիք և հիւան-
դութիւնը մարդուն գլուխը կը տկարացնէ : Ահա ասոր
համար է որ չեմ մեղաղբեր ձեզ :

— Ե՞րբ պիտի մեկնիք :

— Վաղ առառ կանուխ : Այս զիշեր տղէկ մը
հանգստացէք և վաղը, եթէ կարենաք, միասին կը
մեկնիք :

— Ուրեմն վաղը, ըստ Արամիս, վասն զի ո՛րչափ
որ ալ երկաթէ կազմուածք մը ունենաք, պէտք է
հանգիստ ընէք :

Հետեւեալ օրը, երբ ա'Արդանեան Արամիսի սեն-
եակը գնաց, տեսաւ որ իր բարեկամը պատուհանին
առջեւ կը գտնուէր :

— Ի՞նչ կը դիտէք այդ տեղէն, հարցուց ա'Ար-
դանեան :

— Իրաւ որ կը հիանամ սա երեք փառաւոր
ձիերուն վրաք, որոնց սահնձէն բանած են ախոսուն
ծառաները : Իշխանական հաճոյք մըն է այսպիսի
ձիերով ճամբորդելը :

— Ե՛, սիրելի Արամիս, այդ հաճոյքը պիտի վա-
յելէք, վասնզի այդ ձիերէն մէկը ձերն է :

— Իրա՞ւ, ո՞րը :

— Ո՞րը որ ողէք : Ընտրութիւնը ձեզի կը թու-
զում :

— Վրայի ճոխ սպազէնն ալ իմս է :

— Անշուշտ :

— Խնդալ կ'ուզէք, ա'Արդանեան :
 — Զեր ֆրանսերէն խօսելէն ի վեր չեմ խնդար
այլ եռ :
 — Ի՞մս են ատրճանակի սա ոսկեզօծ պատեան-
ները, սա թաւիշէ ծածկոյթը, արծաթով բեւեռուած
թամբը :
 — Զերն են, ինչպէս որ իմս է ոտքը գետին
զարնող սա ձին և ինչպէս որ Աթօնին է այն միւս
ձին որ կը ճախրէ :
 — Երեքն ալ հիանալի ձիեր են :
 — Ռւրախ եմ որ ձեր ճաշակին կը յարմարին :
 — Թափաւո՞րը ըրաւ այս նույըը :
 — Ապահովապէս կարտինալը չէ : Բայց մի՛ հար-
ցնէք թէ ո՞ւրիէ է : Խորհեցէք միայն որ այդ երեք
ձիերէն մէկը ձեր սեփականութիւնն է :
 — Շիկադոյն սպասաւորին բռնած ձին ես կ'առ-
նեմ :
 — Շա՛տ աղէկ :
 — Կեցցէ՛ Աստուած, պոսաց Արամիս, ցաւս ան-
ցաւ : Եթէ մարմնիս մէջ երեսուն գնաւակ ալ ունե-
նամ, նորէն կը նստիմ այդ ձիուն վրայ : Ա՛հ, իրա՛ւ
որ շատ գեղեցիկ են ասպահովակները : Է՛յ, Պա՛ղէն,
հոս եկէք և չո՛ւտովլ :

Պաղէն վրան սեմին վրայ երեւյաւ տրտում դէմ-
քովլ :

— Սուրս մաքրեցէք, թաղիքէ գլխարկս շտկե-
ցէք, վերարկուս խոզանակեցէք և ատրճանակներս
լեցուցէ՛ք, ըստ Արամիս :

— Այս վերջին յանձնաբարութիւնը աւելորդ է,
ընդմիջեց ո'Արդանեան : Զեր ձիուն թամբին վրայ
լեցուն ատրճանակներ կան :

Պաղէն հառաջանք մը արձակեց :

— Զե՛ղ տեսնեմ, Տիար Պա՛ղէն, հանդարտեցէք,

ըստ ա'Արդանեան : Մարդ ամէն վիճակի մէջ կընայ
շահիլ երկնքի արքայութիւնը :
 — Եւ սակայն տէրս արդէն իսկ քաջ աստուա-
ծաբան մըն էր, ըստ Պաղէն լալագին : Եպիսկոպոս
և թերեւս կարտինալ պիտի ըլլար :
 — Է՛ ուրեմն, խե՛ղճ Պաղէնս, քիչ մը խորհէ :
 Խնդրե՛մ, ի՞նչ բանի կը ծառայէ եկեղեցական ըլլալը :
 Ատով մարդ պատերազմի երթալէ չի խուսափիր :
 Կը տեսնես որ Կարտինալը առաջին պատերազմը
 պիտի ընէ սաղաւարտը գլուխը և գեղարդը ձեռքը :
 Մ. աը Նոկարէ տը լս Վալէտը ի՞նչ կ'ընէ : Ահ ալ
 կարտինալ է : Հարցուր սպասաւորին թէ քանի՛ ան-
 գամ կոխ ըրած է ան :
 — Աւա՛ղ, հառաջեց Պաղէն, գիտեմ, պարո՛ն,
 աշխարհ տակնուվրայ եղած է այօրուան օրս :
 Այս միջոցին երկու երիտասարդները և ինդէ
 սպասաւորը վար իջած էին :
 — Ստ ասպանդակը բռնէ՛, Պաղէ՛ն, ըստ Արա-
միս :

Եւ Արամիս թամաին վրայ ցատկեց իր սովորա-
կան չնորհալիութիւնով և թեթեւարժութիւնով,
 բայց այնիւ կենդանիին քանի մը ըրջան ընել տալէ
 եաքը, այնպիսի անտանելի ցաւեր զգաց որ տժու-
նեցաւ ու դողդոջեց : Տ'Արդանեան, որ այդ պարա-
 գան նախատեսած ըլլալով, աչքէ հեռացուցած չէր
 Արամիսը, խոյացաւ անոր չօտ, թեւերուն մէջ առաւ
 և սենեակը փոխագրեց :

— Աղէ՛կ, սիրելի Արամիս, ինքզինքնիդ խնա-
 մացէ՛ք, ըստ, ես առանձին պիտի երթամ Աթօսը
 վիհառելու :

— Դուք արոյրէ շինուած մարդ մըն էք, ըստ
 Արամիս :

— Ո՛չ, բախտ ունիմ միայն, ահա ալաչափ : Բայց

ի՞նչպէս ժամանակ պիտի անցընէք իր բացակայութեանս պահուն։ Մատներու և օրնութիւններու վրայ մեկնութիւն պէտք չէ, կ'իմանա՞ք։

Արամիս ժպտեցաւ։

— Ոտանաւորներ պիտի շինեմ, ըստ։

— Այո՛, Տիկին Շէվրէօդի սենեկապանուհիին սիրազիրին հոտովը օծուած ոտանաւորներ։ Պաղէնին արտասանութիւն սովորեցուցէք և այս կերպով կը սփոփուիք թերեւս։ Գալով ձիուն, ամէն օր քիչ մը ատեն նստեցէք անոր վրայ, որպէսզի վարժուիք։

— Օ՛հ, այդ մասին անհոգ եղիք, ըստ Արամիս, ձեզի հետեւելու պատրաստ պիտի գտնէք դիս։

Հրաժեշտ առին իրարմէ և տասը վայրկեան եաքը, ա՛Մարդանեան իր բարեկամը Պաղէնին և պանդուկապետնիին խնամքներուն յանձնելէն եաքը, դէպ վ Ամիէն կը սուրար։

Բայց Աթօոր ի՞նչպէս պիտի գտնէք։

Շատ վտանգաւոր վիճակի մէջ թողած էր զայն։ Թերեւս մեռած էր։ Այս մտածումը տիրեցուց զինք և քանի մը անգամ հոռաչեց։ Ինքնիրեն երդումներ ըստ վրէժ լուծելու համար։ Տ'Արդանեանի բարեկամներուն մէջ ամէնէն տարէցը Աթօոն էր և հետեւ բար ըստ երևոյթին անիլա իր ձաշակին և համակրութեան ենթակայ չէր երևար։

Սակայն տ'Արդանեան մասնաւոր նախապատռութիւն մը ունէր այն ազնուականին համար։ Աթօորին աղնիւ ու վեհանձն կերպարանքը, իր կամովին ընտրած մթութեան մէջ փայլատակող մեծութեան շուղերը, իր անալլայլ ու միօրինակ ընաւորութիւնը, որով աշխարհի ամէնէն համելի ընկերակիցը կ'ըլլար, իր բոնազքօսիկ խնդութիւնը, իր քաջանբառութիւնը, որ թերեւս անխոցնուրդ համարուէր եթէ հազուադիւտ պաղարինութեան մը արդիւնքը չըլլար, այս ամէն

բարեմասնութիւնները ա՛Մարդանեանի ո՛չ միայն հաշմարումը և բարեկամութիւնը կը գրաւէին, այլ նաև հիացում կ'ազդէին անոր։

Եւ իրաւ, եթէ վայելչակաղմ ու աղնիւ Աթօոր իր ժպտուն օրերուն մէջ բաղդատենք Ա՛ տը Դաէւվիլի հետ, անկէ վար չէր մնար։ Հասակը միջին էր, սակայն այնպիսի ձեւ մը և համեմատութիւն մը ունէր որ Բօրթօսի հետ իր ըրած կոփուներուն մէջ շատ անգամ ընկձած էր այն հսկան, որուն մարմնական ոյժը հոչակ հանած էր հրացանակիրներուն մէջ։

Սուր աչքեր և ուղիղ քիթ մը ունէր։ Ծնօաը, Պրուդոսի ծնօտին պէս, վայելչութեան դրոշմ մը կը կըէր։ Զեռքերը, որոնց հոգ չէր տանէր, յուսահատութիւն կը պատճառէին Արամիսի, որ իրենները շարունակ կը մաքրէր հոտաւէտ իւղերով։ Չայնին հնչինը թափանցիկ և հեշտալուր էր։ Ասկէ զատ Աթօոր, որ միշտ աննշան մէկը կը ցուցնէր ինքնինքը, անսահմանելի բան մը ունէր։ Ամէնէն փայլուն ընկերութեան սովորութիւններուն տեղեակ կ'երեէր և իր ամէնէն փոքր շարժումներուն մէջ իսկ կը նշմարուէր իր աղնիւ վարմոնքը։

Եթէ հացկերոյթ մը տրուէր, Աթօոր սքանչելի կերպով կը կարգադրէր ամէն բան, իւրաքանչիւր կոչնականի իր նախնեաց կամ իր ստացած կարգին ու աստիճանին համեմատ տեղ ցոյց տալով։ Եթէ ազգատնամական խնդիր մը ծագէր, Աթօոր տէրութեան բոլոր աղնուական գերգաստանները, անոնց ազգաբանութիւնը, զինադրումը և ծագումը գիտէր։ Քաղաքավարերեւակ ամէնէն մանր պարագաներուն իսկ տեղեակ էր։ Գիտէր թէ մեծ կալուածատէրերու իրաւոնքը ի՞նչ էր։ Որսորդութեան արհեստին հմուտ էր և օր մը այս արհեստին վրայ խօսելու ատեն նոյն իսկ կուի ԺՓ գարմանք պատճառած էր, թէեւ

անիկա այս ձիւղին մէջ աննման վարպետ մըն էր :

Աթօս նոյն ժամանակի իշխաններուն պէս ձի կը հեծնէր և զէնք գործածելու մասին խիստ յաջողակ էր : Ասկէ զատ, իր դաստիարակութեան այնչափ խնամք տարած էին որ Սրամիսի արտասանած լատինէրէն հատակտորներուն վրայ կը ծիծաղէր և Յօրթօս ալ զանոնք հասկնալու երեւոյթը կը ցուցնէր : Մինչեւ իսկ քանի մը անգամ պատահած էր, զարմանք պատճառելով իր բարեկամներուն, որ երբ Արամիս լատինէրնի մէջ սխալ մը ընէր, Աթօս բայի մը ժամանակը կամ բառի մը հոլովը ուղղած էր : Իսկ իր ուղղամտութիւնը աննման էր այն դարուն մէջ, ուր զօրականները կրօնքի և խիղճի կանոններուն հակառակ կը վարուէին, սիրահարները՝ փափկութեան դէմ և աղքատները՝ Ասու ուծոյ եօթերորդ պատուիրանին դէմ։ Ուրեմն Աթօս արագոյ կարգի մարդ մըն էր :

Եւ սակայն այս աղնիւ ընաւորութիւնը, այս ընտիր արարածը, այս նուրբ էտթիւնը անզգալի կերպով կը դառնար նութական կեանքին, ինչպէս որ ծերունիները կը դառնան մարմնական ու բարյական ապշութեան։ Աթօս իր զրկումի ժամերուն մէջ, զորս յաճախ կ'ունենար, իր լուսաւոր մասը լիսին կը կորսնցնէր և կարծես թէ խոր մթութեան մէջ անեւ բեւոյթ կ'ըլլար։

Այն ատեն կիսաստուածը անհետանալով, հաղիւ մարգը կը մնար։ Դլուխը կոր, աչքը մարած, լեզուն ծանը ու զժուարին, Աթօս եբկար ժամեր կը նայէր կամ իր շիշին ու գտաթին և կամ կրիմոյին, որ աշնոր նշաններուն հնազանգելու վարժուած ըլլալով, իր տիրոջ անքթիթ ակնարկին մէջ ամէնէն աննշան փափաքը կը նշմարէր և անմիջապէս գոհ կ'ընէր զայն։ Եթէ այսպիսի ժամու մը մէջ չորս բարեկամները հաւաքուէին, խօսակցութեան նիւթ կը դառնար բուռն

ձիգով Աթօսին բերնէն ելած բառ մը։ Միւս կողմէ, չորս հոգիի խմած գինին կը խմէր ու այն ալ ուրիշ բանով չէր յայտներ, բայց եթէ յօնքերը քիչ մը աւելի պոստելով և աւելի խորին տրամութիւն մը ցոյց տալով :

Տ'Արդանեան, որուն հետազնին և սուր միտքը կը ձանցնանք, տակաւին հասկցած չէր այս արտամութեան պատճառը և ո՛չ ալ դիտած էր թէ ո՛ր ժամեւ րուն կը պատահէր, թէեւ այս մասին իր հետաքրքրութիւնը գոհացնելու պէտք ունէր։ Աթօս երբեք գիր չէր սահնար և գաղտնի ընթացք մը չունէր :

Կարելի չէր ըսել որ այս արտամութիւնը գրգռողը գինին էր, վասնզի նոյն այդ արտամութիւնը փարատելու համար գինի կը խմէր, թէև, ինչպէս ըսինք, այս կերպով աւելի կը տրտմէր։ Այս մելամաղձութիւնը կարելի չէր նաև խաղի վերագրել վասնզի Բօրթօսի ընթացքին հակառակ, որ խաղի մէջ բախտին փոփոխութիւնները երգով կամ լուսանգով կը յայտնէր, Աթօս միենայն անզրդուելի երեւոյթը ցոյց կուտար թէ՛ շահած և թէ կորուսած ատեն։ Դիշեր նղած էր որ հրացանակիրներու ընկերութեան մէջ հազար ոսկի շահած ու յետոյ կորանցուցած էր մինչեւ տօնական օրերու համար պահած ոսկեթել գոտին։ Յետոյ զարձեալ այս ամէնը, նաև հարիւր ոսկի շահած էր առանց յօնքը մազի չափ վեր կամ վար շարժելու, առանց իր ձեռքերուն սպիտակութիւնը փոխելու և առանց իր խօսակցութիւնը հանդարտ և ախորթելի ըլլալէ զագրեցնելու։

Իր դէմքը տիրեցնողը մթնոլորտի ազգեցութիւնն ալ չէր, ինչպէս կ'ըլլայ Անգլիացիներուն, վասնզի այս արտամութիւնը աւելի կը սաստկածար ու վորաբար տարիին աղւոր օրերուն ատեն։ Յունիս և Յուլիս ամիսները Աթօսի համար ամէնէն անոելի ամիսներն էին։

Ներկային համար ցաւ չունէր, իսկ երբ ապագայի վրայ խօսք կ'ըլլար, ուսերը կը բարձրացնէր։ Ուրիմն իր գաղտնիքը անցեալին մէջ էր, ինչպէս որ ա'Արդանեանի համար ըստած էր անորոշ կերպով։

Այս խորհրդաւոր երեւոյթը, որ իր բոլոր անձին վրայ սփոռուած էր, աւելի հետաքրքրաշարժ գէմք մը կ'ընէր զինք։ Նոյն իսկ կատարեալ զինովութեան մէջ, իր աչքն ու բերանը բան մը յայտնած չէին, թէև ամէն ճարտար միջոցներով հարցումներ ուղղած էին անոր։

— Կա՛ւ, կը մտածէր ա'Արդանեան, կարելի է որ խեղճ Աթօս մեռած է այս պահուս եւ իմ պասանուվս մեռած, վասնզի ես մղեցի զինքը այս դործին, թէեւ անոր շարժառիթը չէր զիտեր, արդիւնքը պիտի չզիտնար եւ օգուտ մը պիտի չքաղէր։

— Սա ալ նկատի առնելու է, պարո՞ն, կ'ըսէր Բլանչէ, որ մեր կեանքը անոր պարտական ենք։ Կը յիշէք թէ ի'նչպէս պոսաց։ «Տ'Արդանեան, հեռացէք, ես բոնուեցաւ»։ Եւ իր երկու ատրանակները պարպելէն ետք, ի'նչ սոսկալի աղմուկ կը հանէր իր սուրովը։ Կարծես թէ քան մարդիկ, կամ մանաւանդ քան կատղած սատանաներ կը կռուէին։

Եւ այս խօսքերը կը կրկնապատէին ա'Արդանեանի եռանդը, որ իր ձին կը գրգռէր, թէեւ անիկա գրգռուելու պէտք չունէր եւ սրարշաւ կը վազէր։

Առառուան ժամը տասնեւմէկին միջոցները Ամիենը տեսան։ Ժամը տասնեւմէկուկէսին, անիծնեալ պանդուկին գրանը առջև էին։

Տ'Արդանեան յանախ խորհած էր նենզամիտ պահովութեան լուծել մէկը այն վրէժներէն, որոնք կը միսիթարեն, գէթ յուսով։ Ուստի պանդուկը մտաւ թաղիքէ գլխարկը աչքերուն վրայ իջեցուցած, ձախ ձեռքը սուրին վրայ գրած եւ աջ ձեռքով խարազանը հնչեցնելով։

— Զիս կը ճանչնա՞ք, ըստ պանդոկապետին, ուշ կը յառաջանար, զինքը ողջունելու համար։

— Այդ պատիւը չունիմ, Տէր իմ, պատախանեց աչքերը շացած այն փայտուն կաղմածքէն արով կը ներկայանար ա'Արդանեան։

— Ա՛ն, չէ՞ք ճանչնար զիս։

— Ո՛չ, Տէ՛ր իմ։

— Լա՛ւ, երկու բառով պիտի յիշեցնեմ ձեզ։ Ի՞նչ ըրեք այն ազնուականը, որուն դէմ, ասկէ գրէթէ տանուեինդ օր առաջ, դրամանենգութեան ամբաւատանութիւն մը հնարելու յանդգնութիւնը ունեցաք։

Պանդոկապետը տժգունեցաւ, վասնզի ա'Արդանեան խիստ սպառնալից զիրք մը առած էր և Բլանչէ ալ կը հետեւէր իր տիրոջը օրինակին։

— Ա՛ն, Տէ՛ր իմ, ատոր խօսքը մի՛ ընէք, պուաց պանդոկապետը լալագին ձայնով, ա՛ն, Տէ՛ր իմ, ո՛րքան սռւզի նստաւ ինծի այդ սխալը։ Ա՛ն, որչափ դժբախտ եմ։

— Այդ ազնուականը ի՞նչ եղաւ կ'ըսեմ ձեզի։

— Հանեցէք մտիկ ընել Տէ՛ր իմ, և ներողամիտ եղէք։ Ինչպես նստեցէք։

Տ'Արդանեան, բարկութենէն և մտանոցութենէն լուս ու մունջ, նստաւ, գտաւորի մը պէս սպառնալից։

Բլանչէ անոր թիկնաթոռին կը թնեցաւ գոռողաբար։

— Պատմեմ ձեզի, Տէ՛ր իմ, աւելցուց պանկոկապետը գողգղալով վասնզի հիմա ճանչցայ ձեզ։ Դուք էիք որ մեկնեցաք երբ ձեր ըստ ազնուականին հետ այն ցաւալի կոյւր ունեցայ։

— Այո՛, ես եմ, կը տեսնէք որ շնորհ մը պիտի չկրնաք սպասել ինձմէ եթէ բովանդակ ճշմարտութիւնը չընէք։

— Աւրեմն հաճեցէք մոտիկ ընել և ամէն բան պիտի իմանաք:

— Մոտիկ կ'ընեմ:

— Իշխանութեան կողմէ իմաց տրուած էր ինձի թէ հոչակաւոր դրամանենդ մը իմ պանդոկս պիտի գար քանի մը ընկերներով, ամէնքն ալ պահակի կամ հրացանակիրի տարազով ծպտուած: Զեր ձիերը, ձեր սպասաւորները, ձեր դէմքը ամէն բան նկարագրուած էին ինձի:

— Ե՞տքը, ե՞տքը, ըսաւ ա'Արդանեան, որ շուտ հասկցաւ թէ այդ ձիշտ նկարագրութիւնը որո՞ւ կողմէ տրուած էր:

— Ուստի, իշխանութեան հրումանին համեմատ որ վեց հոգի զրկած էր ինձի իրքն օգնական, ձեռք տոփ այն միջոցները որո՞ւք անհրաժեշտ երկցան ինձի կարծեցեալ դրամանենդները ճանչնալու համար:

— Նորէն կ'ըսէք, պսուաց ա'Արդանեան, որ այս դրամանենդ բառէն սոսկալի կերպով կը զրդուէր:

— Ներկցէք, տէ՛ր իմ այսպէս ըսելուս համար, բայց այդ կերպով միայն ինքզինքս կրնամ արգարացնել: Կառավարութիւնը վախ պատճառած էր ինձի և դիւ տէք թէ պանդոկապետ մը պէտք է լաւ վարուի կառավարութեան հետ:

— Բայց նորէն կ'ըսեմ, այն աղնուականը ո՞ւր է, ի՞նչ եղաւ, մեռած է, ո՞զ է:

— Համբերութիւն, Տէր իմ, հիմա պիտի պատմեմ: Հետևապէս պատճեցաւ ի՞նչ որ դիտէք: Զեր յանկարծական մեկնումը, աւելցուց պանդոկապետը այնպիսի նրբամտութեամբ մը, որ ա'Արդանեանի ուշադրութիւնէն չըրիպեցաւ, ոյժ կուտար գործին վախանին: Այն աղնուականը ինքզինքս պաշտպանեց յուսանատարար: Իր սպասաւորը, որ անակնկալ դըմքախտութիւնով մը կուտի բանուած էր կառավարու-

թեան մարդոց հետ, որոնք ախոռի սպասաւորներու պէս ծպտած էին . . . :

— Ա՛ն, թշուառական, պոռաց ա'Արդանեան: ամէնքդ ալ խօսք մէկ ըրեր էք և չեմ գիտեր թէ ինչո՞ւ ամէնքդ ալ բնաջինջ չեմ ըներ:

— Աւա՛ղ, ո՛չ, Տէ՛ր իմ, ամէնքս խօսք մէկ ըրած չէինք և գուք հիմա պիտի տեսնէք: Ձեր բարեկամը, ներկցէք որ չեմ տար իր պատուաւոր անունը զոր կը կրէ անշուշտ և զոր դժբախտաբար չեմ գիտեր, — ձեր բարեկամը ատրճանակի երկու հարուածներով երկու մարդ զինաթափ ընելէ ետք, նահանջեց ինք զինքը պաշտպանելով սուրը ձեռքը և իմ մարդերէն մէկը վիրաւորելէ ետք զիս ալ ուշաթափ ըրաւ սուրին տափարակ կողմը զարնելով ինձի:

— Բայց, զահի՛ճ, վերջը պիտի բերե՞ս, ըսաւ ա'Արդանեան: Աթօսը ի՞նչ եղաւ:

— Ինչպէս ըսի, Տէ՛ր իմ, նահանջած տաեն իր ետին գտաւ մասանին սանդուղը, և որովհետեւ գուռը բաց էր, բանալին առաւ և ներսէն գոցելով պատապարուեցաւ: Վստահ ըլլալով թէ հոն պիտի զտնեն զայն, կառավարութեան մարդիկը ազտա թողուցին:

— Այո՛, ըսաւ ա'Արդանեան, զայն մեռցնելու միտք չունէին, միայն կ'ուզէին բանաարկել:

— Տէր Աստուած, բանաարկե՞լ: Ի՞նք բանաարկեց ինքզինքը, կ'երգնում: Ծանր կոխւ մը մղած էր: Մէկ հարուածով մարդ մը սպանեած և ուրիշ երկու հոգի ալ ծանրապէս վիրաւորած էր: Մեռեալը և երկու վիրաւորները իրենց ընկերներուն կողմէ տարուեցան և այլ ևս անոնց մասին տեղեկութիւն մը չառի: Երբ ինքզինքս դտաց գացի Պ. կառավարիչին, անցած դարձածը պատմեցի անոր և հարցուցի թէ բանաարկեալը ի՞նչ ընելու էի: Բայց Պ. կառավարիչը բան մը չգիտնալ ձեացուց: Ըսաւ թէ ինձի հա-

զորդուած հրամանները իրմէ չէին բղխած, և եթէ գֆրախտութիւն ունենալի մէկու մը ըսելու թէ ինք մատ ունէր այս գործին մէջ, կախել պիտի տար զիս: Կ'երևայ թէ սխալեր էի, պարո՞ն, և սխալ մարդ ձերբակալած էի և այն որ պէտք էր ձերբակալուէր, փախած էր:

— Բայց Աթօ՞սը, պոռաց ա'Արդանեան, որուն անհամբերութիւնը կը կրկնապատկուէր այս գործին նկատմամբ կառավարութեան անտարբերութենէն, Աթօսը ի՞նչ եղաւ:

— Որովհետեւ բանտարկեալին հանդէպ անիրաւութիւնս դարմանելու փոյթ ունէի, աւելցուց պահնգոկապեար, գէպի շանմարան գացի որպէսզի ձեր բարիկամը դուրս հանեմ: Ա՛ն, պարո՞ն, մարդ չէր, ստանայ էր: Երբ առաջարկեցի իրեն թէ կրնայ դուրս ելլել յայտարարեց թէ թակարդ մը կը լարուի իրեն և թէ դուրս ելլելէ առաջ, կ'ուզէ պայմաններ դնել: Խոնարհարար ըսի իրեն թէ պատրաստ էի իր պայմաններուն համակերպելու: Խոնարհարար կ'ըսեմ, վասնզի գիտէի թէ գէշ գիրքի մէջ ինկած էի ձեռք վերցնելով ն: Վեհափառութեան մէկ հրացանակիրին վրայ:

— Նախ կ'ուզեմ որ, ըսաւ, սպասաւորս ինձի յանձնուի բոլորովին զինուած:

Փութացինք այս հրամանին հնազանդիլ վասնզի կը հասկնաք, պարո՞ն, թէ տրամադիր էինք ձեր բարեկամըն բոլոր ուզածները կատարել: Մ. Կոհմօ, որ իր անունը յայտնեց, թէն շատ չի խօսիր, շաեմարան իջաւ, վիրաւորուած ըլլալուն հակառակ, այն ատեն տէրը ամրացուց դուռը և մեզի հրամայեց մէր խանութը երթալ:

— Բայց վերջապէս, պոռաց ա'Արդանեան, ո՞ւր է, ո՞ւր է Աթօսը:

— Շտեմարանին մէջն է, պարո՞ն:

— Ի՞նչպէս, թշուառական, մինչև այսօր շտեմարանին ոէջ պահած էք զայն:

— Ցէր Սոսուած, ո՞չ պարո՞ն, ինչո՞ւ շտեմարանին մէջ պահենք: Ա՛ն, եթէ կարենայիք անկէ դուրս հանել զայն, պա՛րո՞ն, բավանզակ կեանքիա մէջ երախտապարտ պիտի ըլլալի ձեզի և պիտի պաշտէի ձեզի ձեզ իբրև իմ պաշտապանն:

— Հսել է որ հոն է և կրնամ գտնել զայն:

— Անշուշտ, պա՛րո՞ն, հոն մնալու կը յամառի: Ամէն օլ պատուհանէն հաց կուտանք իրեն և միս, երբ որ ուզէ: Բայց, աւա՛զ հացը և միսը չէ որ ամէնէն շատ կ'սպաէ: Անզամ մը փորձեցի երկու սպասաւորներուս հետ վար իջնել բայց ձեր բարեկամը սոսկալի կերպով զայրացաւ: Լսեցի որ աարձանակները կը լցնէր: Ծառան ալ այնպէս: Յետոյ երբ հարցուցինք թէ իրենց գիտաւորութիւնը ի՞նչ է: Մէրը պատասխանեց որ ինք և սպասաւորը կընան քառասուն հարուած պարպէլ և թէ մինչև վերջին դնոտակը պիտի արձակնեն ու պիտի չժողուն որ մեզմէ մէկը շտեմարան մտնէ: Այն ատեն, պա՛րո՞ն, զացի կառավարիչին բոլորիցի: Անիկա սպատասխանեց թէ արժանի պատիժա կը կրեմ և թէ ասիկա զաս մը պիտի ըլլոյ ինձի որ ուրիշ ատեն չհամարձակիմ հաւսատել պանդոկու իջեւանող յարգելի ազնուականները:

— Այսուէս որ այն ատենէն ի վեր . . . , աւելցուց ա'Արդանեան չկընալով խնդալը զսպէլ պանդոկապետին արզանատելի դէմքին պատճառաւ:

— Այնաէս որ այն ատենէն ի վեր, պարո՞ն շաւունակեց պանդոկապեար, շատ տիտոր կեանք մը կը վարինք, վասնզի, պարո՞ն, պէտք է զիտանաք որ միր բոլոր պաշարը մառանին մէջ է: Շիշերով և տակառով զինիները, վարեջուրը, իւղը, նպարո՞ները,

խողի ճարալը, խողի ապուխտը ամէնքն ալ հոն են՝ և որովհետեւ մեղի արգիլուած է վար իջնելը, սախառաւած ևնք ո՛չ խմելիք և ոչ ուտելիք հայթայթել ճամբարդներուն, այնպէս որ մեր պանդոկը ամէն օր վաս կ'ընէ : Եթէ շաբաթ մըն ալ ձեր բարեկամը շտեմարմիս մէջ մնայ, կործանեցանք գնաց :

— Զեղի այսպէս կը վայլէ : Մեր կերպարանքէն չասկցա՞ք որ մենք ազնուական մարդիկ ենք և ո՛չ թէ դրամանենդ, ըսէք նաշիմ :

— Այս', պարոն, այս', իրաւունք ունիք, ըստ պանդոկապետը : Բայց նայեցէք, ահո նորէն բարկացաւ :

— Անշուշտ անհանգիստ ըրին զինք, ըստ ա'Արդանեան :

— Բայց պէտք է որ անհանգիստ ընեն, պոռաց պանդոկապետը : Քիչ մը առաջ երկու անդիմացի աղնուականներ եկան մեր պանդոկը :

— Է՛, ի՞նչ եղեր է :

— Ի՞նչ պիտի ըլլայ, անդիմացիները ընտիր գինին կը սիրեն, ինչպէս գիտէք, պարոն : Անոնք էն ընտիր գինին ուղեցին : Այն առեն կինս Մ. Աթօս սէն արտօնութիւն խնդրած պիտի ըլլայ շտեմարան իջնելու և այդ պարոններուն խնդրանքը գոհացնելու : Մ. Աթօս ալ սովորականին պէս մերժած պիտի ըլլայ : Ա՛հ, Տէ՛ր Աստուած, աղբուկը սաստկացաւ :

Եւ իրաւ, ա'Արդանեան լսեց որ շտեմարանին կողմէն ահագին աղմուկ մը փրթաւ : Ասք ելու և պանդոկապետին առաջնորդութեամբ, որ ձեռքերը կը գալարէր, և ևտեէն ունենալով Յլանչէն, որ ճրացանը լնցուն բանած էր, գնաց կուրին տեղը :

Երկու աղնուականները զայրացած էին : Երկար ճամբարդութիւն մը ըրած ըլլալով, ահօթութիւնէ և ճարաւէ կը մեռնէին :

— Բայց ասիկա բռնապետութիւն է, կը պուային լաւ ֆրանսելէնով, թէև օտար շեշտով, բռնապետութիւն է երբ այս խենթը չի թողուր պանդոկին խեղճ մարդիկներուն որ իրենց գինին ծախսն : Լաւ, դուռը պիտի խորտակենք և եթէ շատ կատղած է, պի ի սպաննենք :

— Կամաց եկէք, պարօններ, ըստ ա'Արդանեան, մէջքէն քաշելով տարձանալները, ոչ ոք պիտի կը բնաք մեռցնել :

— Լաւ, լաւ, կ'ըսէր որան ևտեէն Աթօսի հանդարտ ձայնը, թող ներս մանեն պզակի տղաք ուստող այս պարօնները և կը տեսնուինք :

Երկու անդլիմացի աղնուականները, որքան ալ քաջ կ'երեւագին, իրարու երես նայեցան վարանելով : Կարծես թէ այդ շտեմարանին մէջ կար մէկը այն սուվալուկ ձիւազներէն, որոնք մողավրդավին առասպելներու մէջ կը յիշուին իրեւ հսկայական հերոսն որոնց բնակավայրը կարելի չէ մանել անպատիժ :

Պահ մը լուռթիւն տիրեց : Բայց վերջապէս երկու անդլիմացիները ևս քաշուելու ամցան և երկուքն անիկա որ ամէնէն կուտասէրն էր, իշաւ սանդուղին հինգ վեց առտիճաններէն և պատ մը փլցնելու չափ ուժով կից մը տուալ դրան :

— Բլա՛նչէ, ըստ ա'Արդանեան, տարձանակները լեցնելով, ևս վերը գանուողին զործը վրաս կ'առնեմ, զուն ալ վարը գանուողին զործը լմնցուր : Ա՛հ, պարօննենք, զուք կուտի կ'ուզէք, լա՛ւ, պիտի կը ուժինք :

— Աստուած իմ, պուաց Աթօսի խորունկէն ևկած ձայնը, ինծի կուգայ որ ա'Արդանեանի ձայնն է :

— Արդարեւ ե՛ս եմ, բարեկամս, ըստ ա'Արդանեան ձայնը բարձրացնելով :

— Ա՛հ, լա՛ւ, այն առեն սա զուռ խորտակողներուն խերը պիտի անիծենք, ըստ Աթօս :

Աղնուականները սուրերը քաշած էին, բայց երկու կրակի մէջ կը գտնուէին, պահ մը ևս վարանեցան, բայց առաջին անգամուան պէս, իրենց հարատութիւնը յաղթական նլաւ և երկրորդ կից մը դուռը վերէն վար զղբեց:

— Մէկդի կեցիր, տ'Արդանեան, պոսաց Աթօս, մէկդի կեցիր, կրակ պիտի ընեմ:

— Պարոններ, ըստ տ'Արդանեան որ խոհեմութիւնը ձեռքէ չէր ձգեր ընաւ, պարոններ, մտածեցէք անգամ մը, համբերութիւն, Աթօս: Քէ զործի մը կը ձեռնարկէք: Գնաակներ պիտի տեղան ձեր վրայ: Ահա սպասաւորս և ևս երեք գնաակ պիտի արձակինք: Շտեմարանէն ալ նոյնչափ գնաակներ պիտի ընդունիք: Յեսոյ, տակաւին մեր սուրերը ունինք զորս լաւ կը շարժենք ևս ու բարեկամս, անգամով եղիք: Թողէք որ ձեր և իմ զործերը կարդադրեմ: Քիչ ատենէն ձեր գինին կ'ունենաք, խոսք կուտամ ձեզի:

— Եթէ երբէք մնայ, ըստ Աթօս հեղնական ձայնով: Պանդոկապիտը պաշ քրտինքի մը հոսիլը զգաց:

— Ի՞նչպէս, գինի չմնա՞ց:

— Անշուշտ մնացած է, աւելցուց տ'Արդանեան, անհոգ եղիք, կարելի չէ որ երկու հոգի շտեմարանին ամբողջ գինիները խմած ըլլան, պարոններ, ձեր սուրերը պատեանը զրէք:

— Լաւ, դուք ալ ձեր ատրճանակները ձեր զօտին մէջ զրէք:

— Ամենայն սիրով:

Եւ տ'Արդանեան օրինակը տուաւ: Յետոյ Բլանչէի դառնալով նշան ըրաւ որ հրացանը վար առնէ: Անդլիացիները, համոզուելով, իրենց սուրերը պատեանը դրին մալտալով: Իրենց պատմուեցաւ Աթօս սին բանտարկութիւնը: Եւ որովհետեւ բարի աղնուականներ էին, պանդոկապիտը մեղագրեցին:

— Հիմա, պարոններ, ըստ տ'Արդանեան, ձեր սենեակը գացէք և խօսք կուտամ որ տասը վայրկեանէն ձեր ուզածները պիտի բերուին ձեզի:

Անդլիացիները ողջունեցին և գուրս ելան:

— Հիմակ որ առանձին եմ, սիրելի Աթօս, ըստ տ'Արդանեան, դուռը բացէք կ'աղաջնիմ:

— Անմիջապէս, ըստ Աթօս:

Այն ատեն մեծ աղմուկով վար ձգուեցան փայտեր ու գերաններ, որոնք Աթօսի դրան ետև դրած պատնէշներն էին, զոր պաշարեալը ինք անձամբ կը խորտակէր:

Վայրկեան մը ետքը դուռը բացուեցաւ ու երեւցաւ գունատ գէմքը Աթօսին որ արագ ակնարկով մը չորս կողմը կը զննէր:

Տ'Արդանեան անոր վիզը նետուեցաւ և ողջապուրեց զայն գորտվանքով: Յետոյ ուզեց այս խոնաւ տեղէն գուրս հանել զայն և այն ատեն միայն նշմարեց որ Աթօս կը գողզոջէր:

— Վիրաւորուած էք, ըստ անոր:

— Եսո, ամենեւին, շատ խմած եմ, այսչափ, և երբէք մարդ մը գինով ըլլալու համար աւելի բան մը ըրած չէ: Կեցցէ Աստուած: Պանդոկապիւա, մինակ ևս առ նուազն հարիւր յիսուն շիշ գինի խմած պիտի ըլլամ:

— Ողորմած Աստուած, պոսաց պանդոկապիտը, եթէ սպասնառը տիրոջը խմածին կէսը խմեց, կործանեցայ գնաց:

— Կոփմօ պարկելու սպասաւոր մըն է որ անշուշտ համարձակած չէ իմ ըրածս ընելու: Միայն տականէն խմած է: Տեսէք, կարծեմ թէ մոոցեր է խիցը դնելու, կը լսէ՞ք, բան մը կը վազէ:

Տ'Արդանեան քահ քահ խնդաց և այս քրքիջը չերմի փոխեց պանդոկապիտին սպասուոը:

Նոյն պահուն կոիմօ երեցաւ իր տիրոջը ևտեւն,
Հրացանը ուսին վրայ, գլուխը դողոջուն, Ռիւպէնսի
նկարներուն մէջ երեցած գինով այժամարդերուն
պէս :

Ետեի կողմը ողողուած էր իւզոտ հեղուկով մը :
Պանդոկապեաը հասկցաւ թէ այն հեղուկը իր ընտիր
տեսակէ ձէթն էր :

Թափորը մեծ սրահէն անցաւ և գնաց զի եղուեւ-
ցաւ պանդոկին լաւագոյն սենեակը, զոր ա'Արդանեան
դրաւած էր իշխանաբար :

Այս միջոցին, պանդոկապեաը և կինը կանթեղ-
ներով վաղեցին շտեմարան, որուն մուտքը երկար
տաենէ ի վեր արդիւուած էր իրենց : Հոն սոսկալի
տեսարան մը պարզուեցաւ իրենց աչքին տաջև :

Պատնէներէն անդին, որոնց մէջ Աթոս խրամներ
բացած էր գուրս ելելու համար և որոնք կը բաղ-
կանային խորձերէ, տախտակներէ և պարապ տա-
կառներէ, ուզմական արուեստին կանոններուն հա-
մեմատ իրարու վրայ դիզուած, հոս հոն կը տեսնուէին
իւզի և գինիի ճակոյտեիու մէջ, կերռած խոզա-
պուխտներու բեկորները, մինչ կոտրած շիշերու դէղ
մը գրաւած էր շտեմարանին ձախ անկիւնը : Տակառ
մը որուն ծորակը բաց մնացած, էր, իր պարունակու-
թեան վերջին կաթիւները կը հոսկցնէր այդ բացուած-
քէն : Աւերումի և մահուան պատկերը, ինչպէս կը ուն-
ին բանաստեղծ մը, կը ա' ուսպիսէր հոն, իրը թէ
պատերազմի գայու մը ըլլար :

Դերաններէն կախուած յիսուն երշիկներէն հաշ-
զիւ տասը հատը մնացած էին :

Այն ատեն պանդոկապեաը և կինը այնպէս մը
պոռացին որ շտեմարանին կամարը թնդաց : Տ'Ար-
դանեան իսկ յուզուեցաւ : Աթօս գլուխը անզամ աս-
գին չը դարձուց : Ցաւին յաջորդեց կատաղութիւնը :

Պանդոկապեաը շամփուր մը սուաւ և իր յուսահատու-
թեան մէջ խոյացաւ այն սենեակը որ քաշուած էին,
երկու բարեկամները :

— Գինի բերէք, ըսաւ Աթօս, պանդոկապեաը
տեսնելով :

— Գինի, պուաց պանդոկապեաը ապշահար,
գինի, բայց արդէն հարիւր սոկիի գինի խմած էք:
Կործանեցաց, ոչնչացայ :

— Բէ՛հ, ըսաւ Աթօս, մենք մեր ծարաւը անցը-
նելու չափ խմեցինք:

— Եթէ միայն խմելով գոհ ըլլայիք, ինչ և է,
բայց բոլոր շիշերը կոտրէք էք :

— Դուք զիս հրեցիք շիշերու կոյտի մը վրայ
որոնք տապալեցան ու կարտեցան, յանցանքը ձերն է :

— Բոլոր իւզս կորսուեր է :

— Իւղը գերազանց սպեղանի մըն է վէրքերու
համար : Խեղճ կոիմօ պարտաւորուեցաւ դարմանել
այն վէրքերը զոր պատճառեցիք իրեն :

— Բոլոր երշիկներս կը ծուեր են :

— Այդ շտեմարանին մէջ անհատնում մուկ :

— Բոլոր այդ կորուստներուն դրամը պիտի վը-
ձարէք, պուաց պանդոկապեաը զայրագին :

— Երիցս անզէամ, ըսաւ Աթօս ոտք ելլելով,
բայց իսկոյն ինկաւ իր ուժին չափը տալով այսպէս :
Տ'Արդանեան խարազանը բարձրացնելով օդութեան
փութաց անոր, պանդոկապեաը քայլ մը ետ գնաց և
սկսաւ արցունք թափել :

— Ասիկա գաս մը պիտի ըլլայ ձեզի, ըսաւ ա'Ար-
դանեան, որպէսպի աւելի քաղաքավարութեամբ վար-
ուիք այն յաճախորդներուն հետ, զոր Աստուած կը
դւկէ ձեզի :

— Աստուած : Աստանան ըսէք :

— Սիրելի բարեկամու, ըսաւ ա'Արդանեան, եթէ

շարունակէք մեր գլուխը ցաւցնել, չորսերնիս ալ
պիտի երթանք ձեր շտեմարանին մէջ փակուելու, և
պիտի տեսնենք թէ ձեր վնասը իրօք ձեր ըսածին
չափ մնօծ է :

— Ե ուրեմն, այո՛, պարոններ, ըսաւ պանդոկա-
պետը, յանցանքը իմս է, կը խոստովանիմ, բայց ամէն
յանցանքի թողութիւն կը տրուի : Դուք ազնուական-
ներ էք, իսկ ևս ինեղծ պանդոկապետ մը, գթացէք
ինծի :

— Ա՛հ, եթէ ալդպէս խօսիս, ըսաւ Աթօն, սիրա-
պիտի յուղուի և արցունքները պիտի հոսին աչքերէս,
ինչպէս դինին կը հոսէր քու տակառներէդ : Մենք
կարծուածին չոփ չար չենք : Տեսնենք, հոս ելէք ու
խօսինք :

Պանդոկապետը մօտեցաւ վրդովումով :

— Եկուր կ'ըսեմ քեզի և մի՛ վախնար, շարու-
նակեց Աթօն : Այն պահուն երբ դրամ պիտի վճարէի
քեզի, քսակս սեղանիդ վրայ դրած էի :

— Այո՛, Տէր իմ :

— Այդ քսակին մէջ վաթսուն ոսկի կար : Ո՞ւր է :

— Կառավարութեան քովն է, Տէր իմ : Ըստուծ
էր թէ կեղծ դրամ էր :

— Լո՛ւ, քսակս տուր և վաթսուն ոսկին քեզի
ըլլայ :

— Բայց, գիտէք թէ կառավարութիւնը իր ձեռքը
ինկածը չի յանձներ : Եթէ կեղծ դրամ ըլլար, յոյս
կ'ունենայինք ետ առնելու, բայց զժրախտաբար իրա-
կան դրամներ են :

— Կառավարութեան հետ կարգադրէ, ինծի չլիւ-
րաբերիք, մանաւանդ որ ոսկի մը անդամ չմաց
ինծի :

— Տեսնենք, ըսաւ տ'Արդանեան, Աթօնի հին
ձին ո՞ւր է :

— Ախոռն է :
— Ո՞րչափ կ'արժէ :
— Առ առաւելն յիսուն ոսկի :
— Ութսուն ոսկի կ'արժէ, առ այն ձին և հա-
շիւգ գոցէ :

— Ի՞նչպէս, ձին կը ծախե՞ս, ըսաւ Աթօն, իմ
գայազիսս կը ծախե՞ս, ի՞նչի՞ վրայ պիտի նստիմ
ճամբորդելու համար, Կոփութի՞ն վրայ :

— Ես ուրիշ ձի մը բերի քեզի, ըսաւ տ'Արդան-
եան :

— Ուրիշ ձի՞ մը :
— Եւ հիանալի ձի մը, պոռաց պանդոկապետց :
— Եթէ աւելի աղւոր և աւելի մասդաշ ձի մը
կայ հինը քեզի ըլլայ : Գինի բեր մեզի :

— Ո՞ր տեսակէն, հարցուց պանդոկապետը զուարթ
գէմքով մը :

— Այն տեսակէն, որ շտեմարանին խորը, հեղ
տախտակներուն քով կը գտնուի : Անկէ քսանեւհինդ
շիշ կաց տակաւին : Միւսները վար ինկած տաենս
կոտրեցան : Վեց շիշ բերէք անկէ :

— Բայց կայծակ մըն է, այս մարդը, ըսաւ պահ-
ովկապետը ինքնիրեն, եթէ միայն տասնեւհինդ օր
մնայ հոս և խմածին դրամը վճարէ, գործերս կարգի
կը դնեմ :

— Եւ մի՛ մոռնար, շաքունակեց տ'Արդանեան,
նոյն գինիէն չորս շիշ անգլիացիներուն տանելու :

— Հիմա, ըսաւ Աթօն, մինչև որ գինին գոյ,
պատմէ ինծի, տ'Արդանեան, թէ մեր ընկերները ի՞նչ
եղան :

Տ'Արդանեան պատմեց թէ ի՞նչպէս Բօրթօսը գտած
էր անկողնին մէջ, ոտքը ճմլուած և Արամիթը՝ սե-
ղանի մը առջե, երկու տասուածաբաններու մէջտեղ :
Խօսքը առարտելու առ են, պանդոկապետը ներս մ. աւ

պահանջուած շիշերով և ապուխտով, որ բարեբախտաբար չտեմարանէն դուրս մնացած էր :

— Աղէ՛կ, ըստ Աթօս իր և ա'Արդանեանի գաւաթը լեցնելով : Բօրթօսի և Արամիսի գործը պատմեցիք, բայց ձեզի ի՞նչ պատահեցաւ, բարե՛կամս, տիսուր դէմք մը ունիք :

— Աւա՛ղ, ըստ ա'Արդանեան, ձեր ամէնուն մէջ ամէնէն դժբախտը ես եմ:

— Դուն դժբախտ, ա'Արդանեան, ըստ Աթօս: Տեսնենք, ի՞նչո՞ւ դժբախտ եղաք: Պատմէ՛ ինձի:

— Ետքը, ըստ ա'Արդանեան :

— Ետքը, ի՞նչո՞ւ, կը կարծես թէ զի՞նո՞վ եմ, ա'Արդանեան: զիտցիր որ զի՞նի խմած տաենս միայն կ'ունենամ յատակ գաղափարներ: Խօսէ՛ ուրեմն, քեզ մտիկ կ'ընեմ:

Տ'Արդանեան պատմաց Տիկին Պօնասիէօլի դէպքը:

Աթօս մտիկ ըրաւ առանց յօնքերը սկստելու, յետոյ, երբ աւարտեց:

— Ոչի՞նչ բանեք են ասոնք, ըստ Աթօս:

Աթօսի սովորական խօսքն էր աս :

— Դուք միշտ այլպէս կ'ըսէք, սիրելի Աթօս, ըստ ա'Արդանեան: Եւ սակայն պէտք չէ այլպէս ըսէք, քանի որ կին սիրած չէք դուք:

Աթօսի մարած աչքերը մէկէն ի մէկ բոցավառեցան, բայց այս բոցը վայլակի մը պէս անցաւ ու աչքերը դարձեալ առաջուան պէս աղօտ ու անորոշ եղան :

— Ճի՛շտ է, ըստ հանգարտօքէն, Երբեք սիրած չեմ:

— Սյու ատեն կը տեսնէք որ, ըստ ա'Արդանեան, իրաւունք չունիք մեր վագուկ սիրտերուն հանչ զէպ խիստ գտնուելու, դուք որ քարէ սիրտ մը ունիք:

— Փափուկ սիրտերը դիւրաւ կը ծակուին, ըստ Աթօս :

— Ի՞նչ կ'ըսէք:

— Կ'ըսեմ թէ սէրը վիճակահանութիւն մըն է, որուն մէջ շահողը մա՛հը կը շահի: Դուք շատ երջանիկ էք որ կորսնցուցիք, սիրելի ա'Արդանեան, հաւատացէք խօսքիս: Եւ եթէ խորհուրդ մը ունիմ ձեզի տալու, աս է թէ միշտ կորսնցնէք:

— Բայց զիս շատ սիրելու երեւոյթ ունէք:

— Երեւոյթը ունէք միայն:

— Օ՛հ, կը սիրէք:

— Տղա՛յ, չկայ մէկը որ ձեզի որէս հաւատացած չըլլայ թէ իր սիրուհին կը սիրէք զի՞նքը և չկայ մէկը որ իր սիրուհին խարսած չըլլայ:

— Զենէ զատ, Աթօս, քանի որ դուք մէկը սիրած չէք:

— Ճի՛շտ է, ըստ Աթօս պահ մը լուս կենալէ ետք, ես երբեք սիրուհի ունեցած չեմ: Խմե՞նք:

— Բայց քանի որ փիլստոփայ մըն էք, ըստ ա'Արդանեան, հրահանգեցէք զիս, ոյժ տուէք ինձի: Գիտնալու և միսիթարուելու պէտք ունիմ:

— Ի՞նչ բանէ միսիթարուելու:

— Իմ դժբախտութենէս:

— Զեր դժբախտութիւնը ծիծաղ կը շարժէ, ըստ Աթօս ուսերը թոթուելով: Հետաքրքիր էի գիտնալու թէ ի՞նչ պիտի ընէիք եթէ սիրային պատմութիւն մը ընէի ձեզ:

— Զեղի՞ պատահած դէպք մը:

— Կամ իր բարեկամներէս մէկուն, խնդիր չէ:

— Բաէ՛ք, Աթօս, ըսէ՛ք:

— Խմե՞նք, աւելի աղէկ է:

— Խմեցէք և պատմեցէք:

— Աղ կընայ ըլլար, ըստ Աթօս գնաւաթը պար-

պելով և լեցնելով։ Երկու գործը միասին կրնան կատարուիլ սքանչելի կերպով։

— Աթուիլ կ'ընեմ, ըստ տ'Արդանեան։

Աթօս մտամիոփ վիճակ մը առաւ և տ'Արդանեան տեսաւ, որ այդ մտամիոփման պահուն Աթօս կը տժգունէր։ Գինովութեան այն աստիճանին մէջ էր, ուր սովորական խօսդները կ'իյնան կը պառկին։ Իսկ Աթօս բարձրածայն կ'երազէր առանց քնանալու։ Գինովութեան այս քնաշը ըստիւնը զարհուրելի բան մը ունէր։

— Անպատճառ կ'ուզէք որ պատմեմ, հարցուց։

— Կ'աղաջիմ, ըստ տ'Արդանեան։

— Լու՛ւ, թող ձեր ուզածին պէս ըլլայ։ Բարեկամներէս մէկը, կ'իմանա՞ք, բարեկամներէս մէկը և ո՛չ թէ ես, ըստ Աթօս տիուր ժայիտվ մը ընդհատելով խօսքը, իմ գաւառիս կոմսերէն մէկը, այսինքն Տիւ Պէրի, Տանտօլոցի կամ Մօնմօրանսիի մը պէս ազնուական, քսանեւինդ տարու եղած ատեն սիրահարեցաւ տամնեւից տարեկան օրիորդի մը, որ սիրոյ չաստուածուհին պէս գեղանի էր։ Իր տարբիքին միամտութեանը մէջ ունէր եռանդուն ոզի մը ո՛չ թէ կոնջ, այլ սանաստեղծի ոզի մը։ Իր տեսքը հաճուք չէր որ կը պատճառէր միայն, այլ կը զինովցնէր, կ'զգլիսէր։ Գիւղակի մը մէջ կ'ալլըէր իր եղբօրը մօտ, որ երեց էր։ Երկուքն ալ այն գիւղակը եկեր էին, բայց ո՛չ ոքէր գիտեր թէ ո՛ւրկէ եկեր էին։ Միայն թէ աղջիկը այնքան գեղանի ու եղբայրը այնքան բարեպաշտ ու երկիւղած տեսնելով, ո՛չ ոք միտքէն անցուցած էր հարցնել թէ ո՛ւրկէ կուգան։ Եւ յետոյ կ'ըսուէր թէ աղնուական ընտանիքէ էին։ Բարեկամն, որ զիւղին երեւելին էր, կընար աղջիկը հրազուրել կամ բռնի առնել ինչպէս որ ուզէր, որտինետեւ այն տեղի տէրն էր։ Ո՞վ պիտի կընար օգնութեան հաս-

նիլ երկու օտարականներու, երկու անծանօթներու։ Դժբախտաբար պարկեցաւ մարդ մըն էր և ամուսնացաւ անոր հետ։ Յիմա՞բը, տիմա՞բը, աղո՞ւշը։

— Բայց ինչո՞ւ, քանի որ կը սիրէր, հարցուց տ'Արդանեան։

— Սպասեցէք, ըստ Աթօս։ Իր դղեակը տարաւ ու այն գաւառին առաջին տիկինը ըրաւ զայն։ Պէտք է արդար ըլլալ և ըսել որ կոմսուհին զիացաւ իր աստիճանը պահել։

— Ե՞տքը, հարցուց տ'Արդանեան։

— Օրին մէկը երբ որսի ելած էր իր ամսւանին հետ, շաբունակեց Աթօս ցած ձայնով և արագ արագ խօսելով, ձիէն ինկաւ ու նուաղեցաւ։ Կոմոր անոր օգնութեան վաղեց և որովհետեւ հագուստաները կը նեշ զէին զինքը, իր դաշնութը պատուեց զանոնք և ուսը բացաւ։ Դուշակեցէք, տ'Արդանեան, թէ ի՞նչ ունէր ուսին վրայ, ըստ Աթօս քան քան ինդալով։

— Ի՞նչպէս գուշակիմ, ըստ տ'Արդանեան։

— Ծուշանակ խարան մը կար։

Եւ Աթօս մէկ ումզով պարպեց ձեռքը բռնած գաւաթը։

— Սոսկում, պոռաց տ'Արդանեան։ Առ լինչ էր որ ըսիք։

— Ճշմարտութիւնը։ Հրեշտակը դե մըն էր, սիրելիս։ Թշուառ աղջիկը գողութիւն ըրան էր։

— Կոմոը ի՞նչ ըրաւ։

— Կոմոը մէծ անձնաւորութիւն մըն էր։ Իր երկուն մէջ բացարձակ իշխանութիւն ունէր։ Կոմուուհին զգեստները պատառ պատառ ըրաւ, ձեռքերը ետին կապեց ու ծոռէ մը կախեց։

— Տէ՛ր Ասուած։ Սպանութիւն մը, Աթօս, պոռաց տ'Արդանեան։

— Այս՝ սպանութիւն մը, ո՛չ աւելի, ըստ Ա-

թօս մեսելի պէս աժդունած : Բայց կարծեմ թէ զի՞նի՞ն
հասաւ :

Եւ Աթօս վէրջին շիշը բերնին մօտեցուց և մէկ
ումսով խմեց, որպէս թէ սովորական գաւաթ մը
ըմար :

Յետոց գլուխը երկու ձեռքերուն մէջ առաւ :
Տ'Արդանեան անոր առջև մնաց ահարեկ :

— Այս դէռքը պատճառ եղաւ որ գեղանի, բա-
նաստեղծական և սիրատարի կիները աչքէս ելան,
ըստ Աթօս գլուխը վերցնելով և առանց կոսմին
պատմութիւնը շարունակել մտածելու : Աստուած ձեզի
ալ այնպէս ընէ : Խմենք :

— Բսել է որ կինը մնաւ, թոթովեց ո՛Արդան-
եան :

— Հարկաւ, պատասխանեց Աթօս : Բայց գաւաթ-
նիդ երկնցուցէք : Խոզի ալուխա բերէ՛ք, որուաց
Աթօս, ա՛լ չենք կրնար խմել :

— Եղբաջը ի՞նչ եղաւ, աւելցուց ա՛Արդանեան
երկնցութեամբ :

— Եղբաջը, հարցուց Աթօս :

— Այս, քահանան :

— Ա՛ն, փնտռեցի զայն, որպէսզի կախել տամ :
Բայց անիկա առջի օրուընէ փախեր էր :

— Գոնէ հասկցուեցա՞ւ թէ ո՛վ էր այդ թշուա-
ռականը :

— Անշուշտ գեղանի աղջկան առաջին սիրահարը
և մերակիցն էր, արժանընտիր մարդ մը, որ երեց
ձեւացեր էր թերես իր սիրունին ամուսիցնելու և
անոր բախտը շինելու համար :

— Օ՛ն, Աստուած իմ, Աստուած իմ, ըստ ա՛Ար-
դանեան, ոյս սոսկակի արձիածէն ապշա՞ռ :

— Բայց սա խոզի ապսէխտէն չուտէ՞ք, ա՛Ար-
դանեան, ընտիր անսակէ է, ըստ Աթօս, շերտ մը

կարելով և երիտասարդին պնակին մէջ դնելով : Ի՞նչ
դժբախտութիւն որ շտեմարանին մէջ չորս հաս չկայ
ասկէ : Ան ատեն լիսուն շիշ աւելի կը խմէի :

Տ'Արդանեան այլ ևս չէր կրնար հանգութեալ
այս խօսակցութեան, որ խմելը գլխին պիտի առնէր :
Գլուխը երկու ձեռքերուն վրայ դրաւ և քնանալ ձե-
ւացուց :

— Երիտասարդները գինի խմել չեն գիտեր, ըստ
Աթօս կարեկից ակնարկ մը ձգելով ա՛Արդանեանի
վրայ և սակայն ասիկա ամէնէն աղէկն է :

Պ.

Վ Ե Բ Ա Դ Ա Ր Զ

Տ'Արդանեան Աթօսի սոսկակի խոստովանութենէն
աղջած մնացած էր : Ակայն տակաւին կարգ մը բա-
ներ մութ կ'երեւային իրեն այս կէս յայտնութեան
մէջ : Եակի՝ այս դէպքը բուռուսին գինով մարդու մը
կողմէ պատմուած էր մէկու մը, որ կէս գինով էր և
սակայն, հակառակ անոր որ Պուրկօների երկու երեք
շիշ զինիին չողին պաշտամծ էր իր ուղեղը, ա՛Ար-
դանեան, հետեւեալ առառւն արթննալով, ըստ առ
ըստ կը միշէր Աթօսի խօսքերը, որպէս թէ անոր
բերնէն ելած բառերը իի մաքին մէջ դրոշմուած ըլ-
լային : Այս ատրակոյսը աւելի ջերմ փափաք մը ներ-
շնչեց իրեն ստուգութիւնը հառկնալու և բարեկամին
սենեակը գնաց, միտքը հաստատապէս դրած ըլլալով

բանալ առջի օրուան խօսակցութիւնը։ Բայց Աթօսը գտաւ բոլորովին սթափած վիճակի մէջ, այսինքն մարդոց ամէնէն նրբամիւն ու անթափանցելին։

Արդէն հրացանակիրը, իր բարեկամին ձեռքը սեղմալէ ետք, առաջին անգամ ինք բացաւ խօսակցութիւնը։

— Երէկ շատ զինով էի, սիրելի ա'Արդանեան, ըստու։ Այս առտու հասկցաց, որովհետեւ լեզուս շատ թանձր էր և բազկերակս անկանոն վիճակ մը ունէր։ Դրաւ կը դնեմ որ հազար տեսակ անհեթեթ խօսքեր ըրի։

Այս խօսքերը ըսելով, բարեկամին երեսը նայեցաւ այնպիսի անքթիթ ակնարկով մը, որ ա'Արդանեան շփոթեցաւ։

— Բայց ո՛չ, պատասխանեց երիտասարդը, ու եթէ լաւ կը յիշեմ, շատ սովորական բանէր ըսիք։

— Ա՛հ, կը զարմացնէք զիս, կը կարծէի թէ խիստ ողբալի պատմութիւն մը ըրի ձեզի։

Եւ երիտասարդին երեսը կը նայէր, որպէս թէ կ'ուզէր անոր սրտին խօրը կարգալ։

— Իրա՛ւ որ, ըստու ա'Արդանեան, կ'երեայ թէ հս ձեզմէ աւելի զինով էի, քանի որ բան մը չէմ յիշեր։

Աթօս չհաւտաց այս խօսքին և աւելցուց։

— Անշուշտ զիտեցիք, սիրելի բարեկամս, թէ ամէն ոք զինովալու իր եղանակը ունի, ախուր կամ զուարթ։ Ես զինովալուս պէս կը տիրիմ ու դ'ակում պատմել բոլոր այն տիրաշունչ պատմութիւնները, զոր իմ յիմար սահառու դրոշմած է մտքիս մէջ։ Իմ թերութիւնս աս է, մեծ թերութիւն մը, կը խոստովանիմ։ Բայց, աղկէ դուրս, լաւ խմող մըն եմ։

Աթօս այս խօսքերը ըստու այնքան բնականորէն որ ա'Արդանեանի համոզումը խախտեցաւ։

— Օ՛հ, ուրեմն ատոր համար է որ, աւելցուց եւ րիտասարդը, երազի պէս կը յիշեմ թէ կախուողներու խօսք ըրիք։

— Ա՛հ, կը տեսնէ՞ք, ըստու Աթօս տժգունելով և սակայն փորձելով խնդալ։ Վսահն էի։ Կախուողները իմ մղձաւանջու են։

— Այո՛, այո՛, աւելցուց ա'Արդանեան, միաքս կուգայ, այո՛, խնդիրը ։, բայց կեցէք քիչ մը ։ Խնդիրը կնոջ մը վրայ էր։

— Կը տեսնէ՞ք, պատասխանեց Աթօս որէթէ կապարի զոյն առնելով, խարտեաչ կնոջ պատմութիւնն է, զոր չափազանց զինով եղած ատենու կը պատմեմ։

— Այո՛, ձիշտ է, ըստու ա'Արդանեան, խարաեաչ, բարձրահասակ, գեղանի, կապոյտ աչքերով կնոջ մը պատմութիւնը։

— Այո՛, կախուած կնոջ մը։

— Իր ամուսնին կողմէ, ոք ձեզի ծանօթ մեծ անձնաւորութիւն մըն էր, շարունակեց ա'Արդանեան Աթօսի երեսը նախելով անքթիթ։

— Լա՛ւ, անսէք սակացն թէ ի՛նչ ընելը չգիտցող մէկը ինչպէս կը վասնգէ ուրիշը, աւելցուց Աթօս ուսերը թոթուելով, որպէսթէ կարեկցութիւն կ'զգար։ Ա՛ւ չեմ ուզեր զինովնալ, ա'Արդանեան, շատ գէշ սովորութիւն մըն է ասիկա։

Տ'Արդանեան լուռ կեցաւ։

Յեւ ոյ, Աթօս, յանկարծ խօսակցութիւնը փխելով, ըստու։

— Աղէկ միաքս եկաւ, շնորհակալ և մ ձիւն հաւմար զոր բերիք ինծի։

— Հաւնեցա՞ք, հարցուց ա'Արդանեան։

— Այո՛, բայց յոդնութեան վարժուած ձի մը չէ։

— Կը սխալիք։ Մէկուկէս ժամէ պակաս միջոցի

մէջ տասը մղրն ճամբար քոլեց և կարծեռ թէ Սէն
Ախուրիսի հրապարակին շըջանը ըրած էր միայն։
— Ա՛հ, ցաւ կը պատճառէք ինձի։
— Ցարւ։
— Ա՞մ, որովհետեւ ձին ձեռքէս ելաւ։
— Ի՞նչպէս։
— Անա իրողութիւնը։ Այս աստու ժամը 6ին
արթնցայ։ Դուք խորունկ քունի մէջ թաղուած էիք։
ի՞նչ ընելս չէի գիտեր։ Երէկուան մեր չափազան-
ցութիւնէն խելքս գլուխս եկած չէր տակաւին։ Մեծ
սրահը իջայ և տեսայ սր մըր անգլիացիներէն մէկը¹
ձի մը կը սակարկէք, իրը մեռած րլլալով երէկ։ Մօ-
տեցայ իրեն և որովհետեւ լոեցի թէ աշխէտ ձիու մը
համար հարիւր ոսկի կուտար, ըսի իրեն, աղնուա-
կո՞ն, ես ալ ծախու ձի մը ունիմ։
— Եւ նոյն իսկ շատ գեղեցիկ ձի մը, ըստու,
երէկ ահասյ, ձեր բարեկամին սպասառորը անոր սահ-
ճէն բանած էք։
— Կը կարծէ՞ք թէ ալդ գի՞նը կ'արժէ։
— Այո՞ւ, Կ'ուղէ՞ք այդ գինով ծախել։
— Ո՛չ, չեմ ծախեր, այլ կը խաղամ, և եթէ
յողթէք ինձի, ձերը կ'ըլլայ։
— Կը խաղա՞ք։
— Այո՞ւ։
— Ի՞նչ խաղանք։
— Եաբու։
Խոսքը գործի փոխեցինք և ձին կորսոցացի։
— Բայց շորոշուինց Աթօն, ծածկոյթը շահեցաւ
ոսորէն։
Տ'Արդանեան երեսը կախեց։
— Աբանեղեցա՞ք, ըստու Աթօն։
— Բայց այսու կը խոստուինիմ, աւելցուց ա՛Ար-
դանեան, այդ ձին ճակատահորտի մէջ մեզ ճանչցը-

նելու պիտի ծառալէք։ Գրաւ մը, յիշառակ մըն էք
ան։ Աթօն, արէկ չըրիք։
— Է՛հ, սիրելի բարեկամս, գուք իմ տեղս եղիք,
աւելցուց հրացսնակիրը։ Զանձրութենէս կը մասնէի։
Եւ յետոյ, պատուի վրայ կ'ըստմ թէ ևս անպլիական
ձիերը չեմ սիրեր։ Տեսնենք, եթէ ինդիրը մէկու մը
կողմէ ճանչցուելուն վրայ է, լա՛ւ, թամբը կը բաւէ,
բաւական ուշագրաւ է անիկա։ Գալով ձիուն, պատ-
ճառ մը կը գտնենք անոր անհետացումը արդարա-
ցնելու համար։ Զի մը ճանկանացու է վերջապէս։ Են-
թագրենք որ իմս խլինք կամ քսա ունեցեք է։
Տ'Արդանեան գէմքին արտաքայտութիւնը չփո-
խեց։
— Շատ կը սրանեղիմ, շարաւնակեց Աթօն, որ
այդ կենդանիներուն արդքան կապուած կ'երեաք,
վասնզի պատմութիւնո չաւրաւեցի գեռ։
— Ուրիշ ի՞նչ ըրիք։
— Տասնի գէմ իննոն իմ ձիս, կորսոցնելէ ետք,
ինելքիս վչեց ձեր ձիուն վրայ խաղալու։
— Այո՞ւ, բայց յաւսամ թէ չգործադրեցիք։
— Անմիջապէս գործադրեցի։
— Ա՛հ, պառաց տ'Արդանեան մահագ։
— Խաղացի և կարսնցուցի։
— Ի՞մ ձիս։
— Զեր ձին։ Ութի գէմ եօթը, մէկ խաղ պա-
կասով։
— Աթօն, կ'երգնում որ ձեր ողջմասութիւնը տէք
չէք։
— Աիրելիս, այդ խօսքը երէկ ըսելու էիք ինձի
երը խոնդուխելառ պատմութիւններ կ'ընէի ձեզ և
ո՛չ թէ այս առառ։ Հետեւապէս ձեր ձին կարսնցուցի
իր բոլոր կազմածներով։
— Բայց ահսելի բան է։

— Ապասեցէք, չլմնշտւ : Քաջ խաղացող մը պիտի ըլլակի եթէ չխամառէի, բայց կը յամառիմ, ինչպէս խմած ատենս : Ուստի յամառեցայ . . . :

— Բայց ի՞նչ բանի համար խաղացիք, ա'լ բան մը չունէիք :

— Ունէի, բարեկամս, ունէի : Մեզ կը մնար այն աղամանդը, որ ձեր մատին վրայ կը փայլի և զոր երէկ նշմարած էի :

— Այս աղամանդը, պոռաց ա'Արդանեան, ձեռքը անմիջապէս մատնիին տանելով :

— Եւ որովհետեւ աղամանդէ կը հասկնամ, քանի որ ես ալ ունեցած եմ, հազար սոկի գնահատած էի զայն :

— Յուսամ թէ իմ աղամանդիս յիշասակութիւնը չըրիք, ըստ ա'Արդանեան լրջութեամբ, սարսափէն կիսովին մնած :

— Ընդհակառակը, սիրելի բարեկամ: Կը հառ կընաք թէ մեր միամ միջոցն էր այդ աղամանդը, որով կրնացի շահիլ մեր ձիերն ու ասպազէնները, նաև դրամ, մեր ճամբան շարունակելու համար :

— Աթօ'ս, սարսուռ կը պատճառէք ինձի, պոռաց ա'Արդանեան:

— Ուստի ձեր աղամանդին խօսքը ըրի խաղակիցիս, որ ի՞նք ալ զիսած էր: Ի՞նչ կ'ուզէք, սիրելիս, երկինքին մէկ աստղը կը կրէք ձեր մատին վրա և կը փափաքիք որ ուշադրութիւն չընե՞ն: Անկառ, բելի է:

— Աւարտեցէք, սիրելիս, աւարտեցէք, ըստ ա'Արդանեան, վասնզի, պատույս վրայ կ'ըսեմ որ կը մեոցնէք զիս ձեր պաղարիւնութիւնով :

— Ուստի այդ աղամանդը տասը մասերու բաժնեցինք, խրաքանչիւրը հարիւր սոկի:

— Ա'ն, կ'ուզէք խնդալ և փորձել զիս, ըստ

ա'Արդանեան, որուն բարկութիւնը սկսած էր բոհել մազերէն, ինչպէս իլիականին մէջ Աթենաս կը բոնէ Աքիլլէսի մազերէն :

— Ո'չ կատակ չեմ ըներ, հաւատացէք: Ես կ'ուզէի տեսնել թէ դուք ի՞նչ պիտի ընէիք եթէ իմ տեղս ըլլայիք: 15 օրէ ի վեր մարդու երես տեսած չունէի և շիշերու հետ բերան բերնի տալով անբահացեր էի:

— Ատիկա պատճառ մը չէ որ իմ աղամանդիս վրայ խաղաք, պատասխանեց ա'Արդանեան ձեռքը ջղային գալարումով մը սեղմելով :

— Վերջաւորութիւնը մաիկ ըրէք: Հարիւր ուսկինոց տասը մասերը տասը խաղով շահեցայ: Տասներեւք ուրուզգին՝ ամէնքը մէկ կորսնցուցի: 13 թիւը միշտ աղետարնը եղած է ինձի: Յուլիսի 13ին էր որ . . . :

— Իե՛րը անիծածո, պոռաց ա'Արդանեան, սեղանէն ելլելով, որովհետեւ նոյն օրուան պատճութիւնը առջի օրուանը մոոցնել տուած էր իրեն:

— Համբարութիւն, ըստ Աթօս: Ծրագիր մը ունէի: Անգլիացին ինքնատիպ մարդ մըն էր, առտուն տեսաց որ կոիմոյին հետ կը խօսէր և կոիմո իմացուց ինձի որ իրեն առաջարկած էր իր քով ծառայելու: Ուստի ես ալ կաիմալի վրայ խաղացի, տասը մասերու բաժնելով զայն:

— Ա'ն, այս անդամ չափը անցուցիք, ըստ ա'Արդանեան քան քան ինդալով ակամայ:

— Կոիմոյի վրայ խաղալով, կ'իմանաք, կոիմոյի տասը մասերով, որոնց ամենքը զահեկան մը չարժեք, աղամանդը շահեցայ: Էսէք հիմա թէ յարատեւութիւնը ասաքինութիւն մը չէ:

— Իրաւ որ շատ զուարձալի է, պոռաց ա'Արդանեան միսիթարուելով և խնդալէն կուշտերը բանելով:

— Կը հասկնաք թէ, բախտս բացուած տեսնելով,
անմիջապէս աղամանդին վրայ խաղացի նորէն:

— Ա՛ն, չա՛ր սատանայ, ըստ ա՛Արդանեան նորէն տիրելով:

— Զեր ձիուն ասպազէնները շահեցայ, յետոյ ձեր ձին, յետոյ իմ ձիուս ասպազէնները, յետոյ իմ ձիս: Յետոյ նորէն կորսնցնելէ ետք, կը փափաքիմ գոնէ ասպազէնները պահել:

— Ան ատեն ձեր աղամանդին վրայ խաղացէք: Ան այս վիճակին մէջ ենք: Մքանչելի խաղ մըն է: Ուստի այսչափով գոն եղայ:

Տ'Արդանեան չունչ տուու, իրը թէ պանդրկը վերցուցած ըլլալին կուրծքին վրայէն:

— Վերջապէս աղամանդը ինձի մնաց, չէ՞ ըստ երկչուութեամբ:

— Անվթար, սիրելի բարեկամս, ձեր և իմ ձիւն ասպազէններն ալ՝ բացէն:

— Բայց ասպազէնները ի՞նչ ընենք առանց ձիի:

— Անոնց մասին գաղափար մը ունիմ:

— Աթօ՛ս, սարսուռ կը պատճառէք ինձի:

— Մտիկ ըրէք, երկար ատենէ ի վեր չէք խաղացած, այսպէս չէ՞ ա՛Արդանեան:

— Եւ խաղալու ալ փափաք չունիմ:

— Երդում չընենք: Կ'ըսէի թէ երկար ահնէ ի վեր խաղացած չէք և հետեապէս բախտերնիդ բաց պիտի ըլլայ:

— Լա՛ւ, ե՞տքը:

— Անգլիացին և ընկերը տակաւին հոն են: Դիւտեցի որ շատ կը ցաւէր ասպազէններուն համար: Դուք ալ ձեր ձիուն համար կը ցաւիք: Եթէ ես ձեր տեղը ըլլայի, ձեր ձիուն դէմ կը խոտայի ասպազէնին վրայ:

— Բայց մէկ ասպազէնը պիտի չուզէ:

— Երկուքին վրայ խաղացէք: Ես ձեզի պէս հասուէք չեմ:

— Դուք կը խաղայիք, ըստ ա՛Արդանեան վարանելով, որովհետեւ Աթօսի վատահութենէն կը գրաւուէր ակամալ:

— Պատւոյս վրայ կ'երդնում որ կը խաղայի:

— Բայց ձիերը կորսնցնելէ ետք, կը փափաքիմ գոնէ ասպազէնները պահել:

— Ան ատեն ձեր աղամանդին վրայ խաղացէք:

— Ո՛հ, ագ ուրիշ բան, անոր վրայ երբեք չեմ խաղար:

— Չա՛ր սատանայ, ըստ Աթօս, պիտի առաջարկէի Բլանչէի վրայ խաղալ, բայց որովհետեւ, բայց որովհետեւ անգամ մը եղաւ, թիրեւս անգլիացին չուզէ այլեւա:

— Երաւ որ, սիրելի Աթօս, ըստ ա՛Արդանեան, աւելի կը նախըարեմ բանի մը վրայ չխաղալ:

— Մե՛զք, ըստ Աթօս պարզ օրէն, Անգլիացին ոոկիի մէջ թաթխուած է: Է՛ն Աստուած իմ, խաղ մը փորձեցէք: Մէկ խաղը չուտով կը լմնայ:

— Եթէ կորսնցնե՞մ:

— Պիտի շահիք:

— Բայց եթէ կորսնցնե՞մ:

— Լա՛ւ, ասպազէնները կուասք:

— Լա՛ւ, մէկ խաղ պիտի փորձեմ, ըստ ա՛Արդանեան:

— Աթօս անգլիացին վիճակեց և գուաւ դայն աշխուին մէջ, ուր ասպազէնները կը քննէր ընչափազց ակնարկով մը: Ասիթը լաւ էր: Պայմանները արտաջարեց: Մէկ ձիու կամ հորիւր ոսկիի զէմ երկու ասպազէնները, ինչպէս որ ուզէտ: Անգլիացին չուտով հաշիւ ըրաւ: Երկու ասպազէնները երեք հարիւր ոսկի կը կարմէն: Ուստի հաւանեցաւ:

ա՛Արդանեան քաւեաները (զար) նետեց տողալով ու երեք թիւ ելաւ: Իր գունատութենէն զորհուրեցաւ Աթօս, որ ըստ:

— Ահա յոռի թիւ մը, ընկե՛ր: իսկ դուք, պարո՞ն, ձիերուն ասպազէնները պիտի չահիք:

Անգլիացին, յաղթական ըլլալուն համար, քըւեաները դարձնելու վայթ իսկ չըրաւ: Նետեց սեղանին վրայ առանց նայելու, այնքան վասան էր յաղթութեան վրայ: Տ'Արդանեան անդին դարձած էր իր որտնեղութիւնը ծածկելու համար:

— Տեսէք, տեսէք, ըստ Աթօս իր հանդարաբայնովը, այս խաղը տարօրինուի է և կեանքիս մէջ չորս անդամ միայն տեսած եմ: Երկու մէկնո՞ց:

Անգլիացին նայեցաւ և զարմանքի մատնուեցաւ: Տ'Արդանեան նայեցաւ և հաճոյք զգաց:

— Այո՛, շարունակեց Աթօս, չորս անդամ միայն, մէյ մը Մ. աը Քրէքիի տունը, մէյ մը իմ տունս, գիւղը, դղեակիս մէջ . . ., երբ դղեակ մը ունէի, երբորդ անդամ Մ. աը Դուէվիլի տունը, ուր ամենքուալ անսակնկալի եկանք, և վերջապէս չորրորդ անդամ ըլլալով կապելայի մը մէջ, ուր ասանկ թիւ մը ինձի պատահեցաւ և հարիւր ոսկի ու ձաշ մը կորսնցուցի:

— Ուրեմն ձին ետ առիք, պարո՞ն, ըստ անդամացին:

— Անշուշտ, պատասխանեց տ'Արդանեան:

— Փոխարէն պիտի չխաղա՞նք:

— Մեր պայմանին մէջ, ինչպէս կը յիշէք, ասանկ պայման չկար:

— Ճիշտ է: Ձին պիտի յանձնուի ձեր սպասաւորին, պարո՞ն:

— Վայրկեան մը, ըստ Աթօս: Զեր արտօնութիւնովը, պարո՞ն, խօսք մը պիտի ըսեմ բարեկամիս:

— Բայէ՛ք:

Աթօս մէկ կողմաւարաւ տ'Արդանեանը:

— Է՛, նորէն ի՞նչ կ'ուղես ինձմէ, փորձի՛չըստ տ'Արդանեան, կ'ուղես որ խաղամ, չէ՞:

— Ո՛չ, կ'ուղեմ որ մտածէք:

— Ի՞նչ բանի վրայ:

— Ձին ետ պիտի առնէք, չէ՞:

— Անշուշտ:

— Սխալ կ'ընէք: Ես հարիւր ոսկին կը նախընտըէի: Գիտէք թէ ասպազէններուն փօխարէն կա՞մ ձին պիտի առնէիք կամ հարիւր ոսկին, ինչպէս որ ուղէիք:

— Այո՛:

— Ես հարիւր ոսկին կ'առնէի:

— Իսկ ես ձին կ'առնեմ:

— Նորէն կ'ըսեմ թէ սխալ կ'ընէք: Մէկ ձին ի՞նչ պիտի ըսենք երկու հոգիի համար: Ես չեմ կը ըստ գաւակին վրայ նստիլ: Ան ատեն պիտի նմանէինք Այժմոնի երկու որդիներուն, որոնք իրենց եղբայրը կորսնցուցին: Զէք կընար նուաստացնել զիս, այդ շքեղ ձիուն վրայ նստելով և քովէն քալելով: Ես հարիւր ոսկին կ'առնէի առանց վայրկեան մը խակ վարանելու: Բարիղ դառնալու համար դրամի պէտք ունինք:

— Այդ ձին ետ ամենելու կը փափաքիմ, Աթօ՛ս:

— Եւ սխալ կ'ընէք, բարեկամս: Զի մը կընայ խըտչիւ սահիլ ծունկը սկրթիլ կընայ խընու ձիու մը մատուրին մէջն ուտել: Այն ատեն ձի մը կամ մանաւանդ հարիւր ոսկի կորսնցուցած պիտի ըլլաք: Պէտք է որ տէրը իր ձին մնուցանէ, մինչ ընդհակառակը հարիւր ոսկիները իրենք կը մնուցանեն իրենց տէրը:

— Բայց ի՞նչպէս պիտի դառնանք Բարիղ:

— Մեր սպասաւորներուն ձիերովը, ի՞նչ կ'ըլլայ: Մեր կերպարանքը տեսնողը պիտի հասկնայ թէ ազնուական ենք:

— Ի՞նչ աղուոր կերպարանք պիտի սւնենանք

գրաստներու վրայ, մէջ Արամիս և Բօրթօս իրենց
գեղեցիկ ձիերուն վրայ պիտի ձախրեն:

— Արամի՛ս, Բօրթօս, պոռաց Աթօս և սկսած
խնդալ:

— Ի՞նչ կաջ, հարցուց ա'Արգանեան, որ բան մը
չէր հասկնար իր բարեկամին, զուարթութենէն:

— Լա՛ւ, լա՛ւ, շարունակենք, ըսաւ Աթօս:

— Բոել է որ ձեր կարծիքը . . . :

— Իմ կարծիքս սա է որ պէտք է հարիւր ոսկին,
առնենք, ա'Արգանեան: Հարիւր ոսկիով մինչեւ ամ-
սուն վերջը կրնանոր խնջուքներ սարքել: Յոզնու-
թիւններու ենթարկուեցանք, ինչպէս կը տեսնէք, և
աղէլ է որ քիչ մը համոզչինք:

— Ես հանգի՞մ, օ՛հ, ո՛չ, Աթօս, Բարիզ երթա-
ւուս պէս այն խեղճ կինը փնտուելու պիտի ելլեմ:

— Լա՛ւ, կը կարծէ՞ք թէ ձեր ձին աւելի օգտա-
կար պիտի ԸԱյց այս գործին համար քան թէ հարիւր
ոսկին: Հարիւր ոսկին տուք, բարեկամո, հարիւր
ոսկին առէք:

Տ'Արգանեան պատճառի մը միայն պէտք ունէր
միտքը փոխելու համար: Այս պատճառը սքանչելի եւ-
րեցաւ իրեն: Եւ յետոյ, աւելի ողնոյնով կը վախնար
թէ հասկէր կ'երեաք Աթօսի աչքին: Ուստի հաւանե-
ցաւ և ընարեց հարիւր ոսկին, զոր անգլացին իս-
կոյն վարեց:

Եւտոյ այլիւս ձամբայ ելլելու վրայ միայն մաս-
ծեցին: խաղաղութիւն կ'աքուիլը արժեց վեց ոսկի,
Աթօսի ձիէն զատ: Տ'Արգանեան և Աթօս Բլանշէի և
Կոիմոյի ձիերը տոին և երկու սպասաւորները հետի-
ուն ձամբայ ելան, թամբերը իրենց գլուխին վրայ
առած:

Որքան ալ անովիան էին երկու բարեկամներուն
ձիերը, Աթօս և ա'Արգանեան շուտով անցան իրենց

սպասաւորները և ժամանեցին Քաէվքէօս: Հեռուէն
նշամարեցին Արամիսը, որ մելամաղաւթեամբ կրթնած
էր պատուհանին և փոշելից հորիզոնը կը դիտէր ոյր իմ
Աննայի պէս:

— Է՛յ, Արամիս, ի՞նչ կ'ընէք հոդ, ոլուացին եր-
կու բարեկամները:

— Ա՛ն, դո՞ւք էք, ո՞՛լրդանեան, դո՞ւք էք,
Աթօս, ըսաւ երիտասարդը: Կը խորհի թէ այս աշ-
խարհի ինչքերը ո՞րպիսի արագութիւնով կ'անհետա-
նան և իմ անգլական ձիս, որ կը հեռանար և փոշիի
ամպի մը մէջ կ'ահետանայ ահաւասիկ, այս աշխարհի
իրերուն անհասատութեան կենդանի մէկ պատկիրը
կը ներկայացնէր ինծի: Կեանքը կրնայ երեք բառի
մէջ ամփափուիլ րա, էտ, նու:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, հարցուց ա'Արգանեան, որ
կամաց կամաց կ'սկսէր հասկնալ ճշմարտութիւնը:

— Բոել կ'ուզիմ թէ քիչ մը տաջ սակարկու-
թիւն մը ըրի և խարուեցայ: Վաթուն ոսկիի ծա-
խեցի ձի մը, որ իր վազելու եղանակին դատելով
ժամը հինգ մզոն կրնայ առնել սրարշաւ:

Տ'Արգանեան և Աթօս քան քան խնդացին:

— Սիրելի ա'Արգանեան, ըսաւ Արամիս, կ'աղա-
չեմ, զիս մի՛ մեղադրէք, հարկը օրէնքը կը լուծէ:
Եւ յետոյ, առաջին պատժուողը ես եմ, քանի որ այն
գարշելի ձիավաճառը առնուազն չկուն ոսկի զողցաւ
ինձմէ: Ա՛ն, դուք լաւ տնտեսողներ էք, ձեր սպա-
սաւորներուն ձիերովը կ'ուզերիք ու ձեր գեղեցիկ
ձիերը ձեր եասէն բերել կուտաք ծանր ծանր:

Նոյն պահուն սայլ մը, որ քանի մը վարկեանէ
ի վեր Ամիէնի ձամբուն վրայ կ'երեար, կ'անգ առած
և կոիմօ ու Բլանշէ վար իջան, թամբերը զլուխնուն
վրայ դրած: Աայլը Բարիզ կը գահար պարապ և եր-

կու սպասաւորները յանձնառու եղած էին դինի
խմբնել սպասարկանին, եթէ զիրենք փոխադրէր:

— Ի՞նչ է աս, ըստ Արամիս անցած դարձածը
տեսնելով: Մինակ թամբերը մնացին:

— Հասկցա՞ք հիմա, ըստ Աթոս:

— Բորբոքամնե՞րս, ճիշտ ինձի պէս ըրեր էք:
Ես ալ բնապումով պահեցի թամբը: Է՞յ պա՛զէն,
նոր թամբս այս պարոններոն թամբին քով տար:

Երևցները ի՞նչ ըրիք, հարցուց տ'Արդանեան:

— Սիրելիս, հետեւեալ օրուան համար ձաշի հրա-
ւերեցի զանոնք, ըստ Արամիս: Հոս ընտիր դինի
կայ: Կրցածիս չափ գինովցուցի զանոնք: Այն տան-
երեցը պատուիրեց որ տառատիկս չհանեմ, իսկ յիշ-
ուուեանը խնդրեց ինձմէ որ աշխատիմ զինքը հրա-
ցանակիր ընդունել տալու:

— Առանց բնաբանի, պոտաց տ'Արդանեան, ա-
ռանց բնաբանի: Բնաբանին ջնջումը կը պահանջեմ:

— Անկէ ի վեր, շարունակեց Արամիս, ախորժե-
լի կեանք մը կը վարեմ: Միավանի ստանաւոր բա-
նաստեղծութեան մը սկսայ, բաւական դժուար է,
բայց ամէն բանի համար արժանիքը դիտաւորութեան
մէջ է: Նիւթը սիրավին է: Ասացին երդը պիտի կար-
դամ ձեզի: Չորս հարիւր տող է և վայրկեանէ մը
կ'աւարտի:

— Իրա՛ւ որ, սիրելի Արամիս, ըստ տ'Արդան-
եան, որ լատիներէնին չափ կ'ատէր ստանաւորը,
գժուարութեան արժանիքին վրայ աւելցուցք համա-
ստութեան արժանիքը և այն ատեն վատահ կ'ըլլաք
թէ ձեր բանաստեղծութիւնը երկու արժանիք պիտի
ունենայ:

— Յետոյ, շարունակեց Արամիս, պարկեշտ զզա-
ցումներ կը ներշնչէ, ինչպէս պիտի տեսնէք: Բայց
կ'ցիք, բարեկամներս, Բարի՞զ պա՞ր: Դում'

վո, ես պատրաստ եմ: Բօրթօսը պիտի տեսնենք:
Աւելի աղէկ: Անշուշտ չէք կարծեր թէ մոռցած էի
մեր միամմա բարեկամը: Անիկա իր ճիշտ չի ծախե՞ր
եթէ նոյն խակ թագաւորութիւն մը տան իրեն: Կը
փափաքիմ տեսնել զինքը ձիուն վրայ: Վատահ եմ թէ
Մեծ Մօկոլին կերպարանքը պիտի ունենայ:

Ժամ մը գաղար ըրին ձիերուն շունչ առնել տա-
լու համար: Արամիս հաշիւը մաքրեց, Պաղէնը սայլին
մէջ գրաւ իր ընկերներուն հետ և ձամբայ ելան Բօր-
թօսը գտնելու համար:

Բօրթօս ստք ելեր էր, տ'Արդանեանի առաջին
անգամ տեսածէն նուազ տժոյն: Նատած էր սեղանի
մը առջև, ուր չորս հոգիի կերպուր կար, թէև ինք
առանձին էր: Ձաշը կը բաղկանար մսեղէնէ, ընտիր
դինիէ և հիանալի պատուղներէ:

— Ա՛ն, աղէկ ատենին եկաք, պարոններ, ըստ
Բօրթօս ստք ելլելով: Ես ալ ապուրը խմելու վրայ
էի: Ինձի հետ պիտի ճաշէք:

— Ո՛հ, օ՛հ, ըստ տ'Արդանեան, անշուշտ Մուս-
քոնը չէ որ այս չիշերը որացած է: Յետոյ ահա-
ւասիկ խոզի ճարպով խորշած որթի միս, եղան
ֆիերո...

— Ինքզինքս կազդուրելու կը ջանամ, ըստ
Բօրթօս: Սա անիծեալ ձմլումները ո'րքան կը տկարա-
ցնեն մարդը: Դուք ձմլում ունեցած էք, Աթօն:

— Բնաւ: Միայն կը ճիշտ թէ Ֆէրու փողոցի
մեր կոփիւն մէջ սուրի հարուած մը ստացայ, որ 15
կամ 18 օր ճիշտ նոյն արդիւնքը առաջ բերաւ:

— Բայց այս ճաշը մինակ ձեզի համա՞ր էր, սի-
րելի Բօրթօս, հարցուց Արամիս:

— Ո՛չ, ըստ Բօրթօս: Կ'սպասէի քանի մը դրա-
ցի աղնուականներու, որոնք լուր դրկեցին թէ ճաշի
պիտի չգան: Դուք անոնց տեղը կը բռնէք և ես բան

մը չեմ կորսնցներ այս փոփոխութենէն : Ե՞ր Առ' ևս
քղօն, աթոռ բե՛ր և ըսէ՛ որ գինիի շիշերը կրկնա-
պատկեն :

— Գիտէ՞ք թէ այս տեղ մեր կերածը ի՛նչ է,
ըստ Աթօն տասը վայրկեան ետք :

— Հա՛րկաւ, պատասխանեց տ'Արդանեան, ես
որթի միս կ'ուտեմ :

— Ես ալ գառնուկի ֆիլէթօ, ըստ Բօրթօն :

— Ես ալ հաւի միս, ըստ Արամիս :

— Ամենքդ ալ կը սխալիք, պարոննե՛ր, պատաս-
խանեց Աթօն ծանրօթէն : Զիու միս կ'ուտէք :

— Ո՛ն անդը, ըստ տ'Արդանեան :

— Զիու միս, ըստ Արամիս, զզուանքէն դժմքը
ծամածուելով :

Միայն Բօրթօն չպատասխանեց :

— Այս՛, ձիու միս, անանկ չէ՞, Բօրթօն, ձիու
միս չէ կերածնիս, թերես թամբերն ալ միասին :

— Ո՛չ, պարոննե՛ր, թամբը պահեցի, ըստ
Բօրթօն :

— Իրաւ ոք ամենքս ալ իբրամէ վար չենք մնար,
ըստ Արամիս : Կարծես թէ խօսք մէկ ըրած ենք :

— Ի՞նչ ընեմ, ըստ Բօրթօն, այդ ձին կ'ամշցնէք
այցելուններս : Չուզեցի ամօթով ձգել զանոնք :

— Յեսոյ, ձեր Դքսուհին ջերմուկները կը գըտ-
նուի միշտ, այնպէս չէ՞, աւելցուց տ'Արդանեան :

— Մի՛շտ, պատասխանեց Բօրթօն : Արդ, գաւա-
սին կառավարիչը, մէկը այն աղնուականներէն, որոնց
ճաշի կ'սպասէի այսօր, այնքան կը տենչար ձիուն որ
իրեն տուի :

— Տուի՞ք, պատաց տ'Արդանեան :

— Ո՛չ, Աստուած իմ, այս՛, տուի, ձիշտ բառն է,
ըստ Բօրթօն, վասնզի անշուշտ 150 սոկի կ'արժէր,
իսկ կծծին ութուն սոկի միայն ուզեց վճարել :

— Առա՞նց թամբի, ըստ Արամիս :

— Այս՛, առանց թամբի :

— Պիտի դիտէք, պարոննե՛ր, ըստ Աթօն, թէ
մեր ամէնուն մէջ լաւագոյն սակարգութիւնը ընողը
Բօրթօնն է :

Ան ատեն քահ քահ խնդացին, և խեղճ Բօրթօն
չուարեցաւ մնաց : Բայց չուառվ բացարեցին թէ ի՞ն-
չու կը խնդան : Բօրթօն ալ իր սովորութեան համե-
մատ, աղմկալի կերպով մասնակցեցաւ իր ընկերնե-
րուն գուարթութեանը :

— Այնպէս որ, ըստ տ'Արդանեան, ամենքս ալ
գրամ ունինք :

— Ես իմ մասիս չունիմ, ըստ Աթօն, Արամիսի
սպանիական գինիին այնքան հաւնեցաց որ վաթսունի
չափ չեւեր բեռցնել տուի սպասաւորներուն հստած
սացլին վրայ : Այս պատճառով դրամս հատաւ :

— Գալով ինծի, ըստ Արամիս, երևակացեցէք որ
մինչև յետին գրամս տուի Մօնախտէիչի եկեղեցիին և
Ամրէնի լիսուսեաններուն որպէսողի պատարագ ընկեն
ինծի և ձեզի համար, պարոննե՛ր, և արակոյս չու-
նիմ որ օդտակար պիտի ըլլայ մեզի :

— Գալով ինծի, ըստ Բօրթօն, կը կարծէ՞ք թէ
ոսքիս ձմռումը սուլի չնստաւ ինծի, առանց հաշուե-
լու Մուսքոնին վէրքը, որուն համար սախողուեցայ
որը երկու անգամ վիրաբոյժ բերել տալ որ կրկնա-
պատիլ այցագին տուաւ, պատրուակելով թէ սա ապուշ
Մուսքոնը զնտակ մը ստացած էր մաքմազն ա՛յն-
պիսի մէկ տեղը, զոր սովորաբար դեղագործներուն
շոցց կուտան : Ուստի պատուիրեցի իրեն որ այլ ևս
վէրք չստանաչ այն կողմը :

— Ո՛հ, ըստ Աթօն տ'Արդանեանի և Արամիսի
մէտ ժպիտ մը փախանակելով, կը տեսնեմ որ չառ
առառածեանորէն վալուեր էք խեղճ աղուն հանդէպ,
Բարի տիրոջ մը այդպէս կը վայլէ :

— զորս հասկիւր եօթանասուն և հինգֆրանք, ըստ
տ' Արդանեան, որ Արքիմէտէսի պէս կը հաշուէր:
— Բարիդ հասնելուն պէս, տակաւին պիտի ու
նանանք չորս հարիւր ֆրանք, մամբերն ալ ուրիշ ըստ
ֆօրթօս:

— Հապա միր դունդին ձիե՞րը, ըստ Արամիս:

— Ե՛ ուրեմն, սպասաւորներուն չորս ձիերէն
երկուքը կ'առնենք մեղի համար և վիճակ կը ձգենք:
Չորս հարիւր ֆրանքին կէսով ալ երկու ձի կ'առ
նենք, որով չորսերնիս ալ մեր ձիերը կ'ունենանք:
իսկ մեր գրալանին մէջ մնացածը տ'Արդանեանի կու
տանիք որպէսզի իր գէմը ելլող առաջին խաղարանը
երթայ ու խաղայ: Անիկա բախտաւոր ձեռք մը ունի:
Այս կերպով ամէն բան կարգի կը մտնէ:

— Ուրեմն ձաշենիք, ըստ Բօրթօս, կերակուրը
պ սղեցաւ:

Չորս բարեկամները, որ այլես իրենց սպաւ
գալին համար մտահոգ չէին, լաւ ճաշ մը ըրին և
աւելցուքը թողուցին Մուսքոնի, Պաղէնի, Բլանչէի
և Կորմօլի:

Բարիդ հասնելուն պէս, տ'Արդանեան Ա, որ
Դոէվիլի մէկ համակը գտաւ, որ կ'իմացնէր թէ թա
գաւորը՝ իր խնդրանքին համեմատ՝ հրացանակիլինեւ
սու զունդին մէջ մտնելու շնորհը ըրած էր:

Եւ որովհեաւ, տ'Արդանեանի բոլոր փափաքը
աս էր, — Տէկին Պօնտախէօն գտնելու փափաքէն զատ
— Երիտասարդը խնդութեամբ վաղեց իր ընկերնեւ
ընչ ժօտ, որոնցը կէս ժամ առաջ բաժնուած էր և
Դորս հիմա շատ տիսուը և մուահոգ վիճուկի մէջ զտաւ:
Սթօսի տունը հաւաքուած էին խորհրդակցութեան
համար, ինչ որ ծանրակշիռ պարագաներու նշան էր
միշտ:

Ա, որ Դոէվիլ իմաց տուած էր իրենց թէ Ն,

— Մէկ խօսքով, շարունակեց Բօրթօս, ծախք
գձաբելէ ետք, երեսուն ոսկիի չափ պիտի մնայ ինձի:

— Տասը ոսկիի չափ ալ իմ քո՞յն կամ, ըստ Ա-
րամիս:

— Օ՛հ, ըստ Աթօս, կ'երեսոյ թէ ընկերութեան
կրեսոսներն ենք: Զեր հարիւր ոսկիէն ի՞՞նչ մնաց,
տ'Արդանեան:

— Իմ հարիւր ոսկիէն: Նախ յիսունը ձեզի
տուի:

— Կը կարծէ՞ք:

— Հա՛րկաւ:

— Օ՛հ, ձիշտ է, կը յիշեմ:

— Յետոյ՝ վեց ոսկի ալ պահպոկապեսին տուի:

— Անասունին մէկն էր այդ պահպոկապեսը:
Ինչո՞ւ վեց ոսկի տուիք:

— Դո՞ւք ըսիք որ տա՞մ:

— Ճիշտ է թէ շատ բարեացակամ եմ: Մէկ խօս-
քով ի՞նչ մնաց:

— Քսան և հինգ ոսկի, ըստ տ'Արդանեան:
— Գալով ինձի, ըստ Աթօս, գրալանէն քանի մը
մանրուք դրամ հանելով, ես

— Դուք բան մը չունիք:

— Իրաւ, կամ թէ այնչափ քիչ է որ, չարժեր
միւսներուն վրայ բարդել:

— Հիմա, հաշուենիք թէ ամենքս ո՞րչափ ու
նիսք:

— Բօրթօս, ձերը ո՞րչափ էր:

— Երիտուն:

— Յրամի՛ս, զո՞ւք:

— Տասը:

— Իրաւ գո՞ւք, տ'Արդանեան:

— Քսան և հինգ:

— Ամենքը ի՞նչ կ'ընէ, ըստ Աթօս:

Վեհափառութիւնը միտք ունի Մարիսի առաջին օրը պատերազմ բանալու, և թէ պարաւոր են իրենց ուղղմական պիտոյքները պատրաստելու :

Չորս փիլիսոփաները իրարու երես հայեցան ապշահաբ : Մ. աը Դոէվիլ կարգասահութեան մատին շատ խիստ էր :

— Սրբ պիտոյքներուն համար ո՞րչափ ծախք կ'երթայ, հարցուց ա'Արդանեան :

— Օ՛հ, բաելիք չկայ, աւելցուց Արամիս, հիմակ մեր հաշիւը լրինք սպաւ տական կծծիութեամբ : Ամէն մէկուն 1500 ֆրանք պէտք է :

— Չորս անգամ տասն և հինգ՝ կ'ընէ վաթսուն, այսինքն վեց հազար ֆրանք, ըստ Աթօս :

— Իսծի կուգոյ որ, ըստ ա'Արդանեան, Եթէ մննէ իւրաքանչիւրը հաղար ֆրանք ունենար . . . , իրաւ է որ իրք սպասացի չեմ խօսիր, այլ իրք փոխանորդ . . . :

Այս փոխանորդ բառը արթնցուց Բօրթօսը :

— Գաղափար մը ունիմ, ըստ :

— Ատիկա արդէն բան մըն է, ևս զաղափարի ստուերի անգամ չունիմ, ըստ Աթօս պաղօրէն : Գաշլով ա'Արդանեանի, պարոններ, մեր գունդին մէջ մտնելուն համար զգացած ուրախութենէն խենդ գարձեր է : Հազար ֆրանք : Ահա կը յաքարարեմ որ մինակ ինծի համար երկու հաղար ֆրանք պէտք է :

— Չորս անգամ երկու կ'ընէ ութը, ըստ այն տաեն Արամիս : Ուրեմն ութը հաղար ֆրանք պէտք է մեր ուղղմական պիտոյքներուն համար : Իրաւ է որ թամբերը ունինք արդէն :

— Աւնինք նաև, ըստ Աթօս, սպասելով որ ա'Արդանեան, որ Մ. աը Դոէվիլի շնորհակալ ըլլաւլու կ'երթար, գուոը զոց էր, ունինք նաև այն դեղիկ աղամանիքը, որ մեր բարեկամին մատին վրայ

կը փայլի : Տ'Արդանեան այնչափ բարեսիրտ է որ իր բարեկամները նեղութեան մէջ չի թողուր, երբ թագաւորի մը փրկանքը արժող մատին մը ունի :

¶.

ԱՅՋՄԱՆՆ ՊԻՑՈՅՔՆԵՐՈՒ ՀԵՑԱՊՆԴՈՒՄ

Չորս բարեկամներուն մէջ ամէնէն աւելի հոգ տանողը ա'Արդանեանն էր, թէ և անիկա իրքե պահակ, աւելի զիւրութիւն ունիր իր պիտոյքները պատրաստելու քան, թէ հրացանակիրները, որոնք մեծ անձնաւորութիւններ էին : Բայց մեր Կասքօնցի սկըսնակ զօրականը, ինչպէս որ դիտուեցաւ, հեռատես և զրէթէ ժամ բնաւորութիւն մը ունիր և ասոր հետ մէկտեղ փառասէր էր Բօրթօսի քար հանելու չափ : Այս փառասիրութեան հոգին վրայ ա'Արդանեան այս միջոցին աւելցուցած էր նուազ եսասէր մտահոգութիւն մը : Ա'րչափ որ ջանք ըրաւ Տիկին Պօնասիէօնի վրայ տեղեկութիւն ստանալու, սպական ընաւ լուր մը չառաւ : Մ. աը Դոէվիլ թագուհին խօսեր էր անոր մատին : Թագուհին չէր գիտեր թէ մանկամարդ փերեղակուհին ուր կը դանուէր և խոստացեր էր զայն փնտառել տալու : Բայց այս խոստումը շատ անորոշ էր և չէր կրնար ապահովել ա'Արդանեանը :

Աթօս մենեակէն զուրս չէր ելլէր : Արոշած էր քայլ մը իսկ չառնել իր պիտոյքը պատրաստելու համար :

— 15 օր կազ, կ'ըսէր բարեկամներուն, է' ուրիմն

եթէ 15 օրէն բան մը չգտնեմ կամ մանաւանդ եթէ արդ բանը զիս գտնելու չգայ, որովհետեւ բարի կաթոլիկ մըն եմ և անձնասպան չեմ ըլլար, պիտի չանամ կոխւի բռնուիլ Ն. Բարձրութեան չորս պահակներուն կամ ութը Անգլիացիներու հետ ու պիտի մենամարտիմ մինչև որ զիս մեոցնող մէկը գտնուի և ասիկա պիտի պատահի անպատճառ, քանի որ հակառակորդներս շատոր են: Այն ատեն պիտի ըսուի թէ թագաւորին համար մեռած եմ, այնպէս որ իմ պաշտօնս կատարած պիտի ըլլամ առանց ուղմական պիտոյքը հոգալու:

Բօրթօս կը շարունակէր պատիլ ձեռքերը ետին կապած, գլուխը երեցնելով և ըսելով:

— Ես իմ գաղափարս պիտի գործադրեմ:

Արամիս բան մը չէր ըներ: Մտահոգ վիճակ մը ունէր:

Այս գառնաղէտ պարագաներէն կարելի է հասկնալ թէ չորս բարեկամներուն մէջ տագնապ մը կը տիրէր:

Սպասաւորներն ալ իրօլիտի երիվարներուն պէս, կը մասնակցէին իրենց տէրերուն մտասանջութիւններուն: Մուսքդօն հացի կեղեւներու պաշար մը կը պատրաստէր, Պաղէն, որ ինքզինքը բարեպաշտութեան տուած էր միշտ, եկեղեցիներէն դուրս չէր ելլեր, Յլանչէ ճանձերուն թուչիլը կը դիտէր և Կոփմօ, որ ընդհանուր ծախորդութեան առթիւ չէր կը բար իր տիրոջ ապսպած լուսթիւնը ընդհատել, քարեբը ողոքելու աստիճան հառաջներ կ'արձակէր:

Երեք բարեկամները, — վասնղի, ինչպէս ըսինք, Աթօս իր հանդերձանքը պատրաստելու համար երգում ըրած էր քայլ մը իսկ չառնել — Երեք բարեկամները առառն կանուխ զուրս կ'ելլէին և ուշ կը գառնային: Փողոցները կը թափառէին, ակնարկ մը

ձգելով ամէն սալայատակի վրայ, դիտնալու համար թէ արդեօք իրենցմէ առաջ այնտեղէն անցնողները իրենց քսակը ձգած չե՞ն: Կարծես թէ հետքեր կ'ուսոնէին, այնքան ուշադիր կը դիտէին ուր երթաւին: Երբ իրարու հանդիպէին, վշտադին ակնարկներ կ'ուղղէին: Կարծես ըսել կ'ուղէին: — Բան մը գտա՞ր:

Սակայն, որովհետև Բօրթօս առաջին անգամ ինք գաղափար մը ունեցած և յարատեւութեամբ հետապնդած էր զայն, ինք եղաւ առաջին անգամ գործի մկանողը: Գործի մարդ էր այդ պատուական Բօրթօսը: Օր մը ա'Արդանեան աեսաւ որ Բօրթօս դէպ ի Սէն Լէօ եկեղեցին կ'երթար և բնազդաբար հետևեցաւ տնոր: Սրբավայրը մտաւ պեսները ոլորելով և մօրուքը շրյելով, ինչ որ կը յայտնէր թէ յաղթական զիտումներ ունի: Եւ որովհետև ա'Արդանեան ինք զինքը ծածկելու համար զգուշութիւններ ձեռք առած էր, Բօրթօս կարծեց թէ զինքը աեսնող չեղաւ: Տ'Արդանեան անոր ետևէն ներս մտաւ: Բօրթօս սիւնի մը մէկ կողմին կրթնեցաւ: Տ'Արդանեան, որ միշտ անտես կը մնար, միւս կողմին կոթնեցաւ:

Ճիշտ նոյն պահուն քարոզ կը տրուէր և այս պատճառով մեծ բազմութիւն կար եկեղեցին մէջ: Բօրթօս, այս պարագայէն օգտուելով, մկան կիները զիտել: Մուսքդօնի ինամքներուն չնորհիւ, իր տիրոջ արատքին տեսքը ներքին չքաւորութիւնը յայտնի չէր ըներ: Իր թաղիքէ գլխարկը քիչ մը մաշած էր, փետուրը տժգունած, բանուածները թարշամած, ժապուէնները ճաթուած, բայց կէս մթութեան մէջ բոլոր այս թերութիւնները կ'ահճատանային և Բօրթօս միշտ գեղեցիկ Բօրթօսն էր:

Տ'Արդանեան զիտեց որ Բօրթօսի և իրեն կոթնած սիւնին ամէնէն մօտ մէկ հստարանին վրայ կը գըտ-

նուէր հասուն գեղեցկութիւնով, քիչ մը գեղնագոյն, քիչ մը չոր, բայց իր սև քողին տակ հպարտ կին մը: Բօրթօս գաղտագողի կը նայէր այս կնոջ և յետոյ ականարկը կ'ուղղէր խորանին:

Կինը, որ երեմն կը կարմրէր, փայլակի պէս արագ նայուածք մը կ'ուղղէր Բօրթօսի, որուն աչքերը կը թրթային զայրոյթէն: Յայտնի էր որ ատընթացքը կը վիրաւորէր կինը, վասնզի շրթունքը կը խածնէր արիւնելու ասոհճան, քիթին ծայրը կը քերէր, և աթոռին վրայ կը տարուրերէր յուսահատաբար:

Բօրթօս, այս բանը ոգոնելով, իր պեխը նորէն ոլորեց, մօրուքը չոյեց և սկսաւ նշան ընել դասին մօտ կեցող կնոջ մը: Այս կինը ոչ միայն գեղանի էր, այլ նաև աղնուական տիկին մը անշուշտ, վասնզի իրեակ կեցած էին խափչիկ մը, — որ բարձ մը բերած էր և տիկինը այդ բարձին վրայ ծնրագրած էր — և սպասուհի մը, որ զինանշան կրող պարկ մը բռնած էր, որուն մէջ կը զրուէր տիկինոջ աղօթագիրքը:

Սև քողով կինը որ Բօրթօսին նայուածքը կը դիտեր, տեսաւ որ անիկա թաւիչէ բարձ, խափչիկ մը և սպասուհի մը ունեցող տիկինոջ կը նայէր:

Այս միջնցին Բօրթօս աչքը կը քթթէր, մատը ըրթունքին վրայ կը դնէր, կը ժպաէր և այս ընթացքը սուսպիւ կ'սպաննէր արհամարհուած կինը:

Ռւստի «մնջայ» ի ձեռվ և կուրծքը ծեծելով հառաջ մը արձակեց այնչափ բարձրածայն որ ամէն մարդ, նոյն իսկ կարմիր բարձ ունեցող տիկինը, աշնոր կողմը դարձան: Բօրթօս անխոռվ մնաց: Հասկըշաւ, բայց չնասկնալու զարկաւ:

Կարմիր բարձ ունեցող տիկինը, որ չատ զեղանի էր, տպաւորութիւն ըրաւ սև քող զնող կնոջ վրայ, որ անոր անձին մէջ տեսաւ ձմարտապէս երկիւղալի

սոսին մը, մեծ տպաւորութիւն ըրաւ Բօրթօսի վրայ, որ սեւ քողով կնոջմէն շատ աւելի գեղեցիկ գտաւ զայն: Մեծ տպաւորութիւն ըրաւ նաև տ'Արդանեանի վրայ, որ ճանչցաւ Մէօնի, Քալէի և Տուքրի կինը, զոր Միլէտի անունով ողջունած էր իր հալածիչը, սպիաւոր մարդը:

Տ'Արդանեան, առանց աչքէ հեռացնելու կարմիր բարձ ունեցող կինը, շարունակեց դիտել Բօրթօսի վարմունքը, որմէ շատ կ'զբունէր: Կարծեց գուշակել թէ սև քողով կինը Ուրս փողոցի փոխանորդուհին էր, մանաւանդ որ Աէն էջո եկեղեցին շատ հեռու չէր յիշեալ փողոցէն:

Այն ատեն մակարեւելով գուշակեց թէ Բօրթօս կը ջանար Շանդիյիի մէջ իր պարտութեան վրէժը լուծել, քանի որ փոխանորդուհին այնքան ըմբռուս երեցեր էր իր քսակին հանդէպ:

Բայց այս ամէնուն մէջ, տ'Արդանեան դիտեց նաև որ Բօրթօսի շարժուձերուն պատախանով մէկը չկար:

Պատրանք էր, բայց ձշմարխտ սիրողի մը և նաւիսնձողի մը համար պատրանքէն զատ ուրիշ իրականութիւն կայ:

Բարոզը աւարտեցաւ: Փոխանորդուհին ուղղուեցաւ օրհնած ջուրի ամանին: Բօրթօս կանիսեց զայն և փոխանակ մէկ մատին, ամբողջ ձեռքը թաթիսեց ջուրին մէջ: Փոխանորդուհին ժպանցաւ, կարծելով թէ Բօրթօս իրեն համար կ'չտագէր այնպէս: Բայց չուտով և անողորմաբար հասկցաւ խարուած ըլլալը: Երբ երեք քարլի չտի միայն հեռու կը գտնուէր Բօրթօսէն, անիկա գլուխը դարձաւց, աչքը սեեսից կարմիր բարձ ունեցող կնոջ վրայ, որ եւած էր և կը մօտենար, իրեակն ունենալով խափչիկը և սենեկապահուհին:

Երբ կարմիր բարձ ունեցող տիկինը Բօրթօսի մօ-

տեցաւ, այս վերջինը ջրաթաթախ ձեռքը հաճեց ա-
մանին մէջէն։ Գեղանի բարեպաշտուհին իր նուրբ
ձեռքը դպցուց Բօրթօնի խոշոր ձեռքին, խաչակըն-
քեց ժպտելով և դուրս ելաւ եկեղեցին։

Փոխանորդուհին համար շատ ծանր եկաւ ասի-
կա։ Ա՛լ տարակոյս չունեցաւ որ այն տիկինը և Բօր-
թօս սիրային յարաբերութիւն ունէին։ Եթէ բարձ-
րաստիճան տիկին մը եղած ըլլաբ, անշուշտ պիտի
նուալէր, բայց որովհետև փոխանորդուհի մըն էր
միայն, բաւական սեպեց զապուած զայրոյթով մը ըսել
— Է՞ն, Մ. Բօրթօս, ինծի օրհնած ջուր չէ՞ք
հրամցներ։

Բօրթօս, այս ձայնը լսելուն պէս, ոստում մը
ըրաւ, ինչպէս պիտի ընէր հարիւր տարուան քունէ
մը արթնցող մարդ մը։

— Տի ։ ։ ։ ամիկին, դո՞ւք էք, պոդաց։ Ի՞նչպէս է
ձեր ամուսինը, սիրելի Մ. Քոքընառը։ Առաջուան
պէս Ժլատ է նորէն։ Աչքերս ո՞ւր էին որ չտեսալ
ձեզ երկու ժամ աւել քարոզին պահուն։

— Զինէ երկու քայլ հեռու էի, պա՛րոն, պա-
տասխանեց փոխանորդուհին, բայց դուք զիս չտեսաք,
որովհետև ձեր աչքերը սեւեած էիք այն զեղանի
ոիկնող վրայ, որուն օրհնած ջուր տուիք քիչ առաջ։

Բօրթօս շփոթութիւն կեղծեց։

— Ա՛ն, դիտեցի՞ք, ըսաւ։

— Կոյր ըլլալու էք չդիտելու համար։

— Այո՛, ըսաւ Բօրթօս անհոգութեամբ, իմ բա-
րեկամուհիներէս զքսուհի մըն է, որուն հետ տես-
նուելու մեծ զժուարութիւն կը քաշեմ, էրկանը նո-
խանձու ըլլալուն պատճառաւ։ Ինծի իմաց տուուծ էք
որ անձանօթ թաղի մը մէկ անկիւնը զ նուած այս
անշուք եկեղեցին պիտի դայ այսօր, միմիան զիս
տեսնելու համար։

— Ո. Բօրթօս, ըսաւ փոխանորդուհին, կը հաճի՞ք
թեւերնիդի ինծի տալ հինգ վայրկեանի համար։ Չեղի
քանի մը խօսք ունիմ։

— Խօնչպէս չէ։ ամիկին, ըսաւ Բօրթօս, աչքը
քթթելով խաղամոլի մը պէս, որ լարելիք թակաբդին
վրայ կը խնդայ։

Այս միջոցին ա'Արդանեան, որ Միլէտիին ետևէն
երթալու համար կ'անցնէր, կողմնակի ակնարկ մը
ձգեց Բօրթօնի վրայ և անոր յաղթական նայուածքը
տեսաւ։

— Է՛ն, Է՛ն, ըսաւ ինքնիրեն, այնիգամոլժամանակին
տարօրինապէս տկար բարոյականին համեմատ տրա-
մարանելով, ահաւասիկ մէկը որ պիտի կընայ իր
ուազմական պիտոյքները հոգալ որոշեալ ատենին
մէջ։

Բօրթօս տեղիտալով փոխանորդուհին թեւին ձընչ-
ման, ինչպէս նաւակը տեղի կուտայ ղէկին, հասաւ
Աէն Մալլուարի վանքը, որ բանուկ տեղ մը չէր և
երկու կողմերէն փակուած էր զռնակներով։ Ցորեկը
մուրացկաններ միայն կը տեսնուէին հօն, որոնք
հաց կ'ուտէին, կամ տղաքներ, որոնք կը խաղային։

— Ա՛ն, Մ. Բօրթօս, պոռաց փոխանորդուհին,
երբ ապահով եղաւ թէ տեղւոյն սովորական անձերէն
զայ ուրիշ մէկը չկար զիրենք տեսնող կամ իրենց
խօսքը լսող, ա՛ն, Մ. Բօրթօս, դուք մեծ յաղթական
մըն էք, ինչպէս կ'երեայ։

— Ե՞ս, Տիկին, ըսաւ Բօրթօս փքանալով, ինչո՞ւ
այսպէս կ'ըսէք։

— Հապա լո՞նչ կը նշանակէին քիչ մը առաջուան
նշմարները, օրհնած ջուրը։ Բայց այն տիկինը առնը-
ւազն իշխանուհի մը պիտի ըլլայ իր խափիկով և
սենեկապտնուհիով։

— Կը սիսալիք, ո՞չ պատասխանեց Բօրթօս, պարզապէս դքսուհի մըն է:

— Հապա սպասեածկը, որ դռւուր կեցած էր, և կա՞ռքը, պերձաղգեստ կառապահով, որ աթոռակին վրայ կ'սպասէլ:

Բօրթօս ո՞չ սպասեալը տեսած էր ոչ կառքը, բայց Տիկին Քօքընար, նախանձու կնոջ իր ակնարշ կովը, ամէն բան տեսած էր:

Բօրթօս ցաւեցաւ որ առաջին անգամուն իսկ իշխանուհի չէր անուանած կարմիր բարձ ունեցող կինը:

— Ա՛ն, գեղանի կիներու սիրական զաւակն ես,

Մ. Բօրթօս, աւելցուց փոխանորդուհին նառաչելով:

— Բայց, պատասխանեց Բօրթօս, զիւրանամկնալի է թէ լաւ բախտեր չեն պակսեր ինձի, չնորհիւ այն ֆիզիքական առաւելութեան, զոր բնութէւնը առւած է ինձի:

— Առաւած իմ, մարդիկ ի՞նչ չուտ կը մոռնան, պոռաց փոխանորդուհին աչքերը վեր վերցնելով:

— Ո՛չ այնքան շուտ որքան կիները, պատասխանեց Բօրթօս, վասն զի վերջապէս, ամէկին, կրնամը ըսել թէ ևս ձեր զոհը եղայ երբ վիրաւորուած, մուհամերձ, նրեսի վրայ թողունցայ վիրարոյմներու կողեւ ևս որ անուանի գերգաստանի մը շասաւիդն եմ, որ ձեր բարեկամութեան վստահած էի, քիչ մայց որ նախ վէրքերէն և յետոյ անօթութենէ մեռնէի ծանթիցի մէկ ողորմելի պանդոկին մէջ, և դուք չաճեցաք գոնէ անգամ մը պատասխանեւ ձևզի դրած բոցակէզ նամակներուս:

— Բայց, Մ. Բօրթօս, մրմարց փոխանորդուհին, որ կ'զգաւ թէ այն ժամանակի բարձրաստիճան կիւներուն ընթացքին նայելով ինք անիրաւ էր:

— Ես որ ձեզի համար զոհած էի պառունակի...:

— Գիտեմ:

— Կոմսուհի...:

— Մ. Բօրթօս, մի՛ ընկճէք զիս:

— Դքսուհի...:

— Մ. Բօրթօս, վեհանձն եղէք:

— Իրաւունք ունիք, Տիկին, խօսքս պիտի չաւքարեմ:

— Բայց ամուսինս է որ դրամ փոխ տալու խօսքը իսկ լսել չուզեր:

— Տիկին Քօքընար, ըստ Բօրթօս, միշեցէք այն առաջին նամակը, զոր զրած էիք ինձի և զոր յիշողութեանս մէջ անջինջ պահած եմ:

Փոխանորդուհին հառաջեց:

— Բայց սա ալ կալոր, ըստ, ձեր փոխ ուղած գումարը քիչ մը շատ մէծ էր:

— Տիկին Քօքընար, նախապատուութիւնը ձեզի տուի: Կրնալի զիմել դքսուհի...ին: Զեմ ուզեր անունը ըսել, վասնզի սովորութիւն չունիմ կնոջ մը անունը վտանգել: Միայն սա գիտեմ որ նամակ մը գրելուս պէս, անիկա 1500 սայի պիտի դրէիր:

Փոխանորդուհին արցունք մը թափեց:

— Մ. Բօրթօս, ըստ, կ'երգնում որ զիս անհունապէս պատժեցիք, և եթէ ապագային մէջ այդպիսի նեղութեան մը թէջ ինաք, կրնաք զիմել ինձի:

— Ա՛ն, Տիկին, ըստ Բօրթօս, իբր թէ ընդունուի, դրամի խօսք չընենք, եթէ կը հաճիք նուաստացուցիչ բան է:

— Բան է որ այլ ևս չէք սիրեր զիս, ըստ փոխանորդուհին ծանրօրէն և ախրութեամբ:

Բօրթօս մէծափառ լուռթիւն մը պահեց:

— Այդ կերպո՞վ կը պատասխանէք ինձի, աւա՛զ, կը համեսմ:

— Խորհեցէք անգամ մը թէ ի՞նչ նախատինք

ըրիք ինծի, Տիկին, անիկա հոս մնացած է, ըստ
Բօրթօս, ձեռքը սրտին տանելով:

— Գիտի դարմանեմ, սիրելի Բօրթօս:

— Եւ յետոյ, ես ի՞նչ կ'ուզէի ձենէ, աւելցուց
Բօրթօս, ուսերը շաբժելով միամտութեամբ, պարզա-
պէս փոխատուութիւն մը և ոչ ուրիշ բան: Վերջա-
պէս, անխելք մարդ մը չեմ: Գիտեմ թէ հարուստ
չէք, Տիկին Քօքընար, և թէ ձեր ամուսինը ստիպ-
ուած է խեղճ դատախաղներու արիւնը ծծել անոնցմէ
քանի մը ոսկի բրցնելու համար: Օ՛հ, եթէ կոմունի
մարքիզուհի կամ դքսուհի ըլլայիք, խնդիրը կը փոխ-
ուէր և այն ատեն ձեր յանցանքը չէր ներուեր:

Փոխանորդուհին վիրաւորուեցաւ:

— Գիտցէք, Մ. Բօրթօս, ըստ, թէ իմ դրա-
մարկղս, որչափ ալ փոխանորդուհիի դրամարկղ ըլլայ,
թերեւս աւելի լեցուն է քան ձեր բոլոր փացած ծեր-
ծեքուհիներուն դրամարկղները:

— Այն ատեն կրկնակի նախատած էք զիս, ըստ
Բօրթօս փոխանորդուհիին թեր քաշելով իր թերին
տակէն, վասնզի եթէ հարուստ էք, Տիկին Քօքընար,
ուրեմն ձեր մերժումը ո' և է արդարացում չունի:

— Երբ հարուստ կ'ըսեմ, աւելցուց փոխանոր-
դուհին որ աեսաւ թէ շատ հեռուն գացած էք, բա-
ռական իմաստով համկնալու չէ: Մեծանարուստ չէմ,
այլ բարեկեցիկ վիճակ մը ունիմ:

— Ինծի նայեցէք, ամիկին, ըստ Բօրթօս, ա'լ
չխօսինք ասոնց վրայ, կ'աղանդ, դուք իմ արժէքս
չճանչցաք, մեր միջև ամէն համակըութիւն վերջա-
ցած է:

— Ապէ՛րախտ:

— Ա՛հ, երես ունիք և կը դանդատի՞ք տակա-
ւին:

— Լա՛ւ, գացէք ձեր գեղանի դքսուհիին, ա'լ
չեմ արդիւեր ձեզ:

— Է՛հ, անիկա ձեզի պէս չէ:

— Ինծի նայեցէք, Մ. Բօրթօս, վերջին անգամ
մը ալ կը հարցնեմ, զիս կը սիրէ՞ք սակաւին:

— Աւա՛ղ, Տիկին, ըստ Բօրթօս կարելի եղա-
ծին չափ մելամաղձոտ ձայնով մը, երբ կը պատրաս-
տուիմ կոփուի երթալու, ուր կարծեմ պիտի սպան-
նուիմ, ինչպէս կը նախզգամ...

— Օ՛հ, ատանկ խօսքեր մի՛ ըսէք, պոռաց փո-
խանորդուհին հեծկլաւով:

— Նախզգացում այսպէս կ'ըսէ ինծի, շաբունա-
կեց Բօրթօս, հետզետէ աւելի տիրելով:

— Ըսէք մանաւանդ թէ ուրիշ մէկը կը սիրէ՞ք:

— Ո՛չ, անկեղծօրէն կը խօսիմ ձեզի հետ: Ու-
րիշը չեմ սիրեք ամենեկին և նոյն իսկ սրտիս խորը
բան մը կ'զգամ ձեզի համար: Բայց տասնեհինգ օրէն,
ինչպէս գիտէք կամ չէք գիտեք, այն աղետալի պա-
տերազմը պիտի սկսի: Ռազմական պիտոյքներս պատ-
րաստելու հոգովը զբաղած եմ: Յետոյ, ընտանիքս
տեմնելու համար ուղեւորութիւն մը պիտի ընեմ Պիը-
դանելըի խորերը, որպէս զի մեկնած պահուն պէտք
եղած գումարը ձարեմ:

Բօրթօս տեսաւ որ սիրոյ և ագահութեան միջև
վերջին պայքար մը տեղի կ'ունենայ:

— Եւ որովհետեւ, շաբունակեց, եկեղեցիկն մէջ
քիչ մը առաջ ձեր տեսած դքսուհիին հողերը իմին-
ներուս մօտ են, միասին պիտի ուղեւորինք: Ինչպէս
գիտէք, ճամբորդութիւնները շատ կարճ կ'ըլլան երբ
երկու հոգի միասին ըլլան:

— Բարիզի մէջ բարեկամ չունի՞ք, Մ. Բօրթօս,
ըստ փոխանորդուհին:

— Կարծեցի թէ ունիմ, ըստ Բօրթօս տիսուր
երկոյթ մը առնելով, բայց հասկցայ թէ կը սխալէի:

— Բարեկամ ունիք, Մ. Բօրթօս, աւելցուց փո-

իսանորդուհին այնպիսի եռանդով մը, որմէ ինք տէ
զարմացաւ, վաղը մեր տունը եկէք: Հօրաքրոջն որ-
դին էք, Բիքաբտիարի նուայօն քաղաքէն կուգաք,
շատ մը դատեր ունիք Բարիղի մէջ, բայց փոխանորդ
չունիք: Միտքերնիդ պահեցի՞ք ըստծնելու:

— Այս', Տիկին:

— Ճաշի ասեն եկէք:

— Շատ լաւ:

— Համարձակ եղէք ամուսնիս առջև, որ մար-
սկանորդի է, հակառակ եօթանառուն երեք տարեկան
ըլլալուն:

— Եօթանառուն երեք տարու, է՞ն, ի՞նչ աղւոր
տարիք, աւելցուց Բօրթօս:

— Մեծ տարիք, ըսել կ'ուղէք, Մ. Բօրթօս:
Աւստի խեղճ սիրելի մարդու կրնայ մէկ վայրկեանէն
միւսը այրի ձգել զիս, շարունակեց փոխանորդուհին
նշանակալից ակնարկ մը ձգելով Բօրթօսի վրայ: Բա-
րեբախտաբար, ամեռնութեան պայմանագրով, բոլոր
ստացուածքը պիտի թողուի ողջ մնացողին:

— Բոլո՞րը, ըսաւ Բօրթօս:

— Այս'. բոլորը:

— Կը տեսնեմ որ շատ զգուշաւոր կին մըն էք
սիրելի Տիկին Բօրքնար, ըսաւ Բօրթօս փոխանորդու-
հին ձեռքը սեղմելով գորովագին:

— Անա հաշտուեցանք, չէ՞ սիրելի Մ. Բօրթօս,
ըսաւ կոտրտուելով:

— Առ յանէտ, պատասխանեց Բօրթօս նոյն ձեւով

— Ուրեմն ի տեսութիւն, մասնի՛չո:

— Ի տեսութիւն, մասացիո՛տո:

— Վա՛զը, հրեշտա՛կո:

— Այս', վաղը կեանքի՛ս լոյսը:

Ե.

Մ ի լ ե Տ ի

Տ'Արդանեան Միլէտիին ետեւէն գացան էր առանց
անոր կողմէ նշմարուելու: Տեսաւ անոր կառք հստիւը
և լսեց կառապանին պատուիրելու որ Սէն Ժէրմէն
տանի գինքը:

Անօգուտ էր փորձել քաւելով հետեւելու կառքի
մը, զոր երկու ուժեղ ձիեր կը վակցնէին քառասու-
րակ: Աւստի ա՛Արդանեան Ֆէրու փողոց գարձաւ:

Սէնի փողոցին մէջ հանդիպեցաւ Բլանչէի, որ
անուշավաճառի մը խանութին առջեւ կեցած էր
և հիսցումով կը դիտէր ալիւրով, հաւկիթով ու կա-
րագով շինուած ջօթ (Ժօրէֆ) մը:

Տ'Արդանեան հրամացեց որ երթայ Մ. աւ Դոէ-
վիլի ախոսէն երկու ձի բերէ, մէկը իրեն և միւսը
Բլանչէի համար և զայ դինքը զանէ Աթօսի տունը
վասն զի Մ. աւ Դոէվիլի իր ձիերը ա՛Արդանեանի տրա-
մադրութեան տակ դրած էր միանգամ ընդ միշտ:

Բլանչ Քօլոնտիէ փողոցին կողմը զնաց, իսկ
ա՛Արդանեան Ֆէրու փողոցին կողմը: Աթօս իր տունն
էր և տիսրօրէն կը խմէր Ապանիոյ այն նշանաւոր գի-
ւիէն, զոր Բիքսրտիա ըրած ուղեւորութեան ատեն
ըրած էր: Կրիմզի նշան ըրաւ որ ա՛Արդանեանի
համար զաւաթ մը բերէ և կրիմօ հնագանդեցաւ ըստ
սովորութեան:

Այն ատեն ա՛Արդանեան Աթօսին պատմեց ինչ որ
եկեղեցիին մէջ տեղի ունեցած էր Բօրթօսի և փո-
խանորդուհիին միջև: Ըսաւ թէ իրենց ընկերը հա-
ւանաբար այս ժաման իր ուղմական պիտոյքները
պատրաստելու վրայ է:

— Գալով ինծի, պատասխանեց Աթօս այս բոլոր պատմուածներուն, ևս շատ հանգիստ եմ, կիները չեն որ իմ ասպազէնիս ծախքերը պիտի վճարեն :

— Եւ սակայն, Սիրելի Աթօս, աղւոր, քաղաքավար և աղնուական ըլլալով, պիտի չգանուի իշխանունի մը կամ թագուհի մը, որ ձեր սիրոյ ալաքներէն զերծ մնայ :

— Ո՞րքան երիտասարդ էք, ա՞Արդանեան, ըստ Աթօս ուսերը թօթուելով :

Եւ նշան ըրաւ Կոփոյի որ երկրորդ շիշ մը բերէ : Այս միջոցին, Բլանշէ գլուխը համեստօրէն ներս մացուց կիսաբաց դուռնէն և տիրոջը իմացուց թէ ձիերը պատրաստ էին :

— Ի՞նչ ձիեր, հարցուց Աթօս :

— Երկու ձի, զոր Մ. աը Դոէլիլ ինծի փոխ կուտայ պայտի համար և որոնցմով շրջան մը պիտի ընեմ Սէն Ժէրմէնի մէջ :

— Ի՞նչ ընելու պիտի երթաք Սէն Ժէրմէն, հարցուց գարձեալ Աթօս :

Այն ատեն ա՞Արդանեան պատմեց թէ որո՛ւ հանչ զիսպած էր եկեղեցին մէջ, և թէ լ'նչպէս գամծ էր այն կինը, որ իր յաւիտենական մտազբաղումը եղած էր ուր վերաբկու հագնող և քունքին վրայ սպի ունեցող աղնուականին հետ :

— Այսինքն թէ սիրահարած էք անոր, ինչպէս սիրահարած էիք Տիկին Պօնասիէօյի, ըստ Աթօս ուսերը թօթուելով արհամարնեանքով, իրու թէ մարդկային տկարութեան վրայ կը կարեկցէր :

— Ե՞ս, ամենեւին, պատաց ա՞Արդանեան : Միայն հետաքրքիր եմ լուսաբանելու այն գաղտնիքը, որուն հետ կապ ունի : Զեմ դիտեք, թէ ինչո՞ւ կ'երեւակայեմ որ այս կինը, ո՞րչափ ալ անիկա անծանօթ ըլլայ ինծի և ես ալ անոր, աղղեցութիւն մը ունի կեանքիս վրայ :

— Ճիշդը ըսելով, իրաւունք ունիք, ըստ Աթօս, ես չեմ ձանչնար կին մը որ արժէ վնասուիլ երբ կորսուած է : Տիկին Պօնասիէօյի կորսուեր է, իրեն համար գէշ է, թո՛ղ երեւան ելլէ :

— Ո՛չ, Աթօս, ո՛չ, կը սխալիք, ըստ ա՞Արդանեան, ես առաջուցնէ աւելի կը սիրեմ խեղճ Քօնացանսս և եթէ ուր գանուած ըլլալը գիտնայի, ըլլայ մինչեւ խոլ աշխարհի ծալը, համբայ կ'ելլէի զինքը իր թշնամիներուն ձեռքէն ազատելու համար : Բայց չեմ գիտեր, բոլոր խուզարկութիւններս աղարդիւն մնացին : Ի՞նչ ընեմ, պէ քէ ուրիշ բաներով զբազիլ :

— Զբազիցէք ուրեմն Միլէտին հետ, սիրելի ա՞Արդանեան, բոլոր սրասովս կը մաղթեմ այդ բանը եթէ կրնաք արդ կիրազով զբունուլ :

— Մարիկ ըրէք, Աթօս, ըստ ա՞Արդանեան, փոնակ արս տեղ փակուած մնալու, որպէս թէ բանտարկուած ըլլայիք ձի նստեցէք և ինծի հետ Սէն Ժէրմէն ելէք պատելու :

— Սիրելիս, պատասխանեց Աթօս, ես իմ ձիուն վրայ կը նստիմ եթէ ունենամ, ապա թէ ոչ հետիւնն կ'երթամ :

— Ե՛ս ուրեմն, պատասխանեց ա՞Արդանեան ժըպատել Աթօսի մարդատեցութեան վրայ, որ անշուշտ պիտի վիրաւորէք զինքը նթէ ուրիշ մը ունեցած ըլլար, ես ձեզի չափ հպարտ չեմ և դտած ձիուն վրայ կը նստիմ : Ուրեմն ի տեսութիւն, սիրելի Աթօս :

— Ի տեսութիւն, ըստ հրացանակիրը նշան ընելով կրիմոյի որ նոր բերած շիշին խիցը բանայ :

ՏԱՐԴԱՆԵԱՆ և Բլանշէ ձի նստան և Սէն Ժէրմէնի ձամբան բանեցին :

Ճամբան, ա՞Արդանեան շարունակ կը մտածէք տիկին Պօնասիէօյի նկատմամբ՝ Աթօսի բանձին վրայ :

Թէ ա'Արդանեան շատ զգայուն բնաւորութիւն չունէր, բայց սիրուն փերեզակուհին իրական տպաւորութիւն մը ըրած էր իր սրտին վրայ: Ի՞նչպէս որ կ'ըսէր, պատրաստ էր աշխարհի ծագրը երթալ դան փնտուելու համար: Բայց աշխարհը շատ ծայրեր ունի, որովհետեւ կլոր է, այնպէս որ չէր դիտեր թէ ո՛ք կողմը երթար:

Առ այժմ պիտի ջանար դիտնալ թէ ո՛վ էր արդ Միլէտին: Միլէտին սկ վերաբկուով մարդուն հետ խօսեր էր, ուրեմն կը ճանչնար զայն: Արդ, ա'Արդանեանի կարծիքով, տիկին Պօնասիէօն Երկրորդ անգամ արեանգողը սև վերտրկուով մարդն: Էր, ինչպէս որ ասածին անդամ ալ տուեանգոծ էր: Ուրեմն ա'Արդանեան կէս մը միայն սուա խօսած կ'ըլլար, — ինչ որ մեծ ստախօսութիւն մը չէ, — երբ կ'ըսէր թէ Միլէտին փնտուելու ելնելով, միենայն տաեն Քօնստանսը փնտուելու ելած կ'ըլլար:

Սապէս մտածելով և երբեմն ձին իմթանելով, ա'Արդանեան ճամբար առած և Մէն ժէրմէն հասած էր: Անցած էր այն ատղաւարէն, ուր տասը տարի ետք պիտի ծնէր Լուի Ժ. և կ'անցնէր խիստ ամայի փողոցէ մը, աջ ու ձախ նայելով, որպէսզի իր գեղանի անդլուհին հետքը տեսնէ: Յանկարծ, նոյն ժամանակի ողբորութեան համեմատ փողոցին վրայ պատրաստ չունեցող սիրուն տան մը զետնայարկին մէջ տեսաւ ծանօթ զէմք մը, որ ծաղկազարդ դարաւ տափի մը վրայ կը պտտէր: Առաջին անգամ Բլանչ ճանչցաւ զայն:

— Է՞ն, պա՛րոն, ըսաւ, խօսքը ա'Արդանեան ի ուղղելով, չէ՞ք յիշեր սա յօրանջող մարդը:

— Ո՞չ ըսաւ ա'Արդանեան և սակայն վստահ և թէ առաջին անգամը չէ որ կը տեսնեմ այս դէմքը:

— Ասոր և արակոյն չկայ, ըսաւ Բլանչ: իեղձ

Լիւլէնն է, վարտի կոմսին ծառան, որուն բերնին չափը տուիք ամիս մը առաջ Քալէի մէջ, կառավարին չին ամառանոցին ճամբուն վրայ:

— Ա՛ն, այս', ըսաւ ա'Արդանեան, ճանչցայ: Կը կարծե՞ս թէ քեզ կը ճանչնար:

— Իրաւ որ, պա՛րոն, այնքան վրդոված էր որ կը տարակուսիմ թէ մտքին մէջ որոշ յիշառակ մը ուղանած ըլլայ ինձմէ:

— Լա՛ւ, գնաւ' խօսէ հետը, ըսաւ ա'Արդանեան և տեղեկացիր որ տէրը մեռած է:

Բլանչէ ձիէն իջաւ, ուղղակի գնաց Լիւլէնի քոյլ, որ արգարե չճանչցաւ զինք և երկու սպասաւորները սկսան մտերմօրէն խօսակցիր, մինչ ա'Արդանեան երշկու ձիերը կը տանէր կողմնակի փողոց մը: Եւ տունի մը շուրջը գառնալով, կաղնիի ցանկապատի մը ետեւ էնն մափկ ըրաւ անօնց խօսակցութիւնը:

Ցանկապատին ետեէն պահ մը դիտելէ ետք, լոեց կառքի մը ձայնը և տեսաւ որ Միլէտիին կառքը եկաւ իր դէմքը կեցաւ: Տարակոյս չկար որ Մէլէտի մէջն էր: Տ'Արդանեան իր ձիուն վիզին վրայ պառկեցաւ որպէսզի ամէն բան տեսնէ առանց ինքը տեսնուելու:

Միլէտի գոնակէն գուրս հանեց իր սիրուն խարսեաւ գլուխը և հրամաններ տուաւ սենեկապանուհիին:

Այս վերջինը, որ քսան-քսաններկու տարեկան սիրուն, աշխայժ ու վառվառն աղջիկ մըն էր, աղջնուական տիկինի մը ճշմարիտ նաժիշտար, վար ցառկեց ոտնդիրէն, ուր կեցած էր ժամանակին սովորութեան համաձայն և ուղղուեցաւ այն դարատափը, ուր ա'Արդանեան նշարած էր լիւլէնը:

Տ'Արդանեան ակնարկով հետեւեցաւ սենեկապանուհին և տեսաւ որ դարատափը կ'երթար:

դիպուածով, ներսէն եկած հրամանի մը վրայ, լիւպէն գացեր էր, այնպէս որ Բլանչէ առանձին էր և չորս կողմը կը նայէր հասկնալու համար թէ տ'Արդանեան ո՞ր ճամբէն անհետացած էր:

Սենեկապանուհին մօտեցաւ Բլանչէի, զոր լիւպէնը կարծեց և տոմսակ մը տուաւ անոր:

— Զեր տիրոջը պիտի տրուի, ըսաւ:

— Տիրոջս, հարցուց Բլանչէ զարմանքով:

— Այո՛, և շատ ստիպողական է: Շուտով առէք ուրիմն:

Յետոյ վազեց դէպի կառքը, որ եկած կողմը դարձած էր և ոտնդիրին վրայ ցասկեց ու կառքը ճամբայ ելաւ:

Բլանչէ վեր վար գարձուց տոմսակը, յետոյ կրաւորական հնազանդութեան վարժուած ըլլալով, դաշտատիկն վար ցասկեց, նեղ փողոցէն անցաւ և քամն քայլ անդին հանդիպեցաւ տ'Արդանեանի, որ ամէն բան տեսած ըլլալով, զինքը դիմաւորելու կուգար:

— Զեզի համար է, պարո՞ն, ըսաւ Բլանչէ, տոմսակը երխասարդին տալով:

— Ինծի՞ համար, ըսաւ տ'Արդանեան, վըստա՞ն ես:

— Հարկաւ վստան եմ, սենեկապանուհին ըսաւ՝ «Քու տիրոջդ համար է»: Ես ձենէ ուրիշ տէր չունիմ, ուստի...: Իրաւ որ շատ սիրուն աղջիկ էր տրտ սենեկապանուհին:

Տ'Արդանեան բացաւ նամակը և հետեւեալ տողերը կարդաց.

«Անձ մը, որ չի կընար ըսել թէ ո՞րչափ կը շատ հագրգուսի ձեղմով, կ'ուզէ գիտնալ թէ ո՞ր օրը կը բնաք պտոյս մը ընել անտարին մէջ: Վաղը, Շան ախու

Տու տ'Օռ պահնդոկին մէջ, սեւ ու կարմիր հազած սպասաւոր մը ձեր պատասխանին պիտի սպասէ»:

— Ո՛հ, օ՛հ, ըսաւ տ'Արդանեան ինքնիրեն, ահաւ ւասիկ տարօրինակ գործ մը: Կ'երեւայ թէ Միլէտի ու ես միեւնոյն անձին առողջութեանը հոդ կը տանինք: Է՛ ուրեմն, Բլանչէ՛, այդ բարի պարոն Վարտը ի՞նչպէս է, մեռած չէ:

— Ո՛չ, պարոն, աղէկ է որքան կրնայ ըլլալ մարմինին մէջ սուրի չորս հարուած ստացող մէկը, վասն զի տանց յանդիմանութեան կ'ըսեմ թէ այն սիրելի ազնուականին չորս հարուած տուիք: Տակուին շատ տկար է, որովհեաւ գրէթէ բոլոր արիւնը կորսնցուցած է: Ինչպէս որ ըսած էի ձեզ, լիւպէն չճանչցաւ զիս և մէկ ծայրէն միւսը պատմեց մեր արկածը:

— Խիստ լաւ, Բլանչէ, դուն սպասաւորներուն թագաւորն ես: Հիմա, ձի նստէ և կառքին հասնինք:

Երկար չուեց: Հինգ վայրկեանէն՝ տեսան կառքը, որ ճամբուն եղերքը կեցած էր: Ճոխ հագուած ձիսոր մը կեցած էր դռնակին առջև:

Միլէտիին և ձիտորին միջև խօսակցութիւնը այնքան ողեւորուած էր որ տ'Արդանեան կեցաւ կառքին միւս կողմը, և ո՛չ ոք նշմարեց իր ներկայութիւնը սենեկապանուհիէն զատ:

Խօսակցութիւնը տեղի կ'ունենար անգլիերէն լեզուով, զոր տ'Արդանեան չէր հասկնար, բայց երիտասարդը, գեղանի՝ անգլուհիին շնչարէց զուշակեց որ ստափի բարկացած էր: Խօսքը աւաբաւց այնպիսի շարժումով մը, որ տ'Արդանեան բնաւ տարակոյա չունեցաւ այդ խօսակցութեան հանդամանքին վրայ: Միլէտիին հովտհարով զարկաւ ձիտորին այնքան ու

ժող որ կնոջական այդ փոքրիկ զարդը կտոր կտոր եղաւ:

Չիւռորը քահ քահ ինդաց, որուն վրայ աւելի բարկացաւ Միլէտին:

Տ'Արդանեան խորհեցաւ որ միջամտելու ժամանակ է: Մոտեցաւ միւս գոնակին, դլիսարկը յարդանաքով հանեց և ըստ:

— Տիկին, թոյլ կուտածք որ իմ ծառայութիւնուն ներս ձեր տրամադրութեան տակ դնեմ: Ինծի կուգա որ այդ ձիաւորը ձեզ բարկացուց: Յառ մը ըսէք, Տիկին, և ես յանձնառու կ'ըլլամ իր անքաղաքավարութեան համար պատմելու զինքը:

Առաջին խօսքերուն վրայ, Միլէտին ասդին դարձած էր և զարմանքով կը հաճէր երիտասարդին: Երբ աւարտեց:

— Պարո՞ն, ըստ լաւ ֆրանսերէնով, ինքինքս ձեր պաշտպանութեան տակ պիտի դնէի յօժարտկամ և թէ ինծի հետ վիճաբանող անձը իմ եղբայրա չըլլար:

— Ա՛ն, ներեցէք այն ատեն, ըստ տ'Արդանեան: Կրնաք հասկնար Տիկին, թէ չէի գիտեր այդ պարագան:

— Ինչո՞ւ մեր խօսքին կը խառնուի այս թեթեւաօլիկը, պոռաց ձիաւորը, զոր Միլէտին իրքեւ իր ազգականը ցոյց տուած էր, և ինչո՞ւ իր ձամրան չի շարունակեր:

— Թեթեւաօլիկը զո՞ւք էք, ըստ տ'Արդանեան ձիուն լիբին վրայ ծուելով և իր կողմի գոնակէն պատասխանելով, ձամրաս չեմ շարունակեր, վասնզի իմ կամքս կ'ուզէ որ հոս կենամ:

Չիւռորը անդլիերէն լեզուով քանի մը խօսք ուղղեց քողջը:

— Ես ձեզի հետ ֆրանսերէն լեզուով կը խօսիմ ըստ տ'Արդանեան: Խնդրեմ, չնորին ըրէք ուրեմն

այն լեզուով պատասխանել ինծի: Դուք Տիկինին եղբայրն էք, լաւ, բայց բարեբախտաբար իմ եղբայրս չէք:

Պիտի կարծուէր թէ Միլէտի, երկչոս ըլլալով ինչպէս սովորաբար կ'ըլլայ կին մը, պիտի միջամտէր այս վէճին սկզբանաւորութեան, սրպէսզի կոփու չմեծանաց: Բայց ընդհակառակը, կառքին խորը ընկողմանեցաւ և պազորէն ըստ կառապանին.

— Ապարանք դարձիր:

Սիրուն սենեկապանուհին մտահոգ ակնարկ մը ձգեց տ'Արդանեանի վրայ, որուն վարելու կերպարանքը իր վրայ աղղեցութիւն ըրած կ'երեւէր:

Կառքը մեկնեցաւ և երկու մորդիկը դէմ դէմի ձգեց: Նիւթական ո՛ւ և է արգելք չկար այլ ևս իրենց միջև:

Չիւռորը շարժում մը ըրաւ կառքին հետեւելու համար, բայց ա'Արդանեան, որուն բարկութիւնը աւելի սասակացերէ էր, ճանչնալով որ դէմինը այն անգլիացին էր, որ Ամիէնի մէջ իրեն հետ իազաւով իր ձին շահած էր և քիչ մնաց որ Աթոսին հետ նաղացած ատեն պիտի շահէր ագամանզը, նետուեցաւ անձին վրայ և ձին կեցուց:

— Է՛, պարո՞ն, ըստ, զուք ինձմէ աւելի թեթեւաօլիկ կ'երեւաք, վասնզի կը մունաք թէ մեր միջն փոքր վէճ մը սկսած էր:

— Ա՛ն, ա՛ն, ըստ անգլիացին, զո՞ւք էք, Տէ՛ր իմ: Ուրեմն զուք միշտ պէտք է որ խա՞զ մը խազաք:

— Այո՛, կը լիշեմ որ ձենէ վրէժ մը ունիմ լուծելիք: Պիտի տեսնենք, սիրելի պարո՞ն, թէ քուեշին չափ վարպետորէն կընա՞ք չափել սուրբ:

— Կը տեսնէք թէ սուր չունիմ քովս, ըստ անգլիացին: Անգէն մարդու մը քաջութի՞ւն պիտի ձախէք:

— Կը յուսամ թէ ձեր, տան մէջ սուր ունիք, պատասխանեց տ'Արդանեան։ Ամէն պարագայի մէջ, և երկու հատ ունիմ և եթէ կ'ուզէք, մէկ սուրին համար կը խաղամ ձեղի հետ։

— Հարկ չկայ, ըստ անդլիացին, այդ տեսակ գործիքներ բաւական ունիմ։

— Լաւ ուրեմն, արժանընտիր ազնուական, աւելցուց տ'Արդանեան, ամէնէն երկար սուբը ընտրեցէք և այս իրիկուն եկէք ցոյց տալու ինձի։

— Ո՞ւր, եթէ կը հաճիք։

— Լիւքսէնպուրկի ետին, սիրուն թաղ մըն է հոն այն կարդի պառյափի մը համար զոր կ'առաջարկեմ ձեղի։

— Լաւ, կուզամ։

— Ժամը քանի՞ն։

— Վեցին։

— Աղէկ միաքս ինկաւ, հաւանաբար մէկ երկու բարեկամ ունիք։

— Երեք բարեկամ ունիմ, որոնք պատիւ պիտի համարեն իմ խաղս խաղալու։

— Երեք, սքանչելի է։ Ի՞նչ ալ աղւոր յարմարեցաւ, պատասխանեց տ'Արդանեան։ Ճիշտ իմ հուշիւս կուզալ։

— Հիմա ըսէք թէ ո՛վ էք զուք, հարցուց անդլիացին։

— Ես տ'Արդանեանն եմ, կասքօնցի ազնուական, Տէղ'էսատի գունդին մէջ պահակ։ Իսկ դո՞ւք։

— Ես Լորա Ուժնպըն եմ, Շէֆիլտի պառուր։

— Լաւ, ծառայ եմ, պառուն, ըստ տ'Արդանեան, թէև գուք այնպիսի անուններ ունիք, զորագուար է միտք պահել։

— Եւ ձին մորակելով սրարշատ մնկնեցաւ ու Բարիզի ձամբան բռնեց։

Տ'Արդանեան, ինչպէս որ ասանկ պարագաներու մէջ սովոր էր ընկելու, ուղղակի Աթօսի տունը գնաց։

Աթօս երկնցած էր մեծ բազմոցի մը վրայ և այն տեղ, ինչպէս որ ըստ էր, կ'սպասէր որ իր ուղամական պիտոյքները գային գոնք։

Տ'Արդանեան Աթօսին պտամեց անցած դարձածը, առանց սակայն վարախ կոմսին նամակին վրայ ըան մը ըսելու։

Աթօս ուրախացաւ իմանալով որ իր բարեկամը անդլիացիի մը հետ պիտի մնամարտէր։ Արդէն ըսինք որ իր երազն էր այս։

Իսկոյն մարդ զրկեցին Բօրթօսն ու Արամիսը կանչելու և խնդիրը պատամեցին անոնց։

Բօրթօս սուրը պատեանէն հանեց և սկսաւ պատին դէմ շարժել, մերթ ընդ մերթ ընկըրկելով և պարողի մը պէս ծռմբակելով։ Արամիս, որ իր քերթուածին կ'աշխատէր շարունակ, Աթօսին մասնասենեակին մէջ փակուեցաւ և աղաչեց որ ոուրը պատեանէն հանելու առենը եկած ժամանակ միայն իմաց տան իրեն։

Աթօս նշանացի հրամաքեց կրիմոյին որ գինի ըերէ։

Իսկ տ'Արդանեան պղտիկ յատակագիծ մը պատրաստեց ինքնիրեն, որուն գործադրութիւնը վերջէն պիտի տեսնենք և որմէ կը յուսար շնորհալի արկած մը, ինչպէս որ կը տեսնուէր ժամաներէն, որոնք երբեմն երբեմն կ'անցնէին գէմքին վրայէն և անոր եւ բազանքը կը յայտնէին։

Q.

ԱՆԳԼԻՅԱՆՑԻ ԵՒ ՖՐԱՆՍՈՒԱՆՑԻ

Որոշեալ ժամուն, չորս հրացանակի բները իրենց սղասաւորներուն հետ գոցին Լիւքսէնպուրի և առաջ, շրջապատի մը մէջ, որ այծերուն թողուած էր։ Աթօս ստակ տուաւ հովիւին որ հեռանաց։ Սպասաւորները սրաշտոն սահցան պահակութիւն ընելու։

Հաստ չանցած, լրին խումբ մը մօտեցաւ նոյն շրջապատին, ներս մտաւ և հրացանակի բներուն քով և կաւ։ Յետոյ, անդքծովեան սովորութեան համեմատ, ներկայացումները տեղի ունեցան։

Անդպացիները ամենքն ալ բարձրաստիճան ահա ձեր էին։ Հետեւապէս, իրենց հակառակորդներուն այլանդակ անունները ո՛չ միայն զարմանք, այլ նաև մոտահագութիւն պատճառեցին հրացանակի բներուն։

— Բայց բարձեալ ըստ լորտ Ուինդը, երբ երեք բարեկամները իրենց անունը յախնեցին, չենք գիտեր թէ ո՛վ էք և արդարի անուններ կրող մարդոց հետ չենք մենամարտիր։ Ատոնք հովիւներու աշնուներ են։

— Արդարեւ, ինչպէս կ'ենթագրէք, Միլորա, ինչ անուններ են, ըստ Աթօս։

— Ուստի աւելի մեծ փափաք մը ունինք ձեր բուն անունները գիտնալու, պատասխանեց անդպացին։

— Սակայն մեղի հետ խաղալու յանձնառու և զաք առանց մեր անունները գիտնալու, ըստ Աթօս, և մեր երկու ձիերը շահեցաք։

— Ճիշտ է, բայց այն առեն մեր դրամը միայն վտանգի մէջ կը դնէինք, մինչդեռ հրմա մեր արիւնը վտանգի մէջ պիտի դնենք։ Մարդ ամէնուն հետ կը խաղայ, բայց հաւասարին հետ կը մենամարտի։

— Ճիշտ է, ըստ Աթօս, և չորս անդլիացիներէն այն՝ որուն հետ պիտի կռուէր, մէկդի կանչելով, իր անունը յայտնեց։

Տօրթօս և Արամիտ ալ այնպէս ըրին։

— Ասիկա կը բաւէ, ըստ Աթօս իր հակառակորդ գին, և զիս պէտք եղածին չափ աղնուական կը գանէք, որպէս զի չնորհ ընէք ինձի հետ մենամարտելու։

— Այս, պարսն, ըստ անդլիացին խոնարհելով։

— Լա՛ւ ուրեմն, հիմա կ'ուզէք որ բան մը ըսկա ձեզի, աւելցուց Աթօս պս զօրէն։

— Ի՞ո՞չ, հարցուց անդլիացին։

— Սա է թէ շատ աւելի աղէկ պիտի ընէք եթէ չստիպէիք զիս անունն յայտնելու։

— Ինչո՞ւ։

— Վասնզի ամէն մարդ զիս մեռած կը կարծէ և պատճառներ ունիմ փափաքելու որ ողջ ըլլալս մէկը չզիտնաց։ Ուստի պիտի ստիպուիմ ձեզ սպաննելու, որպէսզի գաղտնիքո երեան չելլէ։

Անդլիացին Աթօսի երեսը հայեցաւ, կարծելով թէ կատակ կ'ընէր, բայց Աթօս կատակ չէր ըներ ամեննեին։

— Պարսննե՛ր, պատրաստ էք, ըստ Աթօս խօսքը ուղղելով իր ընկերներուն և հակառակորդներուն։

— Այս, պատասխանեցին անդլիացիները և ֆրանսպացիները միաբերան։

— Ուրեմն սկսինք, ըստ Աթօս։
Եւ իսկոյն ութը սուրեր փայլեցան մարը մանող

արեին ճառագայթներուն մէջ : Պայքարը սկսաւ կրկնապէս թշնամի եղող մարդերու միջև բնական եղող կատաղութիւնով :

Աթօս սուրը կը շարժէր այնքան հանդարտորէն ու այնքան մէթոտիկ կերպով որ կարծես թէ զինավարժեան սրահի մը մէջ կը գտնուէր :

Բօրթօս Շահնթիցի արկածէն ի վեր իր վրայ ունեցած չափաղանց վատահութիւնը ուղղելով, նրբամտութեամբ կը շարժէր սուրը :

Սրամիս, որ իր քերթուածին երբորդ նուագը պիտի աւարտէր, կ'ածապարէր ստիպողական գործ ունեցող մարդու մը պէս :

Ամէնէն առաջ Աթօս սպաննեց իր հակառակորդը : Հարուած մը միայն տուած էր անոր, բայց, ինչպէս արդէն առաջուընէ ըսեր էր, այդ հարուածը մահացու եղած էր : Սուրը սրտին մէջ միտուեր էր :

Յետոյ Բօրթօս իր հակառակորդը խոտին վրայ փռեց, անոր ազգը ըակած ըլլալով : Եւ որովհետեւ այն առեն Անդլիացին, առանց այլեւս գիմադրութիւն ընելու, սուրը յանձնած էր, Բօրթօս թեւերուն մէջ առա գայն ու կառքը տարաւ :

Արամիս իր հակառակօրդը այնքան ետ հրեց որ յիսուն քայլի չափ նահանջելէ ետք, անիկա վերջապէս վասիստ և անհետ եղաւ սպասաւըներուն ծաղրանքին մէջ :

Գալով ա'Արդանեանի, պարզապէս և միմիայն պաշտպանողական ընթացք մը բռնած էր : Յետոյ, երբ տեսաւ որ հակառակորդը շատ յոգնած է, ուժգին հարուածով մը անոր սուրը ձեռքէն թոցուց : Պատոնը, տեսնելով որ անզէն մնացած է, երկու երեք քայլ նահանջեց, բայց նոյն պահուն ստքը սահեցաւ և կը ունակի վրայ ինիսաւ :

Տ'Արդանեան խոյացաւ անոր վրայ և սուրը կոկորդին վրայ դրաւ :

— Կրնացի սպաննել ձեզ, պա՛րոն, ըսաւ անդլիացին, ձեր կեանքը ձեռքիս մէջ է, բայց կը շնորհեմ ձեզ ձեր քրոջ սիրոյն համար :

Տ'Արդանեան շատ ուրախ էր : Գործադրած էր այն յատակագիծը, զոր առաջուընէ որոշած էր և որուն յաջողութիւնը իր դէմքին վրայ բերած էր այն ժայիտները, որոնց խօսքը ըրինք :

Անդլիացին, այսպիսի համոյակատար աղնուականի մը հետ գործ ունենալուն վրայ հրճուելով, ա'Արդանեանը թեւերուն մէջ սեղմեց, զգուանքներ շոալեց երեք հրացանակիրներուն և որովհետև Բօրթօսի հակառակորդը արդէն կառքին մէջ զնաեղուած էր Արամիսինը փախած էր, մեռնողին հոդ տարին :

Երբ Բօրթօս ու Արամիս անոր զգեսաները կը հանէն յուսալով որ վերքը մահացաւ չէր, խոշոր քսակ մը ինկաւ գոտիէն : Տ'Արդանեան առաւ և լորտ Ուինդըրին տուաւ :

— Ի՞նչ կ'ուղէք որ ընեմ այս քսակը, ըսաւ անգլիացին :

— Ընտանիքին կը յանձնէք, ըսաւ ա'Արդանեան :

— Ընտանիքին համար կարևորութիւն չունի այս քսակը : Տամնեհինդ հուզար ոսկիի եկամուտ մը կը ժառանդէ : Այս քսակը պահեցէք և ձեր սպասաւըներուն տուէք :

Տ'Արդանեան գրագանը դրաւ քսակը :

— Եւ հիմա, երիտասարդ բարեկամս, վասնղի յուսամ թէ կը ներէք ինծի այս անունը տալու ձեզ, ըսաւ լորտ Ուինդըր, այս իրիկուն իսկ, եթէ հաճիք, պիտի ներկայացնեմ ձեզ քրոջս, լէտի Քէրիքի : Կ'ուղեմ որ ան ալ իր պաշտպանութիւնը ընծայէ ձեզի և որովհետև պալստին մէջ յորդ կը վայելէ : Թերևս

ապագային մէջ անոր բարեխօսութիւնը օգտակար ըլլայ ձեզի :

Տ'Արդանեան ուրախութենէն կասկարմիք եղաւ և խոնարհեցաւ իրեւ հաւանութեան նշան :

Այդ միջոցին Աթօռ ա՛Արդանեանի մատեցած էր :

— Այդ քսակը ի՞նչ ընելու մտադիր էք, ըստ ականջն ի վար :

— Միտքս դրած էի ձեզի յանձնել, սիրելի Աթօռ :

— Ինձի՞ և ինչո՞ւ :

— Որովհետեւ դուք սուանհեցիք դոյն, և անոք ունեցածին ժառանդորդը դուք էք :

— Ես թշնամիք մը ժառանդութ, ըստ Աթօռ Որի՞ տեղ գրիք զիս :

— Պատերազմի մէջ սովորութիւնը աս է, ըստ ա՛Արդանեան : Ինչո՞ւ մնամարտի մէջ ալ ասան չըլլայ :

— Նոյն իսկ պատերազմի գաշտին վրայ ես երբեք այդպիսի բան ըրած չեմ, ըստ Աթօռ :

Տօրթօս ուսեւը թոթուեց, իսկ Արամիս շրջունքի շարժումով մը իրաւունք տուաւ Աթօռի :

— Աս առնեն այս դրամը սպասաւորներուն տանք, ինչպէս յանձնարարեց լորու Աթինը, ըստ ա՛Արդանեան :

— Այս', ըստ Աթօռ, տանք, քայլ ո՛չ մի՛ր, ալ անգլացի սպասաւորներուն :

Աթօռ տուաւ քսակը և կառասլա ին նետեց :

— Ձեզի և ձեր ընկերներուն համար է, ըստ :

Բնաւ դրամ չունեցող մէկու մը այս վեհանձնութիւնը նոյն իսկ Տօրթօսի ուշադրութիւնը գրաւեց և քրանտական այս վեհողի արարքը, լորու Աթինացը և իւ բառեկամին կողմէ ուստաւելով, ամէն տեղ մեծ յաջողութիւն գրաւ, բաց ի Կոբմոյէն, Մոսքզոնէն, Բլանչէն, և Գուղէնէն :

Լորու Ուխնդըր, ա՛Արդանեանէն բաժնուած առնեն, անոր տուաւ իր քրոջ հասցէն, որ էր Յլաս Ռուայալ թիւ Յ: Սյն առեն շատ յարգի էր այս թաղը: Ասկէ զատ, անգլիացին խոստացաւ գալ զինքը տանել քրոջը ներկայացնելու համար: Տ'Արդանեան ժամ, Յ ի համար Աթօռի առւնը ժամադրութիւն տուաւ :

Միէտափին ներկայացուիլը շատ կ'զրաղեցնէր միք կառքօնին միտքը: Կը յիշէր թէ ինչ տուրօրինակ եղանակով մը այս կինը մինչեւ հիմա խառնուած էր իր կեանքին մէջ: Իր համոզումով, անիկա Կարահինալին անձնուէրներէն մէկն էր և սակայն կ'զգար թէ անտես զիտալի կերպով կը տարուէր զէպ ի Միէտին այնպիսի զգացումով մը, որուն ի՞նչ ըլլալը չի հասկցուիր: Իր միակ վախր սա էր որ Միէտին կը չճանշնար զինքը իրեւ Մէտին և Տուվոր մէջ հանդիպած մարդը: Այս տանն պիտի զիտնար թէ ինք Մ: ալ Դուէլիլի բարեկամներէն մէկն էր և հնուեաբար նոգիով ու մարտինով նըւիրուած էր թագաւորին ինչ որ կորանցնել պիտի տար թու առաւելութիւններուն մէկ մասը, քանի որ Միէտին կրզմէ ճանցուելով, ինչպէս ինք կը ճանշար զայն, խազը հաւասար պիտի ըլլար: Գալով այն ընդուիլին, որ կ'սկսէր Միէտին և Վարտի կոռուին միջև, ա՛Արդանեան շատ չէր զբաղեր անով, թէ և Մարքիդը դեռատի, գեղեցիկ ու հարուստ էր և Կարտինալին չնորհները կը վայելէր: Բայս ատարեկան ըլլալը և մանաւանդ Թարպի մէջ ծնիլը ոչինչ բան չէ:

Տ'Արդանեան տան երթալով փաւլուն արդուզարդ մը ըրաւ: Յետոյ Աթօռին առւնը գարձաւ և իր սովորութեան համաժամատ ամէն բան պատմեց անոր: Աթօռ մաիկ ըրաւ անոր ծրագիրներուն: Յետոյ զլուխը երերուց և խոհեմութիւն յանձնարարեց անոր տեսակ մը դառնութիւնով:

— Ի՞նչ, ըստ անոր, կորսնցուցիք կին մը, որուն

համար կ'ըսէիք թէ բարի, սիրուն, անթերի է և ահա արդէն ուրիշի մը ետեէ կը վազէք:

Տ'Արդանեան զգաց թէ Աթօսի յանդիմանութիւնը արդար էր:

— Տիկին Պօնասիէօն սրտանց կը սիրէի: Մինչդեռ Միլէտին մտքով կը սիրեմ, ըստւ: Անոր տունը երթաւ լով, կը ջանած մանաւանդ լուսարանել այս գերը, զոր անիկա կը կատարէ արդունիքին մէջ:

— Ի՞նչ, զիր կը կատարէ՛: Սակայն դժուար չէ գուշակել ձեր ըսածներէն: Կարտինալին մէկ լրտեսը պիտի ըլլայ, որ ձեզի թակարդ պիտի լարէ և որուն մէջ ձեր զլուխը վրայ պիտի տաք պարզապէտ:

— Սիրելի Աթօս, ամէն ըան ոև գոյներով կը տեսանէք կարծեմ:

— Սիրելիս, ես կիներէն կը կատկածիմ, ի՞նչ ընհմ: Գյոււս եկած է, զիտեմ, մանաւանդ խարտեաշ կիներէն կը կատկածիմ աւելի: Միլէտին խարտեաշ է, այն պէտք չըսի՞ք:

— Այս գեղեցիկ խարտեաշ դոյնով մազեր ու նի որ անկէ աղէկը չըլլար:

— Ա՛հ, բե՛զ տ'Արդանեանս, ըստւ Աթօս:

— Մտիկ ըրէք, ես կ'ուզեմ լուսաբանուիլ: Յետոյ, որբ փափաքած տեղեկութիւններս առնեմ, պիտի հեռանամ:

— Լուսաբանուցէք, ըստւ Աթօս պազարիւնով: Լորու-Ռինդը որոշուած ժամուն եկաւ, բայց Աթօս ժամանակին իմացած ըլլալով, միւս սենեալը զընաց: Հետեւապէս լորտը առանձին զտաւ տ'Արդանեանը և որովհեաւ ժամը ութիւն մօտ էր, առաւ առաւ երիտասարդը:

Եքեղ կառք մը կ'սպասէր վարը և որովհեաւ երկու ընալիք ձինքով լծուած էր, մ'կ վայրիւանէն հասաւ Բլաս Ռուայալ:

Միլէտի Քէրիկ ծանրօրէն ընդունեց տ'Արդանեանը: Իր ապարանքը շքեղատէս զարդարուած էր ու թէե շատ անդլիացիներ պատերազմին պատճառով ֆրանսա-էն կը հնուանային կամ հեռանալու վրայ էին, Միլէտին իր ապարանքին համար նոր նոր ծախքեր ըրած էր, ինչ որ կ'ապացուցանէր թէ անդլիացիները ձամբող ընդհանուր անօրինութիւնը իրմէն համար չէր:

— Տեսէք, ըստւ Ռինդը տ'Արդանեանը իր քրոջ ներկայացնելով, ահաւասիկ այս երիտասարդ ազնուածիանն էր որ կեանքս ձևոքին մէջ ունէր, բայց չուզեց իր առաւելութիւնը չարաչար գործածել թէե կրկնապէս թշնամի էինք իրարու, նախ քանի որ ևս զինքը նախատեցի և յետոյ՝ քանի որ անդլիացի նման Ռութեմի, Տիկին, շնորհակալութիւն յայտնեցէք իրմէն եթէ բարեկամութիւն կ'զգաց իմ մասիս:

Միլէտի յանքը պատեց թեթևապէս: Հազիւ նըշմարելի ամայ մը անցաւ ձական վրային և շրթունքին վրոյ երեցաւ ոյնքան տարօրինութիւնը ժպիտ մը որ այ երրեակ փափախութիւնները տեսնող երիտասարդը սարսուռ մը զգաց:

Եղբայրը բան մը չտեսաւ: Անդին դարձած էր խաղալու համար Միլէտին սիրական կապիկին հետ, որ իր թիկնոցէն քաշեր էր:

— Բարի եկաք, պա՛րօն, ըստւ Միլէտի ձայնով մը, որուն տարօրինակ քաղցրութիւնը կը հակասէր տ'Արդանեանի դիտած սրտնեզութեան նշաններուն, այսօր իմ երախտազիտութիւնս վրայ յաւիտենական իրաւունքներ ստացաք:

Այս ատեն անդլիացին ասդին դարձաւ ու մենաշմարտը պատմեց առանց մօնրաժամնութիւն մը մոռնալու: Միլէտի տմննումնէծ ուշադրութիւնով մտիլ ըրաւ: Սակայն, ո՛բչափ ալ ջանք ըրաւ իր ապաւորութիւնները յայտնի չընելու համար, դիւրաւ կը տես.

նուէր թէ այս պատմոթիւնը ռաճնլի չէր գար իրեն։
Արիւնը զլուխը կը ցատկեր և իր մանրիկ ռաքը ան-
համբեթութեամբ կը շարժէր լիջազգեստին տակէն։

Լորտ Աւինդըր բան մը չնշմարեց։ Յետոյ, երբ
պատմոթիւնը աւարտեց, տակցաւ սեղանի մը, ուր
ափաէի մը վրայ դրուած էին սպանիական զինիի ցիշ
մը և գաւաթներ։ Լեցուց երկու գաւաթ և նշանացի
հրաւիրեց ա'Արդանեանը որ խմէ։

Տ'Արդանեան զիտէր թէ անզլիացի մը շատ կը
սրանեղի եթէ մէկը մերժէ գաւաթ բաղիւն իրեն հետ։
Ուստի մօտեցաւ սեղանին և երկրորդ գաւաթիր առաւ։
Սակայն ու շադրութենէ հեռացուցած չէր Միլէտին, ու
հայելիին մէշչն դիտեց անոր զէմքին վրայ տեղի ու-
նեցած փափախութիւնը։ Հիմակ որ կը կարծէր թէ
զինքը գիտող չկայ վայրագութեան նմանող զգա-
ցում ու կ'ոգերէր անոր զէմքը մթաշկինակը կըխածնէր
ակրանի բովը։

Նոն պահուն ներս մտաւ այն նորատի սիրուն
սենեկապանութին, զոր ա'Արդանեան տեսած էր ար-
դէն։ Անզլիերէն լիզուով քանի մը խօսք ըստ լորտ
Աւինդըրի, որ խիօն ա'Արդանեանէն արտօնութիւն
ինսդրեց դուրս ելելու, բաելով թէ իր ներկայութիւնը
պահանջող զյործը ստիպողական էր։ Լորտը պատրի-
րեց քրոջը որ իր ընթացքին համար ներուղութիւն
խնդրէ ա'Արդանեանէն։

Տ'Արդանեան լորտ Աւինդըրին ձեռքը սեղմեց և
Միլէտին քովը եկաւ։ Անոր զէմքը, զարմանալի շար-
ժականութիւնով մը, վերստացած էր իր շնորհալի ար-
տայայտութիւնը։ Միայն թաշկինակին վրայ գանուած
արեան քանի մը բիծեր ցոյց կուտային թէ շրթունքը
իստած էր սրբւուտելու սատիճան։

Այդ շրթունքը հիանալի էր։ Բուռախ (Աւրնան)
կը նմանէր։

Խօսակցութիւնը զուարթ երկոյթ մը առաւ։ Մի-
լէտի ինքզինքը բոլորովին գտած կ'երեար։ Պատմաց
թէ լորտ Աւինդըր իր տագրն էր, ո'չ թէ եղբայրը։
Միլէտին ամուսնացած էր անոր պղտիկ եղբօրը հետ,
որ այրի ձգած էր զինք մէկ զաւակով։ Այդ զաւակը
իսկ ժառանգորդն էր լորտ Աւինդըրի, եթէ լորտ
Աւինդըր չամուսնանար։ Այս ամէնը ա'Արդանեանին
ընդնշմարել կուտար քոզ մը, որ բան մը կը ծածկէր,
բայց տակաւին այդ քոզին տակ գտնուածը չէր տես-
եր։

Եւ յետոյ, կէս ժամուան խօսակցութիւնէ ետք,
ա'Արդանեան համոզուած էր թէ Միլէտի իր հայրենա-
կիցն էր։ Ֆրանսիերէնը կը խօսէր այնքան մաքուր ու
այնուուչ կերպով որ այս մասին բնաւ տարակոյս չէր
թողուր։

Տ'Արդանեան կնամնծար խօսքէր ու անձնուիրու-
թեան ցրցեր ըրաւ։ Մոր կասքօնին բերնէն ելած ամէն
անհամ խօսքերուն Երիտափ ժապուցաւ բարեացակամու-
թեանք։ Բամնուելու ժամը հասաւ։ Տ'Արդանեան հրա-
մէշտ առաւ Միլէտիէն ու դուրս ելաւ մարդոց ամէնէն
երջանիկը համարելով ինքզինքը։

Սանդուղին վրայ հանդիպեցաւ սիրուն սենեկապա-
նուէիին, որ անցնելու ատեն մեղմով դպաւ ա'Արդան-
եանի, և կասկարմիր կարելով, զպած ոլլալուն համար
ներում ինսդրեց այնքան անուշ ձայնով մը որ ներումը
իսկոյն շնորհուեցաւ իրեն։

Տ'Արդանեան յաջորդ օրը նորէն եկաւ և առջի օր-
ութիւնէ աւելի լաւ ընդունելութիւն գտաւ։ Լորտ Աւին-
դըր հնա չէր և Միլէտին էր որ այս անգամ պատիւներ
ըբաւ իրեն Կարծես մնծ համակրութիւն մը ցոյց կու-
տար անոր։ Հարզուց թէ ուր տեղացի էր, թէ իր բա-
րեկամները սրո՞նք էին, թէ երբեմն մոքէն չէր անցը-
նէր զ. Կարտինալին ծառայութեան մէջ մոնելու։

Տ'Արդանեան, որ, ինչպէս գիտենք, քսան տարեկան ըլլալուն հակառակ շատ խոհեմ էր յիշեց այն առեն Միլէտին հանդէպ իր սնուցած կասկածները։ Մեծ գովեատ տուաւ Ն. Բարձրութեան, ըստ թէ Կարտինուին պահակախումբին մէջ պիտի մտնէր անշուշտ եթէ Մ. որ Դաէվիլին տեղ Մ. որ Բավուան ձանչցած ըլլար։

Միլէտի խօսակցութեան նիւթը փոխեց տուանց ո՛ւ և է կեղծիքի, ու ամենաանփոյթ եղանակով մը հարցուց տ'Արդանեանի թէ Անդլիա գացո՞ծ էր երեւք։

Տ'Արդանեան պատասխանեց թէ Մ. որ Դոէվիլ Անգլիա զրկած էր զինք, որպէսողի պակսած ձիերու տեղը լեցնելու համար սակարկութիւն ընէ և թէ նոյն իսկ չորս ձի բերած էր հետօք իրեւ նմոյշ։

Միլէտի, խօսակցութեան ժամանակ, երկու երեք անդամ շրթունքը խածաւ։ Գործը խորամանկ կասքօնի մը հետ էր։

Տ'Արդանեան առջի օրուան պէս միենոյն ժամուն հեռացաւ և նրբանցքին մէջ նորէն հանդիպեցաւ սիրուն սենեկապահուհին՝ Քէտաթի։ Այս վերջինը իր երեսը նայեցաւ բարեացակամութեան այնպիսի արտայայտութիւնով մը որուն մասին էարելի չէր սխալի։ Բայց տ'Արդանեան այնչափ զբաղած էր տիրուհիով որ մինակ անոր վերաբերող բաները կը նշմարէր։

Տ'Արդանեան երրորդ և չորրորդ օրերը նորէն եկաւ Միլէտիին բնակարանը և ամէն անդամուն ալ Միլէտի հետզհետէ աւելի շնորհալի ընդունելութիւն մը ըրաւ։

Ամէն իրիկուն, ըլլայ նախասենեակին, նրբանցքին մէջ և կամ սանդուղին վրայ, երիտասարդը կը հանդիպէր սիրուն սենեկապահուհին։

Բայց, ինչպէս ըսինք, տ'Արդանեան ուշադրութիւն չէր ըներ խեղճ Քէտաթիին այս յարատեւութեան։

Է.

Փ Ա Խ Ա Ն Ա Բ Դ Ի Ճ Ա Շ Ա Ր Ա Ը

Սակայն մենամարար, որուն մէջ Յօրթօս այնքան փայլուն զեր մը խաղացած էր, վոխանորդուհին ճաշը մոռցնել տուած չէր իրեն։

Յաջորդ օրը, ժամը մէկին ժօտ, վերջին անգամ մըն ալ իր վրան վլուխը մաքրել տուաւ Մուսքզօնին ու դէպ ի Աւրս փողոցը երթալու համար ճամբայ ելաւ կը կնակի բախտաւոր մարզու մը քալուածքով։

Սիրտը կը բռպախէր, բայց ո՛չ թէ նորածիլ ու անհամբեր սիրով մը, ինչպէս տ'Արդանեանինը։ Ո՛չ, նիւթական շահ մըն էր որ կը մտբակէր իր արիւնը։ Վերջապէս ներս պիտի մտնէր այն խորհրդաւոր սեմչն և պիտի ելլէր այն անծանօթ սանդուղին, ուրիշ մէկիկ մէկիկ ելած էին Տիրար Քօքընարի սակիները։ Իրապէս պիտի տեսնէր կաշիէ մնտուկ մը, որուն պատկերը քսան անգամ տեսած էր իր երազներուն մէջ, երկանածեւ ու խորունկ մնառուկ մը։ Կղզուած, գեաբին գամուած։ Այս սնտուկին խօսքը յաճախ լսած էր և հրմա, փոխանորդուհին իրաւ է թէ քիչ սը նիհար բայց ոչ նուազ վայելուչ ձեռքերը պիտի բանալին զայն իր հիացիկ նայուածքին առջեւ։

Եւ յեայց ինք, թափառական, աղքատ, ընտանեցուրկ մարդք, պանդոկներու, կապելաներու, գինեառաներու վարժուած զինուորը, շատ անգամ պատահական ճաշերով զոհ ըլլալու ստիպուած որկրամովը տունի կերակուրներ պիտի ուտէր, հանգիստ տուն անդ պիտի վայելէր ու պիտի թողուր որ իրեն շոալուին այն մանր մունը հոգածութիւնները, որոնք

աւելի ախորժելի կուղան չարքաշ մարդերու, ինչպէս
կ'ըսեն հին զինուորները :

Ամէն օր գալ իբրև հօրեղբօրորդի նստիլ պատ-
ւական սեղան մը, ծերունի փոխանորդին դեղնած ու
խորշոմած ճակատը զուարթացնել, անոր երիտասարդ
գրագիրները փետուել քիչ մը, պասել, բաս-ի և լա-
նովնել (խաղի տեսակներ) սովըեցնել անոնց ամէնէն
նուրը և գործնական ձեռով և մէկ ժամուան մէջ անոնց
տուած դասին փոխարէն իբրև զարձք ստանալ անոնց
միամեռայ ինայութիւնները, այս ամէնը մէծ ուրախու-
թիւն կը պատճառէին Բօրթօսի :

Հրացանակիրը ասէ անկէ լսած էր այն բոլոր
բամբասանքները, որոնք այն ատենեն իսկ կը տարա-
ձայնուէին փոխանորդներու վրայ և անոնց մահուընէն
ետք ալ շարունակեցին, այսինքն կծծիութիւն, հաշիվ
կրծառում, ծոմապահութիւն, բայց որովհեաև վիրջպակէս,
— քանի մը ծայրացն խնայութիւններէ զատ, ոոր
Բօրթօս միշտ անդէս դտած էր, — փոխանորդունին
բաւական առատածեն տեսեր էր, ուստի յուսաց որ
վայիրուչ կերպով զարգարուած առն մը պիտի գտնէ :

Սակայն, զրանը առջև հրացանակիրը քիչ մը
կասկածեցաւ Սնոր մուտքը հրապուրիչ չէր: Գարշահոռ
ու մթին անցք մը և, ուսնդուղ մը, որ հազիւ լոյս
կ'առնէր մօտակայ բակէ մը: Առաջին յարկը, ցած ու
կոան Շողըլէի մէծ դրան պէս խոշոր գամերով եր-
կաթուած դուռ մը:

Բօրթօս դրանը զարկուած մատովը: Բարձրահասակ,
տժզոյն և չկարուած մազերու անտառի մը տակ թաղ-
ուած գրագիր մը եկաւ զուռը բացաւ և ողջունեց
ա՛նապիսի մարդու մը երեւոյթովը, որ ստիպուած է
ուրիշի մը անձին վրայ յարգել բարձր հասակը, որ ոյժ
կը ցուցնէ, զինուորական զգեստը, որ վիճակը կը
յայտնէ և կարմրագոյն երեսը, որ լաւ ապրելու սովո-
րութիւնը կը ցուցնէ:

Առաջընին ետեւ կը գանուէր աւելի պղտիկ գրագիր
մը, անոր ետեւ աւելի մէծ գրագիր մը, ու ասոր ալ
ետեւէ՝ ատաներկու տարու զրագիր մը:

Ամէն քը երեքուէս զրագիր, ինչ որ այն ժա-
մանակին համար, նշան մըն էր թէ Բօրթօս խիստ բա-
նուկ զրամանեակի մը մէջ կը գանուէր:

Թէեւ հրացանակիրը ժամը մէկին միայն պիտի
գար, բայց փոխանորդունին կէս օրէն ի վեր ակնդէտ
կ'սպասէր և կը յուսար որ իր սիրահարը աւելի կանուխ
պիտի գար օրտին ու թերեւս նաև ստամոքսին պա-
հանջումով:

Հետեւաղէս Տիկին Յօքընար յարկաբաժնին գուռ-
նէն եկաւ զրամթէ ճիշդ այն փայրկեանին երբ իր հիւրը
սանդուղին դուռնէն կը ժամանէր: Սրժանընտիր կնոջ
տեսքը մեծ շփոթութիւնէ մը ազատեց Բօրթօսը: Գրա-
գիրները հետաքրքիր կերպով կը նայէին և Բօրթօս,
ինչ ըսկիքը չփանալով, անխօս կեցած էր:

— Զօրեղբօրդորդիս է, պոռաց փոխանորդունին:
Եկէ՞ք, եկէ՞ք, Մ. Բօրթօս:

Բօրթօս անունը իր ազգեցութիւնը ըրաւ գրագիր-
ներուն վրայ, որոնք սկան ինդալ, բայց Բօրթօս աս-
դին դարձաւ և բոլոր գէմքերը երենց լրջութիւնը վե-
րատացան:

Փոխանորդին առանձնասենեւակը լացին, անցնելէ
ետք նախասենեակէն, ուր կը գանուէին զրագիրները և
աշխատութեան սենեակէն, ուր պէտք էինգտնուիլամոք:
Այս վերջին սենեակը տեսակ մը սև սրահ էր, թուղ-
թերով զարդարուած: Անկէ դուրս ելան, խօհանոցը
իրենց աջ կողմը թողուցին և մտան ընդունելութեան
սրահը:

Իրարու հետ հաղորդակցող այս բոլոր սենեակները
աւ գաղափարներ չէին ներշնչեր Բօրթօսի: Խօսքերը
պիտի լսուէին հեռուէն, բայց դուռներուն պատճառով:

Յետոյ, անցած առենը, արագ և խուղարկու ակնարկ
մը ձգած էր խոհանոցէն ներս և ինքնիրեն կը խոստու
վանէր, ի մեծ ցաւ իրեն և յամօթ փոխանորդուհին,
թէ տեսած չէր այն կրակը, այն ողեւորութիւնը այն
շարժումը, որոնք ճոխ հացկերոյթի մը ատեն սովորա-
բար կը տիրեն որկրամոլութեան որբավայրին մէջ :

Փոխանորդը անշուշտ առաջուընէ տեղեկութիւ-
ունէր այս այցելութենէն, վամպի ո' և է զարմանք
ցայց չտուաւ տեսնելով Յօրթօնը, որ անոր մօտեցաւ
համարձակ նրեւոյթով մը և ողջունեց քաղաքավարու-
թեամբ:

— Կ'երեայ թէ ազգական ենք իրարու, Մ. Յօր-
թօն, ըստ փոխանորդը և եղէդէ թիկնաթոխին վրայ
շարժեցաւ թերուն կրթնելով:

Ծերունին, լայն ու սև վերարկուի մը մէջ փոթ-
թուած, ուր անյայտ կ'ըլլար: Իր պզափկ գոր-
շագոյն աչքերը կարմիր յսկինթներու պէս կը փայ-
լէին և իր ծամածուռ բերնին հետ կը թուէին ըլլալ
գէնքին այն մասը, ուր կեանքի հետք մնացած էր:
Դժբախտաբար սրունքները կը մնրէին ծառայել այս
ոսկրուտ մեքենային: Հինգ - վեց ամիսէ ի վեր որ այս
տկարութիւնը զգալի եղած էր, արժանընտիր փոխա-
նորդը գրէթէ իր կողջ գերին էր:

Հօրեղբօրորդին ընդունուեցաւ համակերպութիւնով,
ահա այսչափ: Եթէ Տիար Յօքընարի ոտքը ձեռքը
բռնէր, Մ. Յօրթօնի ազգականութիւնը պիտի չըն-
դունէր:

— Այս', պա՛րո՞ն, ազգական ենք, ըստ Յօրթօն
առանց շփոթելու: Սրդէն երբեք յուսացած չէր որ
խանդավառութեամբ պիտի ընդունուէր ամուսինին
կողմէ:

— Կող կողմէ ազգական ենք կարծեմ, ըստ փո-
խանորդը չարամաօրէն:

Յօրթօն չասկցաւ այս ծաղրանքին իմաստը և
միամիա հարցում մը կարծելով, քիթին տակէն խնդաց
անոր վրայ: Տիկին Քօքընար, որ գիտէր թէ միամիտ
փոխանորդը իր տեսակին մէջ խիստ հազուագէպ մարդ-
մըն էր, քիչ մը ժպտեցաւ և շատ կարմրեցաւ:

Յօրթօնի ժամանումէն ի վեր, Տիար Քօքընար
մտահոգ ակնարկ մը ձգած էր իր կաղնիէ գրասեղանին
գէմը գտնուած մեծ պահարանի մը վրայ: Յօրթօն
հասկցաւ որ այն պահարանը, թէկ իր ձեռվը չէր հա-
մապատասխանէր երազին մէջ տեսած մնառուկին, եղած
պիտի ըլլար այն երանելի մնառուկը, և ուրախ եղաւ որ
իրական պահարանը իր երազած մնառուկէն վեց ոտք
աւելի բարձրութիւն ունէր:

Տիար Քօքընար աւելի առաջ չտարաւ իր ազգաբա-
նական հստակօտութիւնները, այլ իր մտահոգ ակնարկը
պահարանէն Յօրթօնի վրայ գարձնելով ըստ:

— Մեր պարոն հօրեղբօրորդին, պատերազմի եր-
թակ առաջ, անշուշտ շնորհ պիտի ընէ անգամ մը
մնպի հետ ճաշելու, այնպէս չէ, Տիկին Քօքընար:

Այս անգամ Յօրթօն հարուածը զգաց, որովհետեւ
ստամոքսին զարկած էր: Կ'երեայ թէ Տիկին Քօքընար
ալ անլդայ չմնաց, վասնպի աւելցուց:

— Հօրեղբօրորդիս անգամ մըն ալ պիտի զգայ
եթէ աեսնէ որ լաւ ընդունելութիւն մը չենք ընկը
իրեն: Բայց հակառակ պարագային մէջ, շատ քիշ
ժամանակ ունի Բարիդ մնալու և հետեւաբար մեզ տես-
նելու: Ասոր հոմար որիտի ինդրենք իրմէ որ մեկնելէ
առաջ ո՛րքան ատեն որ որպամպելի ժամանակ ունի-
նայ, այցելէ մնպի:

— Օ՛հ, որունքներս, խե՛զն սրունքներս, ո՞ւր էք,
մը լուաց Քօքընար: Եւ փորձեց ժպտիւ:

Այս սպառութիւնը, որ Յօրթօնի սիրու տուած էր

անոր որկրամոլական յոյսերուն ի զերեւ ելլելու միջոցին, չբացանակիրը երախտապարտ ըրաւ իր պիրունին:

Ճաշի ժամը եկաւ քիչ առենքնին: Անցան ճաշասրահ որ խոհանոցին դէմը ընդարձակ ու մթին սենեակ մըն էր:

Գրագիրները, որոնց տան մէջ անուլոր անուշանուութիւններ զգացած էին, զինուորակոն ձշութիւնով մը կեցած էին, աթոռները ձևոքերնին բռնած, որպէս զի խոկոյն սեղան նստին: Արդէն հիմակութնէ կը շաբժ իրնց ծնունները գարնուրելի տրամադրութիւններով:

— Ի առականներ՝, — խորնեցաւ Յօրթօս ակնարկ մը ձգ ով երեք սովորվածկներուն վրայ վասնդի, ինչպէս կ'երեւակայուի, տառնիթիւ տարեկան կրագիրը սեղանին մասնակցելու պատիւին արժանացած չէր, — թշուականներ՝. եթէ ևս հօրեղքորորդիիս տեղ ըլլայի, տառնի որկրամոլներ չէի պահեր. Կարծիս թէ նաւարեկներ են, որո՞ք վեց շաբաթէ ի վեր պատաս մը բան կերած չեն:

Տիար Յօրթնար ներս մտաւ յարժուն թիկնաթուովը, զոր առաջ կը քշ՛ր Տիկին Յօրթնար, և որուն օդնեց Յօրթօս, որպէսզի ամուսինը մինչև սեղանին առջեւ քշեն:

Հազիւ թէ ներս մտաւ, փոխանորդը քիթը և ծնօտը շարժեց գրագիրներուն պէս:

— Օ՛հ, օ՛հ, ըսաւ, անուշարոյր ախորժաքեր առպուր մը:

— Այս ապուրը թշնչ տարօրինակ հոտ կրնայ ու նենալ, ըսաւ Յօրթօս տեսնելով անգոյն, առատ, բայց բոլորովին անհամ ապուր մը, որուն վրայ հացի քանի մը կեղեններ կը լողացին ցանցառօրէն, Արքեպիղաքոսի մը կղղեակներուն պէս:

Տիկին Յօրթնար ժպտեցաւ և անոր մէկ նշանին ամենքն ալ նստան մեծ փութով:

Ամէնէն առաջ Տիար Յօրթնարի հրամցու ին, յետոյ Յօրթօսի: Եւսոյց Տիկին Յօրթնար լեցուց իր պնակը և հացի կեղենները, առանց արգանակի, բուժնեց անհամ բեր գրագիրներուն:

Այս միջոցին ճաշասրահին գուռը ինքնիրեն բայց ուեցաւ ճռչելով և Յօրթօս, կիսարաց դրան մէջէն տեսաւ փոքրիկ գրագիրը, որ հացկերոյթին չկրնալով մասնակցիր իր հացը կ'ուտէր խոհանոցին և ճաշասրահին կրկնակի հոտերուն մէջ:

Ազուրէն ետք սպասուհին բերաւ խաշած հաւ մը, որ հրաւիրալներուն աչքերը բանալ տուաւ այնուին կերպով մը որ կ'օրծես թէ անոնք զուրու պիտի ցատակէին:

— Կը տեսնուի թէ ձեր ընտանիքը կը սիրեք, Տիկին Յօրթնար, ըստու փոխանորդը զբէթէ ոլրերգական ժայռատով մը, ահա մհծարանք մը զոր կ'ընէք ձեր հօրեղքորորդիին:

Խեղճ հա ը նիհար էր և վրան ունէր անանկ կարծր սորիթ մը, զոր չեին կրնար ծակել սոկորները: Անշուշտ այդ հաւը երկար տանը վնտած պիտի ըլլային, զայն գանելէ առաջ իր թաոխն վրայ, ու թերեւս քաշուած էր զառամատթենէն սեւննլու համար:

Եւ չորս բոլորը նայեցաւ տեսնելու համար թէ իրեն համարմատ եղող մը կա՞ր: Բայց ուրիշ բան չտեսաւ, այլ միայն բոցավառ աչքեր, որոնք կանխաւ կը լափէին այս գերազանց հուը, որ իր արհամարհանքին առարիսն եղած էր:

— Զա՞ր սատանայ, մտածեց Յօրթօս, շատ տխուր բան է աս: Ծերու մնը կը յարգեմ, բայց ո՛չ թէ խաչ շած կամ տապկա տափի ծերութիւնը:

Եւ չորս բոլ նայեցաւ տեսնելու համար թէ իրեն համարմատ եղող կա՞ր: Բայց ուրիշ բան չտեսաւ, այլ միայն բոցավառ աչքեր, որոնք կանխաւ կը լա-

փէին այս գերազանց հաւը, որ իր արհամարանքին առարկան եղած էր:

Տիկին Քօքընար պնակը իր առջև քաշեց, երկու խոչոր սև ոտքերը ճարտարօրէն անջատեց և դրաւ ամուսինին պնակին մէջ: Վիզը բրցուց և գլուխով մէկաեղ մէկ կողմ զրու իրեն համար: Թե՛ը բրցուց Բօրթօսի համար և մնացորդը գրէթէ անվթար ետ տանելու համար յանձնեց սպասութին և հաւը անյայտ եղաւ, և հրացանակիրը ժամանակ չունեցաւ քննելու այն փոփոխութիւնները, զոր յուսախարութիւնը առաջ կը բերէ դէմքերու վրայ, նկարագիրներու և խառնուածքներու համեմատ:

Հաւին տեղ բերուեցաւ խոչոր պնակ մը՝ բակլայ, որուն մէջ ոչխարի քանի մը ոսկորներ, որոնք առաջին ակնարկով միմի հետ ընկերացած պիտի կարծուէին, ինքինքնին ցոյց տալ կը ձեւացնէին:

Բայց գրագէաները այս խաբէութեան զոհ չգացին և իրենց տիրագին դէմքը համակերպութեան երեւոյթ մը ստացաւ:

Տիկին Քօքընար երիտասարդներուն բաժնեց այս կերակուրը կատարեալ տանտիկնոջ մը չափաւորութիւնով:

Կարգը գինիին եկաւ: Տիար Քօքընար փոքր շիշ մը երրորդը լեցուց երիտասարդներուն գաւաթին մէջ, գրեթէ հաւասար չափով լեցուց նաև իր գաւաթին մէջ և շիշը անցաւ իսկոյն Բօրթօսի և Տիկին Քօքընարի կողմը:

Երիտասարդները ջուր լեցուցին իրենց պուտ մը գինիին վրայ, յետոյ երբ գաւաթին կէսը խմնցին, նորէն ջուր լեցուցին և այսպէս չարունակաբար, անանկ որ ճաշին աւարտելուն՝ խմնցին ըմպէլի մը, որուն կարմիր յակինթի գոյնը առած էր ապագիռնի գոյն:

Բօրթօս երկչուութեամբ կերաւ հաւին թե՛ը և

արսուաց երբ սեղանին տակէն զգաց փոխանորդուհիին սրունքին հպումը: Խմեց նաև ծայրայեղ կերպով խնայուած գլխին կէսը և հասկցաւ թէ անրկա ուրիշ բան չէր, բայց եթէ Մօնդրէօյլի անշահ գինին, վարժ քիմքերու այդ սոսկումը:

Տիար Քօքընար տնոր այս անարատ գինիին խմելը դիտեց ու հառաջեց:

— Սա բակլաներէն պիտի ուտէ՞ք, Բօրթօս հօրեղբօրդիս, ըստ Տիկին Քօքընար, այնպիսի շեշտով մը որ ըսել կ'ուզէր. «Հաւատացէք խօսքիս, մի՛ ուտէ՞ք»:

— Կրողը տանի, մրմռաց Բօրթօս ցած ձայնով:

Յետոյ բարձրաձայն ըստ:

— Շնորհակալ եմ, հօրեղբօրդիկս, կշտացայ:

Պահ մը լուսութիւն տիրեց: Բօրթօս չէր գիշեր թէ ե՛նչ ընէ: Փոխանորդը քանի մը անդամ կրկնեց. —Ա՛ն, Տիկին Քօքընար, կը չնորհաւորեմ ձեզ, ձեր պատրաստած ճաշը ճշմարիտ խնջոյք մըն էր: Առ ո՞րչափ կերպայ:

Բօրթօս կարծեց թէ իր քիթին կը խնդան և սկսաւ պեխները ոլորել և յօնքը պառտել: Բայց Տիկին Քօքընարի սրունքը եկաւ մեղմով դպաւ իր սրունքին, խորհուրդ տալով որ համբերէ:

Այս լուսութիւնը և սպասարկութեան ընդհատումը, որոնցմէ Բօրթօս բան մը չէր հասկցած, ընդհակառակը սոսկալի նշանակութիւն մը ունէին գրագիրներուն համար: Փոխանորդին մէկ ակնարկին վրայ, որուն կ'ընկերանար Տիկին Քօքընարի ժայռաբ, սեղանէն եղան ծանր ծանր, իրենց անձեռոցները ծալնեցին ա'լ աւելի ծանր կերպով, յետոյ բարեւնցին և դուրս ելան:

— Գացէ՞ք երիտասարդնե՛ր, գացէք ու մարսեցէք աշխատելով, ըստ փոխանորդը ծանրօրէն:

Գրագիրներուն մեկնելէն ետք, Տիկին Քօքընար ոտք ելաւ և պահարանէ մը դուրս հանեց կտոր մը պանիր, ուրկեւիլի անուշեղէն և կարկանդակ մը դոր ինք շինած էր նուշով և մեղրով :

Տիար Քօքընար յօնքը պոստեց, վասնզի շատ կերակուր կը տեսնէր Յօրթօս շրթունքը խածտւ, վասնզի կը տեսնէր թէ ուտելւ բան չկար :

Նայեցաւ որ բակլայի պնակը հո՞ն էր: Բակլան աներեսոյթ եղեր էր:

— Իրաւ ինչոյք է աս, պոռաց Տիար Քօքընար իր աթոռին վրայ երերակով, ճշմարիտ ինչոյք մը :

Յօրթօս իր մօտ գտնուած շիշին նայեցաւ և յուսաց թէ գինիով, հացով և պանիրով պիտի կրնայ ձաշ մը ընել. բայց գինի չկար, շիշը պտրապ էր և Մ. ու Տիկին Քօքընար չտեսնելու կը զարնէին :

— Շատ աղէկ, ըստ Յօրթօս ինքնիրեն, հաս կցայ ի՞նչ ըլլալը :

Փոքրիկ դգալ մը անուշ բերանը տարաւ և ակուաները փական Տիկին Քօքընարի կպչուն խմորեղէնովը :

— Հիմտ, ըստու, զնողութիւնը կատարեալ է: Ա՞հ, եթէ Տիկին Քօքընարի հետ իր ամուսինին պահարանը քննելու յոյս չունենայի...:

Տիար Քօքընար, ասանկ ճաշի մը հեշտութիւնը վայելելէ ետք, զոր ինք ծայրայեղութիւն կ'անուանէր, կէս օրուան հանգիստը ընելու պէտք յայտնեց: Յօրթօս կը յուսար որ Տիար Քօքընար այստեղ պիտի քնանար, բայց անիծեալ փոխանորդը խօսք հասկնալ չուց զեց: Հարկ եղաւ իր սենեակը տանիլ և մինչև որ իր պահարանին դիմացը չդրին զինք, դո՞ւ չեղաւ: Եւ յետոյ, աւելի զգուշութեան համար, իր ոտքերը դրաւ այդ պահարանին վրայ:

Փոխանորդունին Յօրթօսը տարաւ յարակից սենեակ մը, ուր սկսան հաշտութեան պայմանները որոշելու

— Կրնաք շաբաթը երեք անդամ ճաշի դալ հոս, ըստ Տիկին Քօքընար:

— Ծնորհակալ եմ, ըստ Յօրթօս, չեմ ուզեր ձեր հիւրընկալութիւնը չարաչար գործածել: Եւ յետոյ, պէտք է որ ուղմական պիտոյքներուն վրայ խորհիմ:

— Ճիշտ է, ըստ փոխանորդունին հառաջելով: Այդ ցաւալի խնդիրը կայ:

— Աւա՛զ, այո՛, ըստ Յօրթօս:

— Բայց ի՞նչ բանէ կը բաղկանայ ձեր ուղմական պիտոյքը, Մ. Յօրթօս:

— Օ՛հ, շատ բաներէ, ըստ Յօրթօս: Հրացանաւ կիրսերէ ինչպէս գիտէք, ընտրեալ զօրքեր են և պէտք ունին շատ առարկաներու, որոնք աւելօրդ են պահանդան կամ զուիցերական զօրքերուն:

— Մանրամասնեցէ՛ք:

— Բայց ատիկա կրնայ հեռուները տանիլ մեզ, ըստ Յօրթօս, որ նախամնածար կը սեպէր համարդումաւրին վրայ խօսիլ քանթէ մանրամասնութեան:

Փոխանորդունին կ'սպասէր սարսաւգին:

— Ո՞քափի կը հասնի, ըստ, կը յուսամ թէ չանցնիր...:

Կանգ առաւ, խօսքը չկրցաւ աւարտել:

— Օ՛հ, ո՛չ, ըստ Յօրթօս, երկու հազար հինգ հարիւր ֆրանքը չանցնիր, նոյն իսկ կը կարծեմ թէ ինսայութիւն ընելով, կրնամ երկու հազար ֆրանքով գործու տեսնել:

— Տէր Աստուած, երկու հազար ֆրանք, պոռաց, բայց ատիկա հարստութիւն մըն է:

Յօրթօս նշանակալից ծամածութիւն մը ըրաւ: Տիկին Քօքընար հասկցաւ:

— Մանրամասնութիւնը հասկնալ կ'ուզէի, ըստ, վասնզի շուկան շատ աղդականներ և յաճախորդներ ունենալով, զրէթէ ապահով էի որ ձեր առնելիք գինէն

հարիւրին հարիւր պակասով պիտի կրնայի ծախու առնել ձեզի պէտք եղածները :

— Ա՛ն, ա՛ն, ըսաւ Բօրթօս, ա՞դ ըսել կ'ուզէիք :

— Այո՛, սիրելի Մ. Բօրթօս, ամէնէն առաջ ձիու մը պէտք չունի՞ք :

— Այո՛ :

— Լա՛ւ, ես ձոր ուզած ձին ունիմ :

— Ա՛ն, ըսաւ Բօրթօս ուրախութեամբ, ահա ձիուն գործը լինցոււ : Կը մնայ կազմածը գտնել և այս կազմածը կը բաղկանայ այնպիսի առարկաներէ չորս հրացանակիր մը միայն կրնայ գնել և որոնց գումարը երեւք հարիւր ֆրանքը չանցնիր :

— Երեւք հարիւր ֆրանք : Լաւ, ըսենք երեւք հարիւր ֆրանք, պատասխանեց փոխանորդունին հառաջեւ :

Բօրթօս ժպանցաւ կը յիշուի թէ արդէն ունէր թամբը որ Պըքինկէմի կողմէ տրուած էու Հետեւազէս կը յուսար երեւք հարիւր ֆրանքը գրպանել :

— Յետոյ, շարունակեց սպասաւորիս ձին կայ, պայտասակ մըն ալ պէտք է ինծիւ Գալով զէնքերուն, հարկ չկայ որ այդ մասին մտածէք, որովհետեւ ունիմ :

— Զեր սպասաւորին համարձի՞ մը, աւելցուց փօխանորդունին վարանելով, բայց առիկա միծ անձնաւո բութեան մը գործ է, բարեկամ:

— Է՛ն Տիկին, ըսաւ Բօրթօս հպարտօրէն, միթէ կը կարծէք որ ես ստորին մէկն եմ :

— Ո՛չ, միայն կ'ըսէի թէ սիրուն ջորի մը երբեմն ձիու չափ կրնայ գործի գալ և ինծիւ կ'երեւայ որ ձեր Մուսքդոնին համար ջորի մը հայթայթելով . . .

— Լա՛ւ, ջորի թո՛ղ ըլլայ, ըսաւ Բօրթօս : Իրաւոնիք ունիք, ես ուստած եմ սպանիացի բարձրասահճան այձնը, որոնց բոլոր հետեւորդները ջորիի վրայ

նստած էին: Բայց հարկ է որ գարգմանակով և բոժոժներով ըլլայ ջորին:

— Դուք հանգիստ եղէք, ըսաւ փոխանորդունին :

— Կը մնայ պայտասակը, աւելցուց Բօրթօս :

— Օ՛, այդ մասին բոլորովին անհոգ եղէք, պրոաց Տիկին Քօքընար, ամուսինս հինգ վեց պայտասակ ունի, որոնց մէջէն լաւ ագոյնը կ'ընտրէք: Հատ մը կայ մանաւանդ զոր կը սիրէք գործածել իր ճամբարդութիւններուն ատեն և որ ահազին բան առնելու չափ միծ է :

— Այդ պայտասակը պարա՞պ է, հարցուց Բօրթօս միամտաբար :

— Անշուշտ սկարապէ է, պատասխանեց փոխանորդունին նոյնպէս միամտաբար :

— Ա՛ն, բայց ինծիւ պէտք եղած պայտասակը, պրոաց Բօրթօս, խիստ լիցուն պէտք է ըլլայ, սիրելիս :

Տիկին Քօքընար նոր հառաջներ արձակեց : օՄլիէռ տակախին գրած չէր իր Սփակը : Տիկին Քօքընար Սքրակոնէն առաջ է ուրեմն :

Վերջապէս ուազմական պիտոյքներուն միւս մասերն ալ յաջորդաբար վիճաբանութեան դրուեցան այս կերպով և արդիւնքը սա եղաւ որ փոխանորդունին պիտի տար ութ հարիւր ֆրանք հնչուն գրամ և պիտի հայթայթէր ձին ու ջորին, որոնք պատիւ պիտի ունենային Բօրթօսը և Մուսքդոնը պամծացնելու :

Այս պայմաններուն որոշուելէն ետք, Բօրթօս հրամաշտ առաւ Տիկին Քօքընարէն : Այս վերջինը կ'ուզէր վար դնել զայն, անսւշ ակնարկներ արձակելով, բայց Բօրթօս իր պարտականութեան պահանջումները պատրուակեց և հարկ եղաւ որ՝ փոխանորդունին տեղի տար թագաւորին :

Հրացանակիրը տաւն դարձաւ շատ անօթի և սաւափի նեղացած վիճակի մէջ :

Բ.

ՍԵՆԵԿԱՊԱՆՈՒՀՅԻ ԵՒ ՏԻՐՈՒՀԻ

Սակայն, ինչպէս ըսինք, ո՞Արդանեան, հակառակ իր խղճին ձանին և Աթօսի իմաստուն խորհուրդներուն, հետզհետէ աւելի կը սիրահարուէր Միլէտիին։ Հետեւալիս ամէն օր անվրէպ կ'երթար սիրաբանելու, վըստահ ըլլալով որ Միլէտին ալ ուշ կամ կանուխ պիտի պատասխանէր իր սիրոյն։

Իրիկուն մը երբ՝ ոսկիէ անձրեի սպասող մարդու մը պէս թեթեօրէն՝ ժամանեց Միլէտիին տունը, կառամցիկ գոան տակ հանողիակեցաւ սենեկապանուհիին։ Բայց այս անգամ սիրուն Քէղդին գոհ չեղաւ անցնելու տաեն անոր դպիկով, այլ ձեռքը բռնեց ու սեղմեց մեղմով։

— Լա՛ւ, ըսաւ ո՞Արդանեան, իր աիրուհիին կողմէ ինծի ըսելիք մը ունենալու է. թերես ժամադրակայր մը պիտի ցոյց տայ, զոր իր աիրուհին համարձակած չէ անձամբ ըսելու ինծի։

Եւ գեղանի աղջկան երեսը նայեցաւ. յաղթական երեսյթով մը։

— Կը փափաքէի երկու խօսք ըսել ձեզ, պարոն ասպետ, թոթովեց սենեկապանուհին։

— Խօսէ՛, զաւակս, խօսէ՛, ըսաւ ո՞Արդանեան, մաիկ կ'ընեմ։

— Այս տեղ կարելի չէ, ձեզի ըսելիքս շատ երկար և մանաւանդ խիստ գաղտնի է։

— Լաւ, ի՞նչպէս ընենք։

— Եթէ հաճիք ինծի հետեւիլ ըսաւ Քէղդի երկչութեամբ։

— Ուր որ ուզես կուգամ, սիրուն աղջիկ։
— Եկէ՛ք ուրեմն։

Եւ Քէղդի, որ ա՞Արդանեանի ձեռքը թողած չէր. մութ և գարձարձիկ սանդուղի մը կողմը գնաց և տասն և հինգ աստիճանի չափ վեր ելլելէ ետք. դուռ մը բացաւ։

— Ներս մտէք, Պա՛րոն ասպետ, ըսաւ, հոս առանձին պիտի ըլլանք և պիտի կրնանք խօսիլ։

— Որո՞ւնն է այս սենեկը, սիրուն աղջիկ, հարցուց ա՞Արդանեան։

— Իմս է, պա՛րոն ասպետ, տիրուհիս սենեկին հետ կը հազորդակցի սա դումնէն. բայց անհոգ եղիք, անիկա պիտի չկրնայ մեր խօսքերը լսել, կէս գիշերէն առաջ չի պառկիր բնաւ։

Տ'Արդանեան ակնարկ մը ձգեց չորս կողմը։ Պատիկ սենեկը թէ՛ նաշակի և թէ մաքրութեան կողմէ անստգիւտ էր, բայց ակամայ աչքերը սեւեռեցան այն դուռին վրայ, որ, Քէղդիի ըսածին նայելով, Միլէտիին սենեկը կը տանէր։

Քէղդի գուշակեց երիտասարդին մոքէն անցածը և հառաջ մը արձակեց։

— Ուրեմն աիրուհիս շա՞տ կը սիրէք, պարոն ասպետ, ըսաւ։

— Օհ, չեմ կրնար ըսել թէ որչափ կը սիրեմ։ Քէ՛ղդի, խննթ կ'ելլեմ անոր վրայ։

Քէղդի երկրորդ անգամ հառաջեց։

— Աւա՛զ, պարոն, ըսաւ, մհ՛ղք։

— Ի՞նչ ցաւալի բան կը տեսնես ասոր մէջ, հարցուց ա՞Արդանեան։

— Պարոն, աւելցուց Քէղդի, աիրուհիս ամենեւին

չի սիրեր ձեզ։

— Հէ՞, ըսաւ տ'Արդանեան, արդեօք ի՞նք ապըս-
պըեց ձեզի որ ատիկա ըսէք ինծի :

— Օ՛հ, ո՛չ, պարոն, ես եմ որ, ձեզի համակրած
ըլլալով. որոշեցի ըսել :

— Ենորհակալ եմ, բա՛րի Քէղգի, բայց միայն
դիտաւորութեանդ համար. վասն զի այդ յայտարարու-
թիւնը, ինչպէս դուն ալ պիտի խոստովանիս, բնաւ
հաճելի չէ :

— Այսինքն թէ չէք հաւատար ըսածիս, այն-
պէս չէ՞ :

— Մարդ միշտ դժուարաւ կը հաւտայ այդպիսի
բաներու, աղւո՛ր աղջիկս, եթէ ոչ ուրիշ բանի գէթ
արժանապատութեան համար :

— Ուրեմն չէ՞ք հաւատար խօսքիս :

— Կը խոստովանիմ թէ մինչեւ որ չհածիս քու
ըսածներդ ապացուցանել . . . :

— Ասոր ի՞նչ կ'ըսէք :

Եւ Քէղգի ծոցէն հանեց պղտիկ տումսակ մը :

— Ինծի համա՞ր է, ըսաւ տ'Արդանեան, նամակը
իսկոյն յափշտակելով :

— Ո՛չ, ուրիշին համար է :

— Ուրիշի՞ համար :

— Այո՛ :

— Անո՞ւնը, անո՞ւնը, պղուաց տ'Արդանեան :

— Հասցէն նայեցէք :

— Պարոն կոմս աը Վարտ :

Սէն Ժէրմէնի տեսարանը իսկոյն ներկայացաւ յա-
ւակնոտ կառօնին մտքին առջեւ. Մտածումի պէս
արագ շարժումով մը, պատուց պահարանը, հակառակ
Քէղգիի պոռալուն . . . :

— Օ՛հ, Աստուած իմ, պարոն ասպետ, ըսաւ ի՞նչ
կ'ընէք :

— Ե՞ս, ոչինչ, ըսաւ տ'Արդանեան և կարդաց .

«Զպատասխանեցիք իմ առաջին տոմսակիս : Տկա՞ր էք
արդեօք, կամ մոռցա՞ք թէ Տիկին կիզի պա-
րահանդէսին մէջ ի՞նչ աչքեր կ'ընէիք ինծի : Ահա
առիթը եկաւ, կո՞մս, մի՛ թողուք որ ձեռքէ փախչի» :

Տ'Արդանեան տէգունեցաւ : Իր արժանապատուու-
թիւնը վիրաւորուած էր : Իր սիրոյն մէջ ալ վիրաւոր-
ուած զգաց ինքզինքը :

— Խե՞զ սիրելի Մ. տ'Արդանեան, ըսաւ Քէղգի
կարեկից ձայնով մը և նորէն սեղմելով երիտասարդին
ձեռքը :

— Կը կարեկցիս ինծի, բարի աղջիկ, ըսաւ տ'Ար լ
դանեան :

— Օ՛հ, այո՛, բոլոր սիրտովս, վասն դի ես ալ
գիտեմ թէ ի՞նչ է սէրը :

— Սիրոյ ի՞նչ ըլլալը գիտե՞ս, ըսաւ տ'Արդանեան,
առաջին անգամ նայելով անոր երեսը ուշադրութեամբ :

— Աւա՛զ, այո՛ :

— Լա՛ւ ուրեմն, փոխանակ ինծի կարեկցելու, ա-
ւելի լսու պիտի ընես եթէ օգնես ինծի քու տիրուհիէդ
վրէժ լուծելու :

— Ի՞նչ տեսակ վրէժ լուծել կ'ուզէք :

— Կ'ուզեմ յազթանակ տանիլ անոր վրայ և ոսո-
խըս հեռացնել :

— Այդ գործին համար երբեք պիտի չօգնեմ ձեզ-
Պասպետ, ըսաւ Քէղգի աշխուժով :

— Իիսո՞ւ, հարցուց տ'Արդանեան:

— Երկու պատճառով :

— Ի՞նչ են այդ պատճառները :

— Նախ՝ տիրուհիս երբեք պիտի չսիրէ ձեզ :

— Ինչի՞ն գիտես :

— Վասնզի դուք անոր սիրտը վիրաւորեցիք :

— Ե՞ս, և ի՞նչ բանի մէջ կընամ վիրաւորած ըլլալ

զայն, ես որ ինքը ճանչնալէս ի վեր իրբեւ սարուկ կ'ապրիմ անոր ռաքերուն առջեւ, խօսէ՛, կ'աղաչեմ:

— Այդ բանը պիտի խոստովանիմ միայն այն մարդուն . . . , որ մինչև հոգիիս խորը կաբդալու կարող ըլլայ:

Տ' Սրբանեան երկրորդ անգամ նայեցաւ Քէղդիին Աղջիկը ունէր այնպիսի թարմութիւն մը և գեղեցկութիւն մը, զոր շատ գքառւհիներ պիտի՞ ուղէին գնել իրենց գինանշանները տալով:

— Քէ՛զդի, ըստւ ես քու սիրտիդ խորը պիտի կարդամ երբ որ ուղես, Այս մասին անհոգ եղիր, սիրելի աղջիկս:

Եւ համբուրեց զայն: Քէղդի այս համբոյրին տակ կոսասի պէս կարմրեցաւ:

— Օ՛, ո՛չ, պոռաց Քէղդի, դուք զիս չէք սիրնը: Տիրուհիս կը սիրել, ինչպէս ըսիք քիչ մը առաջ:

— Ասիկա արգելք մըն է որ երկրորդ պատճառը չյայտնէք ինձի:

— Երկրորդ պատճառը, պարոն տապետ, աւելցուց Քէղդի, նախ երիտասարդին համբոյրէն և յետոյ անոր աշքերուն արտայայտութենէն սիրտ առած, սա է որ սիրոյ մէջ ամէն մարդ իր հաշւոյն կ'աշխատի:

Այն ատեն միայն ա՛ Սրբանեան յիշեց Քէղդիի նուազուն ակնարկները, նախասանեալին մէջ և սանդուիին վրայ իր հանդիպումները, ամէն անգամ զէմը ելլիւն իր ձեռքի շփումները և խեղդուկ հառաջները: Բայց, տիրուհին հաճելի ըլլալու փափաքովը գրաւուած, սենեկապանուհին արհամարհած էր: Արծիւը որսացողը մնձզուկը բանի տեղ չի դներ:

Բայց այս անգամ մեր կասքօնը մէկ ակնարկով նշմարեց թէ ի՞նչ օգուտ կրնար քաղել այն սէրէն զոր Քէղդի կը խոստովանէր այնքան միամիտ կամ այնքան լիրը եղանակով մը, այսինքն վարտի կոմսին զրկուած

նամակները վար գնել տեղւոյն վրայ լրտեսել անցած դարձածը, ամէն վայրկեան մտնելով Քէղդիի սենեակը, որ իր տիրուհիին սենեակին կից էր: Նենդամիտը, ինչպէս կը տեսնուի, արդէն մտքին մէջ ևը զօհէր խեղճ աղջիկը, որպէսպի Միլէտին ձեռք անցընէ ինքնայժար կամ բռնի:

— Ե՛ ուրեմն, ըստւ աղջկան, կ'ուզե՞ս, սիրելի Քէղդի, որ ապացոյց մը տամ քեզի այն սիրոյն, որուն վրայ կը տարակուախ:

— Ո՞ր սէրը, հարցուց աղջիկը:

— Այն սէրը, զոր պատրաստ եմ քեզի համար զգալու:

— Ի՞նչ ապացոյց պէտի տաք:

— Կ'ուզե՞ս որ այս գիշեր քեզի հետ անցընեմ այն ժամանակը, զոր աիրուհիդ հետ կ'անցընեմ սովորաբար:

— Օ՛հ, այո՛, ըստւ Քէղդի, ձեռքերը իրարու զարնելով, ամենայն սիրով:

— Լա՛ ուրեմն, սիրելի աղջիկս, ըստւ ա՛ Սրբանեան թիկնաթոռի մը վրայ նստելով, հոս եկուր որ ըսեմ քեզի թէ գուն իմ տեսած բոլոր սենեկապանուհիներուս մէջ ամէնէն սիրուն ես:

Եւ անոր ըստւ այնքան աղւոր բաներ որ ինդ աղջիկը հաւտաց, քանի որ կ'ուզէր հաւտալ: Սակայն սիրուն Քէղդին ինքզինքը կը պաշտպանէր վճռաբար, մեծ զարմանք պատճառելով ա՛ Սրբանեանի:

Ժամանակը շուտով կ'անցնի երբ մարդ յարձակումով և պաշտպանութիւնով կ'զբաղի:

Կէս գիշեր զարկաւ և գրէթէ նոյն պահուն Միլէտիի սենեակին մէջ զանգակի ձայն լսուեցաւ:

— Տէ՛ր Աստուած, պոռաց Քէղդի, տիրուհիս զիս կը կանչէ: Գնա՛, շուտ գնա՛:

Տ' Սրբանեան ոտք եւաւ, զլիսարկը առաւ որպէս

թէ միտք ունէր հնազանդելու, յետոյ սանդուղին դոսուը
բացաւ և Միլէտիին շրջազգեստներուն մէջ կծկուեցաւ :

— Ի՞նչ կ'ընէք, պոռաց Քէղդի:

Տ'Արդանեան, որ առաջուընէ բանալին առած էր.
պահարանին մէջ փակուեցաւ և պատասխան չտուաւ :

— Ե՛ ուրեմն, պոռաց Միլէտի, խիստ ձայնով մը,
կը քնանա՞ք ի՞նչ կընէք որ մէջտեղ չէք ելլեր երբ
գանդակը կը զարնեմ:

Եւ ա՛ Արդանեան լսեց որ հաղորդակցութեան դուռը
բացուեցաւ բուռն կերպով:

— Ահա եկայ, Տիկին, ահա եկայ, պոռաց Քէղդի
իր տիրուհիին դէմք վազելով:

Երկուքն ալ ննջասենեակ գացին և որովհետեւ
հաղորդակցութեան դուռը բաց մնացած էր, ա՛ Արդանեան
բաւական ատեն լսեց Միլէտիին յանդիմանութիւնն-
նար իր սպասուհիին ուղղուած: Յետոյ վերջապէս հան-
դարտեցաւ և խօսակցութիւնը դարձաւ ա՛ Արդանեանի
վրայ, մինչ Քէղդի իր տիրուհին կը հանուեցնէր:

— Ե՛, ըստ Միլէտի, այս իրիկուն մեր կասքօնը
չտեսայ:

— Ի՞նչպէս, տիկին, ըստ Քէղդի, չեկա՞ւ: Արդեօք
երջանիկ ըլլալէ առաջ փոփոխամտութիւնը բռնեց:

— Օհ, ո՛չ, պէտք է որ Մ. աը Դրէվիլի կամ Մ.
տէղիսառի կողմէ վար դրուած ըլլայ, ես կը ճանչնամ
մարդո, Քէղդի, ձեռքիս մէջն է:

— Ի՞նչ պիտի ընէք անոր, Տիկին:

— Ի՞նչ պիտի ընեմ...: Սնհոգ եղիր, Քէղդի,
այդ մարդուն և իս միջև բան մը կայ զոր ինք չի
գիտեր: Թիչ մնաց որ Ն. Բարձրութեան քով իմ ունե-
ցած վարկս կորսնցնել պիտի տար ինծի: Օհ, վրէժս
պիտի լուծեմ:

— Կը կարծէի թէ կը սիրէք զինքը:

— Ե՛ս, զայն սիրեմ, կ'արհամարհեմ զայն: Ա.

պուշ մըն է. որ Լորտ Ուխնդըրի կեանքը ձեռքին մէջ
կ'ունենայ և չսպաններ զայն և երեք հարիւր հազար
ֆրանքի եկամուտ մը կորսնցնել կուտայ ինծի:

— Ճիշտ է, ըստ Քէղդի, ձեր որդին իր հօրեղ-
բօր միակ ժառանգորդն է և մինչև անոր չափահաս
ըլլալը, գուք պիտի վայելէիք անոր հարստութիւնը:

Տ'Արդանեան մինչև ոսկորներուն ծուծը սարսը-
ռաց երբ լսեց որ այդ անուշ արարածը զինքը կը յան-
դիմանէր այն սուր ձայնով զոր խօսակցութեան մէջ
այնքան դժուարութիւն կը քաշէր մնդմելու, սպաննած
չըլլալուն համար մարդ մը որ իրեն բարեկամութիւն
ցոյց տուած էր:

— Ուստի, շարունակեց Միլէտի, արդէն իսկ վը-
րէժս լուծած պիտի ըլլայի անկէ եթէ, չեմ գիտեր թէ
ինչու, կարտինալը յանձնարարած չըլլար ինծի խնա-
յուլու անոր:

— Օհ, այո՛, բայց գուք չխնայեցիք այն կնոջ
զոր կը սիրէր:

— Օհ, ֆօսուացէօռ փողոցին փերեզակուհին ըսել
կ'ուղէք, արդէն մոռցած չէ՞ թէ այդպիսի էակ մը կար:
Աղոսր վրէժ, իրաւ որ:

Պաղ քրափնք մը կը հոսէր ա՛ Արդանեանի ճակ-
տէն: Ուրեմն հրէշ մըն էր այս կինը:

Սկսաւ մտիկ ընել, բայց դժբաղդաբ որ արդու-
զարդի գործը տւարտած էր:

— Է՛ս, ըստ Միլէտի, սենեակնիդ դարձէք և
վաղը աշխատեցէք վերջապէս պատասխան մը առնել
ձեզի յանձնած նամակիս փոխարէն:

— Մ. աը վարտի նամակին համար կ'ըսէք, հար-
ցուց Քէղդի:

— Անշուշտ:

— Ահաւասիկ պարոն մը, ըստ Քէղդի, որ սա

խեղճ Մ. ա'Արդանեանի բոլորովին հակառակ երեւոյթ
մը ունի:

— Դուրս ելէք, օրիորդ, ըստ Միլէտի, գիտո-
ղութիւն չիմ սիրեր:

Տ'Արդանեան լսեց դրան գոցուիլը, յետոյ երկու
պարզունակի դրուիլը: Միլէտի այսպէս կը գոցէր իր
դուռը: Քէդդի ալ իր սենեակէն կղզեց դուռը կրցա-
ծին չափ կամաց ձայնով: Այն ատեն ա'Արդանեան պա-
հարանին դուռը հրեց:

— Ո'վ Ասառուած իմ, ի՞նչ ունիք, որքան դեղներ
էք, ըստ Քէղիցած ձայնով:

— Գարշէլի՝ արարածը, մրմռաց ա'Արդանեան:

— Լոռութիւն, լռութիւն, դուրս ելէք, ըստ
Քէդդի, իմ և Միլէտիի սենեակին միջեւ պատ մը կայ
միայն. մէկ սենեակին մէջ խօսուածը միւս սենեակին
մէջ կը լսուի:

— Ահա ձիշտ այդ պատճառով է որ դուքս պիտի
չելլեմ, ըստ ա'Արդանեան:

— Ի՞նչպէս, ըստ Քէդդի կտրմբելով:

— Կամ գէթ դուրս պիտի ելլեմ... աւելի ուշ:

Եւ Քէդդին իրեն քաշեց: Դիմադրելու միջոց չկար
ալեւո: Դիմադրութիւնը շատ աղմուկ կը հանէ: Ուստի
Քէդդի տեղի տուաւ:

Միլէտի գէմ վրէժինդրութեան շարժում մըն էր
առ: Տ'Արդանեան տեսաւ որ իրաւացի է այն խօսքը
թէ վրէժինդրութիւնը չաստուածներուն հաճոյքն է: Ուստի ա'Արդանեան կրնար գոհ ըլլալ այս նոր յաղ-
թեանակով եթէ սիրտ ունեցած ըլլար: Բայց ա'Արդան-
եան փառասիրութիւն և հպարտութիւն միայն ունէր:

Սակայն ի գովինա ա'Արդանեանի պէտք է ըսել որ
Քէղզիի վրայ իր ունեցած ազդեցութիւնը տռաջին ան-
դամ գործածեց փորձելով դիտնալ թէ ի՞նչ եղած էր
Տիկին Պօնասիէօ: Բայց խեղճ աղջիկը խաչին վրայ

երգում ըրաւ ա'Արդանեանի թէ բնաւ չփառեր, ո-
րովհետեւ իր տիրուհին կիսով միայն կը յայտնէր իր
գաղանիքները: Հսաւ միայն թէ Տիկին Պօնասիէօյի
մեռած չըլլալրւն վստահ է:

Քէդդի չէր գիտեր նաև թէ Միլէտի ի'նչ պատճա-
ռով քիչ մնացեր էր որ իր վարկը և համարումը պիտի
կորսնցնէր կարտինալին քով: Բայց այս անգամ ա'Ար-
դանեան Քէդդիէն աւելի տեղիակ էր: Որովհետեւ Մի-
լէտին տեսած էր արգիլուած նաւուն մէջ, երբ ինք
Անգլիայէն կը հեռանար, կը կանկածէր որ աղամանդ-
եաց ասեղներուն համար պիտի ըլլար անշուշտ:

— Բայց այս ամէնուն մէջ եթէ բացայաց բան մը
կար, սա էր թէ Միլէտիին իրեն դէմ ունեցած ճշմա-
րիտ ատելութեան, խօրունկ և անհաշտ ատելութեան
բուն պատճառը իր աղգրը չսպաննելն էր:

Տ'Արդանեան յաջորդ օրը Միլէտիին տունը եկաւ
նորէն: Միլէտին շատ սրտնեղած էր: Տ'Արդանեան
մտածեց որ այդ սրտնեղութեան պատճառը Մ. ար-
վարտէ պատասխան պատասխան չստանալն էր: Քէդդի
ներս մտաւ, բայց Միլէտի շատ խստութեամբ ըն-
դունեց զայն: Տ'Արդանեան մտածեց որ այդ սրտնե-
ղութեան պատճառը Մ. արվարտէ պատասխան չըս-
տանալն էր: Քէդդի ներս մտաւ, բայց Միլէտի շատ
խստութեամբ ընդունեց զայն: Տ'Արդանեանի վրայ իր
արձակած մէկ ակնարկով ըսել կ'ուզէր: «Կը տեսնէ՞ք
թէ ո'րքան կը տառապիմ ձեզի համար»:

Սակայն, քիչ ետքը, Միլէտի կակուղցաւ, ժպտե-
լով մտիկ ըրաւ ա'Արդանեանի անուշ խօսքերուն, և
նոյն իսկ ձեռքը տուաւ որ համբուրէ:

Տ'Արդանեան դուրս ելաւ չգիտնալով թէ ի'նչ
խօրհի: Բայց որովհետեւ այնպիսի երիտասարդ մըն էր,
որուն գլուխը կարելի չէր գիւրաւ գարձնել Միլէ-
տիին հետ սիրարանելով մէկանդ պլատիկ յատակագիծ
մը շմած էր մտքին մէջ:

Քէղղին տեսաւ գրան առջեւ, ու առջի իրիկուան պէս անոր սենեակը զնաց: Քէղղի յանդիմանութիւն լսեր էր, և ամրաստանուեր էր թէ անհոգ կը գտնուի: Միլէտի բան մը չէր հասկնար Վարտի կոմսին լուս-թենէն և Քէղղիին հրամայեր էր որ առառւան ժամը իննին սենեակը գայ, երրորդ նամակ մը առնելու հա-ձար:

Տ'Արդանեան խօսք առաւ Քէղղիէն որ այդ նա-մակը հետեւեալ առուու իր տունը բերէ: Խեղճ աղջիկը իր սիրահարին բոլոր ուզածները կատարելու խօսք տուաւ: Խենդ դարձած էր:

Ամէն բան անցաւ առջի օրուոն պէս: Տ'Արդան-եան իր պահարանին մէջ փակուեցաւ, Միլէտի կանչեց Քէղղին, հագուստները հանել տուաւ, ճամբեց և դու-ուը գոցեց: Տ'Արդանեան, առջի իրիկուան պէս, առ-տուան ժամը հինդին միայն տուն դարձաւ:

Ժամը տասնեւմէկին Քէղղի եկաւ, Միլէտիի նոր նամակը ձեռքը: Այս անգամ, խեղճ աղջիկը նոյն խկ փորձ չըրաւ տ'Արդանեանը արդիլելու որ նամակը չբանայ: Թողուց որ անիկա սաշափը ընէ: Հոգիով մար-մինով անձնուեր էր աղլոր զօրականին:

Տ'Արդանեան նամակը բացաւ և հետեւեալ տողերը կարդաց.

“Այս երրորդ անգամն է որ կը գրեմ ձեզ և կ'ըսեմ թէ կը սիրեմ ձեզ: Զգուշացէք որ չորրորդ անգամ չդրեմ ըսելու համար կ'ատեմ ձեզ: Եթէ կը զղջաք ինծի հետ վարուելու եղանակին վրայ, այս նամակը ձեզի յանձնող աղջիկը պիտի ըսէ ձեզ թէ ինամեծար անձ մը ի՞նչ կերպով կրնայ ներումի արժանանալ:

Տ'Արդանեան, այս նամակը կարդացած ատեն, քանի մը անգամ կարմրեցաւ և տժգունեցաւ:

— Օ՛հ, միշտ կը սիրէք զայն, ըսաւ Քէղղի, որ աչքերը պահ մը իսկ չէր հեռացուցած երիտասարդին դէմքէն:

— Ո՛չ, Քէղղի', կը սխալիս: Ա՛լ չեմ սիրեր զայն, բայց կ'ուզեմ իր արհամարհանքին վրէժը լուծել:

— Այո՛, զիտեմ ձեր վրէժինզըութիւնը: Ըսիք ինձի:

— Ի՞նչ հոգ կ'ընես, Քէղղի, զիտես որ ես միայն քեզ կը սիրեմ:

— Ի՞նչպէս կարելի է զիտնալ ատիկա:

— Այս արհամարհանքէն, զոր ցոյց պիտի տամ անոր,

Քէղղի հառաջեց:

Տ'Արդանեան զրիչ մը առաւ ու գրեց:

“Տի՛կին, մինչեւ հիմա կը տարակումէի թէ ձեր առաջին երկու նամակները ինծի ուղղուած ըլլան, այնքան ինքորինքս անարժան կը համարէի այդպիսի պատիւի մը: Ասկէ զատ, այնքան հիւանդ էի որ ամէն պարագայի մէջ պիտի վարանէի պատասխան տալու:

Բայց այսօր պէտք է որ հաւատամ ձեր ծայրայեղ բարեսրտութեանը, քանի որ ո՛չ միայն ձեր նամակը, այլ նաև ձեր սպասուհին կը հաւաստեն ինծի թէ ձենէ սիրուելու երջանկութիւնը ունիմ:

Ձեր սպասուհին պէտք չունի ինծի ըսելու թէ կնամեծար անձ մը ի՞նչ կերպով կրնայ ներումի արժա-նանալ: Ուստի այս իրիկուն ժամը 11ին պիտի գամ անձամբ ինդրելու որ ներէք ինծի: Օր մը իսկ ուշա-նալը հիմակ ինծի համար պիտի նկատուի նոր նախա-տինք մը ըրած ըլլալ ձեզի:

Այս զոր մարդոց ամէնէն երջանիկը ըրիք, ԿՈՄՄ ՏՐ ՎԱՐՏ:

Այս նամակը ամէնէն առաջ կեղծ էր, յետոյ ան-փափիկանկատութիւն էր: Նոյն իսկ, մեր արդի բար-քերուն տեսակէտով, տեսակ մը վատութիւն էր: Բայց այն ժամանակները այսպիսի փափկանկատութիւն չկար, ինչպէս կայ հիմա: Եւ յետոյ, տ'Արդանեան, ինչպէս

որ ինք ալ կը խոստովանէք, Միլէտին կը նկատէր իբրև
խիստ կարեւոր պետերու գէմ մատնութեան յանցանքով
ամբաստանուած ու անոր մասին բնաւ յարգանք չու-
նէր : Եւ սակայն, հակառակ յարգանքի այս պակասու-
թեան, կ'զգաք թէ անխոհեմ տռփանք մը կ'այրէր զի՞նք
այդ կնոջ համար : Սրհամարհանքով արբշիու տռփանք
մը կամ տեսչանք մը, ո՛րդը որ ուղէք :

Տ'Արդանեանի դիտաւորութիւնը շատ պարզ էր :
Քէղդիին սենեակէն կարելի էր մտնել աիրուհիին սեն-
եակը : Անակնևալի, ամօթի, սարսափի առաջին վայրկեա-
նէն օգուտ պիտի քաղէք Միլէտիին յաղթելու համար :
Թերեւս ձախողէք, բայց պէտք էր դիպուածին ալ բան
մը թողուլ : Ութ օրէն պատերազմը պիտի սկսէր և
պէտք էր մեկնիլ : Տ'Արդանեան ժամանակ շունէք կա-
տարեալ սէր մը հիւսելու :

— Ա՛ռ, ըստ երիտասարդը կնքուած նամակը
Քէղդիին յանձնելով և տո՛ւր Միլէտիին : Մ. աը Վար-
տի պատասխանն է :

Խեղճ Քէղդի մեռելի պէս տժդունեցաւ : Կը գու-
շակէր թէ այս գիրին պարունակութիւնը ի՞նչ էր :

— Ինծի մտիկ ըրէ, սիրելի աղջիկս, ըստ անոր
ա՞Արդանեան, կը հասկնաս թէ այս բանը պէտք է որ
սա կամ նա եղանակով վերջանայ : Միլէտի կրնայ երե-
ւան հանել թէ առաջին նամակը իս սպասաւորիս յանձ-
նեցիր, փոխանակ կոմօին սպասաւորին յանձնելու, թէ
Մ. աը Վարտի բանալիք միւս նամակները ևս բացի :
Այս առեն Միլէտի պիտի վոնտէ քեզ և աղէկ գիտես
որ իր վրէմինդրութիւնը այսչափով գոհացող կի՞ն
մը չէ :

— Աւա՛զ, ըստ Քէղդի, որո՞ւ համար ինքինքն
այս վտանգներուն ենթարկեցի :

— Ինծի համար, գիտեմ, Պաղւո՞րս, ըստ երի-

տասարդը, ուստի կ'երդնում որ երախտապարտ եմ
քեզի :

— Բայց վերջապէս ի՞նչ է այս նամակին պարու-
նակութիւնը :

— Միլէտին պիտի ըսէ քեզ :

— Օ՛հ, չեք սիրել զիս, պոռաց Քէղդի, ու ես
շատ դժբախտ եմ :

Այս յանդիմանութեան պատասխան մը կայ, որու
մասին կինները միշտ կը խաբուին : Տ'Արդանեան պա-
տասխանեց այնպիսի եղանակով մը որ Քէղդի բոլորո-
վին խաբուեցաւ :

Սակայն նամակը Միլէտիի յանձնելու որոշումը
առաջ շատ արցունք թափեց, բայց վերջապէս
որոշումը տուաւ և տ'Արդանեանի ուղածն ալ այս էր :

Սակէ զատ, տ'Արդանեան խոստացաւ որ իրիկունը
կանուխ պիտի հեռանար իր տիրուհիին քովէն և Քէղ-
դի սենեակը պիտի գար:

Այս խոստումը մխիթարեց ինեղճ Քէղդին :

թ.

ՈՒՐ ԱՐԱՄԻՍԻ ԵՒ ԲՈՐԹՈՍԻ
ԱԱԶՄԱԿԱՆ ՊԻՑՈՅՔՆԵՐՈՒԻՆ ՎՐԱՅ ԿԸ ԽՈՍՈՒԻ

Յորմէնետէ չորս բարեկամները իրենց ռազմական պիտոյքները հայթայթելու զբաղած էին, չէին կրցած այլ ևս հաւաքումներ ունենալ: Խւրաքանչիւրը առանձին կը ճաշէր ո՛ւր որ գտնուէր կամ մանաւանդ ո՛ւր որ կարենար, Միւս կողմէ, իրենց զինուորական պարտականութիւնն ալ իր բաժինը կ'առնէր այն թանկագին ժամանակէն, որ այնքան շուտով կը սահէր Ե՞րայն որոշած էին շարաթը անգամ մը, ժամը մէկին միջոցները, զիրար գտնել Աթօսի տունը, որովհետեւ Աթօս, իր ըրած երդումին համեմատ, իր տունէն գուրս չէր ելլեր ընաւ:

Քէղիին ա՛Արդանեանի տունը եկած օրը հաւաքամն օրն էր:

Հազիւ թէ Քէղիի մեկնած էր, ա՛Արդանեան թէ բու փողոց ուղղուեցաւ:

Տեսաւ որ Աթօս ու Արամիս փիլիսոփայութիւն կ'ընէին: Արամիս նորէն փափաք կը յայտնէր կրօնաւոր ըլլալու: Աթօս, իր սովորութեան համեմատ, ո՛չ կը քաջալերէր զայն և ո՛չ ալ անոր միտքը փոխելու կ'աշխատէր: Աթօս այն կարծիքէն էր թէ ամէն մարդ իր ազատ կամքին թողուելու էր: Երեք խորհուրդ չէր ատր մարդու, մինչւ որ չխնդրէին իրմէ: Եւ յետոյ, պէտք էր երկու անգամ խնդրել որ խորհուրդ մը տար:

— Ընդհանրապէս մարդ խորհուրդ կը հարցնէ և չի հեռուելի անոր, կ'ըսէր, կամ եթէ հետեւի ուրիշ:

բանի համար չէ բայց եթէ ունենալ մէկը, որուն կարենայ յանդիմանութիւն ուղղել այդ խորհուրդը առած ըլլալուն համար:

Տ'Արդանեանէն քիչ մը ետքը եկաւ Բօրթօս: Չորս բարեկամները գումարուած էին ուրեմն: Չորսն ալ տարբեր զգացումներ կը յայտնէին: Բօրթօսի դէմքը հանդարատութիւն կը ցուցնէր, ա՛Արդանեանինը յոյս, Նրամիսինը մտահոգութիւն և Աթօսինը անհոգութիւն:

Պահ մը խօսակցութիւնէ ետք, որու միջոցին Բօրթօս հասկցուց թէ բարձր դիրք ունեցող անձ մը հաճած էր զինքը այս հոգէն ազատելու յանձնառու ըլլալ, Մուսքդօն ներս մտաւ:

Եկած էր ազաէւլու Բօրթօսին, որ տուն գայ, ուր, կ'ըսէր, սղորմելի դէմքով մը, իր ներկայութիւնը անհրաժեշտ էր:

— Արդեօք ռազմական պիտոյքներս բերուեցան, հարցուց Բօրթօս:

— Այս՝ և ո՛չ պատասխանեց Մուսքդօն:

— Բայց վերջապէս չի՞ս կրնար ըսել . . . :

— Եկէ՞ք, պա՛րոն:

Բօրթօս ոտք ելաւ, բարեկամները ողջունեց և Մուսքդօնին ետեւէն գնաց:

Պահ մը ետք, Պազէն երեցաւ դրանը սեմին վրայ:

— Ի՞նչ կ'ուզէք ինձմէ, բարեկա՛մս, ըսաւ Արամիս լեզուի այն անուշութիւնով որ կը նշմարուէր եր վրայ ամէն անգամ որ իր գաղափարները Եկեղեցիի վրայ կեդրոնացած էին:

— Մարդ մը կ'սպառէ ձեզի ձեր տան մէջ, պատասխանեց Պազէն:

— Մա՞րդ մը, ո՞վ է:

— Մուրացկան մը:

— Ողորմութիւն տուէք իրեն, Պազէ՞ն, և ըսէք որ խեղճ մեղաւորի մը համար աղօթք ընէ:

— Այդ մուրացկանը կ'ուզէ անպատճառ ձեզի հետ խօսիլ և կը պնդէ որ չատ գո՞ն պիտի ըլլաք զի՞նքը տեսնելով:

— Ինձի համար մասնաւոր բան մըչըսա՞ւ:

— Էսաւ: «Եթէ Մ. Արամիս վարանի գալ զիս տեսնելու, իմացուցէք իրեն որ Դուռէն կուգամ», ըսաւ:

— Դուռէն, պոռաց Արամիս: Պարոննե՛ր, հազար ներում կը խնդրեմ, բայց անշուշտ այն մարդը իմ սպասած լուրջը կը բերէ:

Եւ, իսկոյն ոտք ելլելով, հեռացաւ արագ արագ: Մնացին Աթօս ու տ'Արդանեան:

— Կարծեմ թէ այս վարպետորդիները իրենց գործը կարգի դրած են, ձեր կարծիքը ինչ է, տ'Արդանեան, ըսաւ Աթօս:

— Գիտեմ թէ Բօրթօս իր գործը կարգի դրած է, ըստ տ'Արդանեան: Գալով Արամիսի, ձիւգը ըսելով, անոր մասին բնաւ հոգ չեմ տանիր: Բայց դուք, սիրելի Աթօս, դուք որ անդիմացին ոսկիները վեհանչնաբար բաշխեցիք: Թէեւ օրինապէս ձեզի կը պատկանէին առոնք, դուք ի՞նչ պիտի ընէք:

— Շատ գո՞ն եմ, տղա՛ս, այն անպիտանը սպաննելուս համար, վասնզի անգլիացի մը սպաննելը բարիք է: Բայց եթէ անոր ոսկիները գրպանս դնէի, խիղճս պիտի տանջուէր:

— Օ՞ն անդր, սիրելի Աթօս, իրա՛ւ անհասկնալի գաղափարներ ունիք:

— Անցնի՞նք, անցնի՞նք: Մ. աը Դուռվիլ որ երէկ ինձի այցելութեան գալու պատիւը ըրաւ, կ'ըսէր թէ դուք կարտինալէն պաշտպանուած սա անգլիացիներուն հետ չատ կը տեսնուիք:

— Այսինքն թէ կը տեսնուիմ անգլուհիի մը հետ, որուն խօսքը ըրած եմ ձեզի:

— Ա'հ, այս՝ այն խարտեալ կինը, որուն ապթիւ խորհուրդներ տուի ձեզ և բնականաբար զգուշացաք անոնց հնատելու:

— Պատճառը ըսի ձեզի:

— Այս՝, կը յուսաք այդ կերպով ձեր ուազմական պիտոյքները հոգալու, կարծեմ տասնկ ըսիք:

— Ամենեւին: Ստուգապէս դժուեմ որ այդ կինը Տիկին Պօնասով էօյի առեւանգութեան գործին մէջ գերուի:

— Այս՝, կը հասկնամ: Կին մը գտնելու համար, ուշից կնոջ մը հետ կը ուրախանէք: Ատիկա ամէնէն երկար, բայց առանձն զրօսալի ձամբան է:

Տ'Արդանեան որոշեց ամէն բան պատմել Աթօսի, բայց կէտ մը արգիլեց զինք: Աթօս պատիւի վերաբերեալ խնդիրներու մէջ չատ խիստ ազնուական մընէր: Եւ Միլէտիի մասին մեր սիրահարին պատրաստած յատակիծին մէջ քանի մը կէտեր կային որոնք մաքւակրօն Աթօսի հաւանութեանը պիտի չարժանանային: Տ'Արդանեան կանխաւ վստահ էր այս մասին: Ուստի նախամեծար սեպեց լուսթիւն պահել, և որովհետեւ Աթօս աշխարհի ամէնէն նուազ հետաքրքիր մարդն էր, տ'Արդանեանի խոստովանութիւնը այդչափով վերջ գտաւ:

Ուստի պիտի թողունք երկու բարեկամները, որոնք իրարու ըսելիք կարեւոր բաներ չունէին և պիտի հետեւինք Արամիսի:

Տեսանք թէ երիտասարդը ի՞նչ արագութիւնով հետեւեցաւ Պազէնին, կամ մանաւանդ անկէ առաջ վազեց երբ իմացաւ որ իրեն հետ խօսիլ ուզող մարդը Դուռէն կուգար: Ուստի Ֆէրու փողոցէն շուտով Վօժիրար փողոց հասաւ:

իր տունէն ներս մտնելով, արդարեւ տեսաւ կարձահասակ, ուշիմ աչքերով, բայց ցնցոտիներ հագած մարդ մը:

- Զիս ուզողը դո՞ւք էք, հարցուց հրացանակիրը:
 — Այսինքն ես Մ. Արամիսը կ'ուզեմ: Դուք
ա՞ն էք:
 — Այո՛: Ինձի յանձնելու բա՞ն մը ունիք:
 — Այո՛, եթէ բանօւած թաշկինակ մը ցոյց տաք
ինձի:
 — Ահաւասիկ, ըսաւ Արամիս ծոցէն բանալի մը
հանելով ու սատափազարդ երենուեայ արկղիկ մը բա-
նալով, ահաւասիկ, տեսէ՛ք:
 — Շա՛տ աղէկ, ըսաւ մուրացկանը: Սպասաւորնիդ
դուրս հանեցէք:

Արևարեւ Պազէն, հետաքրքիր ըլլալով՝ իմանալու
թէ մուրացկանը ի՛նչ կ'ուզէր տիրոջմէն, անոր հետե-
ւելով գրէթէ միւնոյն ատեն ներս մտնր էր: Բայց այս
փութկառութենէն մեծ բան մը չշահեցաւ: Մուրաց-
կանին հրաւէրին վրայ, տէրը նշան ըրաւ իրեն որ հե-
ռանայ և ինք ալ ստիպուեցաւ հնաղանդիլ:

Երբ Պազէն դուրս ելաւ, մուրացկանը արագ ակ-
նարկ մը ձգեց չորս կողմը, որպէսզի սառուգէ թէ զին-
քը տեսնող կամ լսող չկայ: Յետոյ բանալով իր հին
թիկնոցը, որ թոյլ կերպով սեղմուած էր կաշիէ դօսիով
մը, սկսաւ քակել բաճկոնակին վերի մասը, ուրկէ նա-
մակ մը դուրս հանեց:

Արամիս ուրախութեան աղաղակ մը արձակեց
կնիքը տեսնելով, նամակը համբուրեց, և գրեթէ ելու-
կիւղած յարգանքով բացաւ զայն: Նամակին մէջ հետեւ
եալ տողերը կային.

«Բարեկա՛մ, ճակատագիրը կ'ուզէ որ ժամանակ մը
եւս բաժնուած մնանք իրարմէ: Բայց երիտասարդու-
թեան ազւոր օրերը կորսուած չեն անդաբձ: Պատերազ-
մին մէջ ձեր պարտականութիւնը կատարեցէք: Ես ալ
իմ պարտքս պիտի կատարեմ այլուր: Դրաբերիս ձեզի
յանձնածը առէք: Կոիւը մղեցէք իրեւ կատարեալ

ազնուական և մի՛ մոռնաք զիս, որ գորովագին կը
համբուրեմ ձեր սեւ աչքերը: Մնաք բարով, կամ մա-
նաւանդ ի տեսութիւն:

Մուրացկանը միշտ կը քակէր իր բաճկոնակը: Իր
աղասոտ հագուստներուն մէջէն մէկիկ մէկիկ հանեց
հարիւր յիսուն հատ սպանիական երկու ոսկինոց, զորս
շարեց սեղանին վրայ: Յետոյ դուռը բացաւ, ողջունեց
ու մեկնեցաւ: առանց ժամանակ ձգելու աղշահար երի-
տասարդին որ համարձակէր խօսք մը ուղղելու:

Այն ատեն Արամիս նորէն կարդաց նամակը և
նշմարեց որ Յետ Գրութեան մը կար, ուր ըսուած էր.
«Կրնաք ընդունիլ գրաբերը որ սպանիացի կոմս մըն է»:

— Ոսկեղօծ երազնե՛ր, պոռաց Արամիս: Օ՛հ, եր-
ջանիկ կեանք: Այո՛, երիտասարդ ենք, այո՛, երջա-
նիկ օրեր պիտի ունենանք տակաւին: Օ՛հ, ամէն բան,
ամէն բան քո՛ւկդ է, սէրս, արիւնս, կեանքս, ամէն
բան:

Եւ տարփանքով կը համբուրէր նամակը, առանց
նոյն իսկ դիտելու սեղանին վրայ փալիւղ ոսկիները:

Պազէն դուռին զարկաւ, Արամիս այլ ես պատճառ
չունէր զայն հեռու պահելու: Ուստի արտօնեց որ ներս
մտնէ:

Պազէն ապշեցաւ մնաց ոսկիները տեսնելով. և
մոռցաւ թէ եկած էր ծանուցանելու ժամանումը տ'Ար-
դանեանի, որ մուրացկանին ո՛վ ըլլալը գիանալու հե-
տաքրքութեամբ, Աթօսին տունէն ելած ու Արամիսի
տունը եկած էր:

Արդ, որովհետեւ տ'Արդանեան շատ մտերիմ էր
Արամիսի, տեսնելով որ Պազէն իր գալը ծանուցանելու
մոռցած էր, ինք անձամբ գնաց ծանուցանելու:

— Օ՛հ, սիրելի Արամիս, ըսաւ տ'Արդանեան, եթէ
ասոնք եռուէն ձեղի զրկուած սալորներ են, իմ չնոր-

հաւորութիւններս յայտնեցէք այն պարտիզանին, որ
կը քաղէ զանոնք:

— Կը մխալիք սիրելիս, ըսաւ Արամիս միշտ
գաղտնապահ, գրավաճառս է որ միավանդ քերթուածին
գինը ղրկեր է:

— Ա՛հ, իրա՞ւ, հարցուց տ'Արդանեան, լա՛ւ, ձեր
գրավաճառը առատաձեռն է, սիրելի Արամիս: Ահա
այսչափ կրնամ ըսել ձեզի:

— Ի՞նչպէս, պարոն, պոռաց Պաղէն, քերթուած
մը ա՛յսքան սուղ կը ծախուի: Անհաւատալի է: Օ՛հ,
պա՛րոն, ձեր ուզածը կ'ընէք, կրնաք հաւասարի Մ.
աը Վուագիւոխն և Մ. աը Պէնսէրատին: Ես կը սիրեմ
այս բանը, Բանաստեղծ մը գրէթէ արբայ մըն է: Օ՛հ,
Մ. Արամիս, կ'աղաջեմ, բանաստեղծ եղիք ուրեմն:

— Պա՛զէն, բա՛րեկամո, ըսաւ Արամիս, կարծեմ
թէ խօսակցութեան կը խառնուիք:

Պաղէն հասկցաւ որ անվայիլ բան մը ըրաւ, ուսափ
դուրս ելաւ գլխանակ:

— Ա՛հ, ըսաւ տ'Արդանեան ժամանելով, դուք ձեր
արտադրութիւնները ոսկիի գինով կը ծախէք, շատ
երջանիկ էք, բարեկամո, բայց զգուշացէք, պիտի
կորանցնէք սա նամակը, որ ձեր գրավանէն դուրս ելած
է և որ անշուշտ ձեր գրավաճառին կողմէ ղրկուած է:

Արամիս կարմրցաւ, նամակը ներս դրաւ և բաժ-
կոնակը կոճկեց:

— Սիրելի ա՛Արդանեան, ըսաւ, եթէ կը հաճիք,
մեր բարեկամներուն քով երթանք, Եւ քանի որ հա-
րուստ եմ, այսօր եր վերսկսինք միասին ճաշելու,
սպասելով որ հարստանալու կարգը ձեզի գայ:

— Ամենայն սիրով, ըսաւ տ'Արդանեան: Շատենց
է որ պէտք եղածին պէս ճաշ մը ըրած չենք և որով-
հետեւ այս գիշեր քիչ մը վտանգաւոր արշաւանք մը
ընելու մտադիր եմ, կը խոստովանիմ թէ ուրախ պիտի

ըլլամ եթէ դլուխս քիչ մը տաքցնեմ հին Պուրկօնկըի
քանի մը շիշերով:

— Ուզածնիդ հին Պուրկօնելը ըլլայ, ես ալ կը
սիրեմ, ըսաւ Արամիս, որուն աշխարհէ քաշուելու
գաղափարները անհետացած էին ոսկիին տեսքէն:

Եւ գրանը երեք-չորս երկու ոսկինոցներ դնե-
լով, որպէսզի ճաշին ծախքը հոգայ, միւսները դրաւ
սատափազարդ երենոսէ արկղիկին մէջ, ուր արդէն կը
գանուէր իրեն իրը հմայեակ ծառայող հոչակաւոր թաշ-
կինակը:

Երկու քալեկամները ամէնէն առաջ գացին Աթօնի
տունը, որ դուրս չելլելու մասին իր ըրած երդումին
հաւատարիմ մնալով, ստանձնեց ճաշը իր տունը բերել
տալ և որովհետեւ Աթօն ուտելիքի ինդիրէն լաւ կը
հասկնար, տ'Արդանեան և Արամիս յօժարակամ անոր
յանձնեցին կերակուրին հոգը:

Բօրթօնին տունը կ'երթային, երբ Պաք փողոցին
անկիւնը հանդիպեցան Մուսքդօնին, որ ջորի մը և ձի
մը կը քշէր իր առջեկն ողորմելի դէմքով:

Տ'Արդանեան զարմանքի ճիչ մը արձակեց:

— Ա՛հ, իմ դեղնագոյն ձիս, պոսաց: Արամի՛ս,
սա ձիուն նայեցէք անգամ մը:

— Օ՛հ, այս ի՞նչ սոսկալի ձի է, ըսաւ Արամիս:

— Ես այս ձիով էր որ Բարիկ եկայ, սիրելիս,
աւելցուց տ'Արդանեան:

— Ի՞նչպէս, պա՛րոն, այս ձին կը ճանչնա՞ք,
ըսաւ Մուսքդօն:

— Ինքնատիպ գոյն մը ունի, ըսաւ Արամիս, առա-
ջին անգամ է որ այս գոյնով ձի մը կը տեսնիմ:

— Կը հաւատամ ձեր ըսածին, աւելցուց տ'Արդան-
եան, սոսկի երեք սոկիի ծախեցի և անտարակոյս մա-
զին համար է, վասնզի ոսկորը տասնեւոթ ֆրանք ան-

գամ չարթեր։ Բայց այս ձին Մուսքդոնի ձեռքը ի՞նչպէս
անցեր է արդեօք։

— Ա՛հ, ըստ սպասաւորը, խօսքը մի՛ ընէք,
կ'աղաչէմ, մեր դքսուհին ամուսինին մէկ խաղն է
աս։

— Ի՞նչպէս, Մուսքդոն։

— Ա՛յո, մեծ շնորհ մը կը վայելենք հալուտ
կնոջ մը մօտ, այն է դքսուհի . . . Բայց, ներեցէ՛ք
տէրս ինծի յանձնաբարեց գաղտնապահ ըլլալ, Այն կը ը
ստիպած էր մեզ փոքր յիշատակ մը ընդունիլ, այսինքն
սպանիական փառաւոր ձի մը և անտալուզեան ջորի մը,
որոնք սքանչելի տեսք մը ունէին Ամուսինը այս բանը
իմացաւ, մեզի զրկուած այն երկու շքեղ կենդանիները
ճամբան գրաւեց և անոնց տեղ այս ահռելի կենդանի-
ները տուաւ։

— Ուրեմն հիմակ ե՞տ կը դարձնես, ըստ տ'Ար-
դանեան։

— Անտարակոյս, աւելցուց Մուսքդոն։ Յայտնի է
որ այս տեսակ ձիեր չենք կրնար ընդունիլ մեզի խոս-
տացուած կենդանիներուն տեղ։

— Հարկաւ չէք կրնար ընդունիլ։ Բայց կը փա-
փաքէի իմ գեղնագոյն ձիիս վրայ տեսնել Բօրթօսը,
որով կրնայի գաղափար մը ունենալ թէ Բարիդ եկած
ատենս ի՞նչ կերպարանք ունէի։ Բայց, Մո՛ւսքդոն,
քեզի արգելք չըլլանք, դնա տիրոջդ յանձնաբարու-
թիւնը կատարէ։ Տէրդ առօւնն է։

— Այո՛, պարո՞ն, ըստ Մուսքդոն, բայց հաւա-
տացէք, շատ նեղացած է։

Եւ ճամբան շարունակեց գէսլ ի կրան տ'Օկիւսթէնի
քարափը, մինչ երկու բարեկամները դժբախտ Բօրթօսի
տունը կ'երթային։ Սակայն Բօրթօս տեսեր էր անոնց
բակէն անցնիլը և միտք չունէր դուռը բանալու։ Հե-
տեապէս երկու բարեկամները պարապ տեղը դուռը

բանալու։ Հետեւապէս երկու բարեկամները պարապ
տեղը դուռը զարկին։

Սակայն Մուսքդոն իր ճամբան կը շարունակէր։
Բօն Նէօֆէն անցնելով Ուրս փողացը հասաւ, միշտ իր
առջեւն քշելով երկու կենդանիները։ Յետոյ, իր տի-
րոջ յանձնաբարութեան համեմատ, ձին և ջորին փո-
խանորդին դրան ուռնակին կապեց, առանց անոնց
ապագայ վիճակը հոգ ընելու։ Յետոյ դարձաւ Բօրթօ-
սի քով և յայտնեց թէ իր յանձնաբարութիւնը կատա-
րած էր։

Քիչ ետքը, երկու դժբախտ կենդանիները, որոնք
առառւրնէ ի վեր բան մը չէին կերած, այնքան աղ-
մուկ հանեցին դրան ուռնակը վերցնելով և իջեցնելով
որ փոխանորդը իր պատիկ դրագիրին ապապեց եր-
թալ նայիլ թէ ձին և ջորին որո՞ւն կը պատկանի։

Տիկին Բօրթօսը ճանչցաւ իր ընծայ ըրած կենդա-
նիները և բան մը չհասկցաւ այս վիրադարձէն։ Բայց
քիչ ետքը Բօրթօսի այցելութիւնը ամէն բան պարզեց։
Հրացանակիրէն աչքերուն մէջ վառող բարկութիւնը, —
թէւ ինքզինքը զապելու կը ջանար, — իր զգայուն սի-
րուհին սիրտը թունդ հանեց։ Արդարև Մուսքդոն
յայտներ էր իր տիրոջ որ ճամբան տ'Արդանեանի և
Արամիսի հանդիպեր էր և թէ տ'Արդանեան ճանչցեր էր
իր Պէտրնեան ձին, քանի որ անոր վրայ նստած մտեր
էր Բարիդ և երեք ոսկի ծախներ էր։

Բօրթօս Սէն Մակլուար վանքին մէջ տեսակցելու
համար փոխանորդուհին հետ ժամագիր ըլլալէն ետք
դուրս ելաւ։ Փոխանորդը տեսնելով որ Բօրթօս կը մհկ-
նի, ճաշի հրաւիրեց զայն և հրացանակիրը վեհ կեր-
պարանքով մը մերժեց այս հրաւէլը։

Տիկին Բօրթօնար Սէն Մակլուարի վանքը գնաց
դողդալով, վամնզի կը գուշակէր լսելիք յանդիմա-
նութիւնները, բայց Բօրթօսի խրոխտ ձեւերէն հրա-
պարուած էր։

Արժանապատռութիւնը վիրաւորուած մարդու մը
բերնէն ի՞նչ լուսանք և կշտամբանք որ կարելի է թա-
փել կող մը գլխին, Բօրթօս թափեց փոխանորդու-
հին գլխին :

— Ա.փո՛ս, ըսաւ ան, ձեռքէս եկածը ըրի: Մեր
յաճախորդներէն մէկը ձիավաճառ է, մեզի պարտք
ունէր և վճարել չէր ուզեր: Ես ալ այն ջորին և ձին
առի պարտքի փոխարէն Խոստացած էր երկու փառաւոր
կենդանիներ զրկել:

— Լա՛ւ, Տիկին, ըսաւ Բօրթօս, եթէ հինգ ոսկի-
էն աւելի պարք ունէր ձեզի, ձեր ձիավաճառը գող
մըն է:

— Արդիլուած չէ աժան գինով բան ծախու առնել,
Պ. Բօ՛րթօս, ըսաւ փոխանորդուհին ինքզինք արդարա-
ցնել ուզելով:

— Ո՛չ, Տիկին, բայց անոնք որ աժան բան կը
փնտուն, պարտաւոր են ուրիշներուն ներողամիտ ըլլալ
որպէսզի անոնք աւելի առատաձնեն, բարեկամներ
փնտուն:

Եւ Բօրթօս քայլ մը առաւ մեկնելու համար:

— Պ. Բօ՛րթօս, Պ. Բօ՛րթօս, պառացփոխանորդու-
հին, պիտեմ որ անիրաւ եմ, պէտք չէր ոակարիէի,
քանի որ ձեզի պէս ասպետի մը համար ձի մը պիտի
գնէի:

Բօրթօս, առանց պատասխան տալու, քայլ մը
ևս առաւ հեռանալու համար:

Փոխանորդուհին կարծեց թէ Բօրթօս շողշողուն
ամպի մը մէջ կը գտնուի և չորս կողմը դքսուեիներ՝
մարդկուեիներ կեցած, անոր ոտքին առջև կը նետեն
ոսկիով լոցուն ծրաբներ:

— Կեցի՛ք, Մ. Բօրթօս, յանուն Աստուծոյ, կե-
ցի՛ք և խօսինք, ըսաւ:

— Զեզի հետ խօսիլը փորձանք բերել է գլուխիս,
ըսաւ Բօրթօս:

— Բայց ըսէք, ի՞նչ կը պահանջէք:
— Ոչի՞նչ, վասնզի նոյն բանը ըսել է եթէ ձեզմէ
բան մը պահանջէի:

Փոխանորդուհին Բօրթօսին թևէն կախուեցաւ և
արտմութեամբ պոռաց:

— Մ. Բօ՛րթօս, իրաւ որ ես այս գործէն բնաւ
աեղեկութիւն չունիմ, եւ ի՞նչ գիտնամ թէ ձի մը
ի՞նչ է, թամբը ի՞նչ է:

— Պէտք էիք ինծի գիմել, ես որ այսպիսի բա-
ներէ կը հասկնամ, Տիկին, բայց ձեր միաքը խնայու-
թիւն ընել էր և հետեւապէս տոկոսով ստակ փոխ տալ:

— Սխալութիւն մը եղած է, Պ. Բօ՛րթօս, պատ-
ւոյս վրայ կ'ըսեմ որ պիտի ուզզեմ զայն:

— Ի՞նչպէս պիտի ուզզէք, հարցուց հրացանակիրը:

— Մտիկ ըրէք: Այս իրիկուն Մ. Քօքընար Շօլմ
գուքսին տունը պիտի երթայ անոր հրաւէրին վրայ:
Խորհրդակցութեան մը համար է անշուշտ, որ առ-
նուազն երկու ժամ պիտի տեէ: Եկէ՛ք, առանձին
պիտի ըլլանք և մեր հաշիւները կը կարգադրենք:

— Հիմա շիտակ խօսեցաք, սիրելիս: Կարծեմ
պիտի կրնանք իրարու խօսք հասկնալ:

— Կը ներէ՞ք ինծի:

— Տեսնենք, ըսաւ Բօրթօս վեհափառօքէն:

Եւ իրարմէ բաժնուեցան ըսելով թէ նոյն իրիկունը
պիտի տեսնուին:

— Թշուա՛ռական, ըսաւ Բօրթօս ինքնիրեն, կ'ե-
րեւայ որ վերջապէս Տիար Քօքընարի սնտուկին մօ-
տենալու ժամանակը եկաւ:

20,000 ՀԵՌԱԳԻՐ

Ա. Ռ.

ԱԼԵՔՍ. ՏԻՒՄԱ ՀՕՐ

Անզուգական և Աշխարհահռչակ Վիպաղիր Ալէք-
սանար Տիւմա՝ հազիւ աւարտելու վրայ էր «Երեք Հրա-
ցանակիրներոը, ամբողջ Թրանսան գղրդեցաւ. 20,000է
աւ ելի շնորհաւորական և միանգամայն քաջալերական
հեռագիրներ ստացաւ, որպէսզի չմնացնէ հերոսները :

Աղեքսանդր Տիւմա Հայր, Ժողովրդական այս անօ-
րինակ խանդավառութենէն քաջալերուած սկսաւ հրա-
տարակել իւր ՔՍԱՆ ՏԱՐԻ ԵՏՔԸ, որուն որչափ պատ-
մական գլուխ գործոց մը ըլլալը, կարծենք Ընթերցող-
ները կրցին հասկնալ :

Ահա այս վէպն է որ յառաջիկայ շաբթու կ'սկսինք
հրատարակել 16 էջ 10 փր.ի: Փնտոեցէք ամէն Լրա-
գրավաճառներէ :



Արդարեւ,
թալու համար է
ելած ըլլալով,
զոցը : Լաւատեղ թէՄոհէրկ, ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ՆՈՐ ԶԵՐՆԱՐԿԸ
Պօնասիէ արքա
կը կերակրուէր
քով :

ՔՍԱՆ ՏԱՐԻ ԵՏՔԸ,

”ԵՐԵՖ ՀՐԱՑԱՆԱԿԻՐՆԵՐ, ՈՒ
ԱՆՕՐԻՆԱԿ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

Կիւրեմպերկ Մատենաշարին Գրաշար-Հրատարա-
կիչները քաջայերուելով “Երեֆ Հրացանակիրներ, ու
գտած անօրինակ ընդունելո թենէն, յառաջիկայ շաբ-
թուրնէ պիտի սկսին հրատարակել Անզուգական Վիպագիր


ԱԼԵՔՍԱՆՏՐ ՏԻՒՄԱ ՀՕՐ

ՔՍԱՆ ՏԱՐԻ ԵՏՔԸ,,

որ անմիջական շարունակութիւնն է Երեֆ Հրացանա-
կիրներուն : Քսան Տարի Ետքին մէջ պիտի երեւան
դարձեալ Չորս Հրացանակիրները, Ռիշլիէօյի յաջորդ
Մազարէն Կարտինալը, Պարսատիկներու կոփւները, որմէ
ծնունդ առաւ Ֆրանսական Մեծ Յեղափոխութիւնը,
ինչպէս նաև անգլիական յեղափոխութիւնը Մեծն Գրօմ-
ուէլի առաջնորդութեամբ, որ յանգեցաւ նոյն ժամանակի
ԱնգլիոՄիապետին գլխատուութեան, ևն, ևն, ևն :

Ըսթերցողները, աւելի հետաքրքրութեամբ պիտի
հետեւին «Քսան Տարի Ետքը»ին, ուր տ'Արդանեան,
Աթոս, Բօրթօս և Արամիս մեծ դեր պիտի ունենան
վերը յիշուած պատմակտն խոշոր գէպքերուն մէջ :

100 ~



ՀՀ Ազգային գրադարան



NL0315352

5617